

Լ. ՎԱՅՍԵՆԲԵՐԳ

ՌՈՒԵՐՏ ՖՈՒԼՏՈՆ

ՊԵՏՐՍ

087.1:5

4-21

23 JUN 2009



ՀԱՐՈՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

087.1


Լ. ՎԱՅՍԵՆԲԵՐԳ

Կ-21

սյ.

ՌՈՒԲԵՐՏ ՖՈՒԼՏՈՆ

Նկարներ Գ. Բ. ԱԼՅԱԿԻՆՍԿՈՒ



ՌՈՒԲԵՐՏ ՖՈՒԼՏՈՆ

1. ԲՈՒԸ ՄՏՆՈՒՄ Ե ՄԻԱՏՐ ԳՐԵՔԲԼԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

Աշնանային մի անձրևոտ առավոտ միսսիս Ֆուլտոնը սովորականից ավելի խնամքով լվաց Բոբի յերեսն ու ձեռքերը: Բարկ սապոնը յեղինձի պես մոմացնում էր նրա աչքերը: Կոշտ յերեսաբբիչը քերում էր Բոբի կարմրած քիթն ու ցցված ականջները: Մետաղյա սանրը անողորմաբար մազի թաղկուճներ էր պոկում նրա գլխից:

Այնուհետև միսսիս Ֆուլտոնը մաքրեց Բոբի փոշոտած ու կարկատած կուրտկան և շալվարը և դեռ շատ ձանձրալի գործողություններ կատարեց նրա գլխին, մինչև վոր ինչպես հարկն է մատղաշ ջհնարմենի հագուստը, գլուխը, ձեռքն ու վուտքը վերջնականապես ու լիովին կարգի բերեց:

Դրանից հետո Բոբին նստեցրեց պատուհանի մոտ դրած աթոռակի վրա, վոր մի քիչ հանգստանա: Մախյա Բոբի հանգրտանալը յերկար չտևեց: Հագնելով իր կիրակնորոյա մուգ զգեստը, միսսիս Ֆուլտոնը Բոբի ձեռքից բռնած դուրս յեկավ տանից և ուղղվեց դեպի միստր Գրեբբլի տնակը:

Անձրևի պղտոր ջրերը հոսում էին արագընթաց Լիստոլ-Բրիտեյն ավանի նեղլիկ փողոցներով և միսսիս Ֆուլտոնը մեծ ճիգեր էր անում, վոր չսայթաքի ու վայր չընկնի սալաքարերի վրայով գնալիս: Յերբ դեռ նոր էին ճանապարհ ընկել, միսսիս Ֆուլտոնը Բոբի ձեռքից բռնած էր գնում, և Բոբը կապած և գոռով տարվող կատվի պես չուզելով ու սայթաքելով մի կերպ գնում էր մոր հետևից: Բայց շուտով մայրն ստիպված յեղավ Բոբին ազատ թողնել:

Սխալ կլինեք կարծել, թե Բոբը շատ էր ցավում, վոր դըրկվել է միսսիս Ֆուլտոնի ուղևորող ձեռքից: Նրան վոչ մի հոգս չէին պատճառում վոչ փողոցի յերկարությամբ սրընթաց հոսող անձրևաջրերը, վոչ սառը քամին, վոչ ուժգին կերպով նրա յերեսին խփող անձրևի կաթիլները և վոչ էլ սառցանման ջրի շիթերը, վորոնք նրա ոձիքի տակից անցնում էին ու թրջում նրա մարմինը: Նա ձարպիկ ու արագ կերպով թոչում էր մի քարից



6120
39

մյուսի վրա, հմտությամբ գտնելով վոտ դնելու տեղերը և նույնիսկ կարողանում եր մորն ոգնության հասնել, յերբ նա նեղն եր ընկնում: Նա ժամանակ եր գտնում մինչև անգամ դիտելու թե ինչպես են վոտաբորիկ յերեխաները թղթե նավեր գցում անձրևաշրի արագահոս առվակների մեջ:

Փողոցների խաչաձևումներից մեկում Բորը տեսավ իր մոտ ընկերներին՝ Ջեկին ու Չարլիին, վորոնք հենց նոր ջուրն եյին գցել մի մեծ փայտե արկղ: Արկղին ամրացրած եր դեք ցցած մի յերկար փայտ, վորի վրա ձոձում եր կապույտ գույնի մի փրչոտ լաթի կտոր: Բորը հասկացավ, վոր այդ անձոռնի արկղը իբր թե ալիքների մեջ լողացող նավ ե ներկայացնում, և շատ անբավական մնաց: Ախ, յեթե նա գերի չլիներ, այն ժամանակ նա ցույց կտար նրանց, թե նավն ինչպես պետք ե շինել: Ուր են նրա կայմերը, ուր են նավասենյակները, ուր են թիերը: Դա ինչ-վոր տնային պահարան ե և վոչ թե նավ: Այո, թող Բորն ազատ լիներ, նա ցույց կտար, թե ինչպես պետք ե նավ շինել:

Բայց միսսիս Ֆուլտոնի սիրտը բոլորովին քաբացել եր այդ անձրևոտ առավոտը և Բորը վոչ մի հույս չուներ, թե ինքն ել կկարողանա մասնակցել իր ընկերների խաղին: Միսսիս Ֆուլտոնի ուշքն ու միտքը մի բանի վրա յեր միայն, թե ինչպես անի, վոր շուտով հասնի Գրեբբլ ուսուցչի տունը, խնդրի, աղաչի նրան, վոր իր անսահման գիտությունից նա մի փոքրիկ բաժին ել իր Բորի համար հանի:

Յեվ անա նրանք վերջապես հասան պատվաբժան միստր Գրեբբլի տնակին: Բաց պատուհանից նրանց ականջին եր հասնում յերեխաների ուրախ աղմուկը, վոր մեկ-մեկ ընդհատվում եր ուսուցչի ցասկոտ ձայնը լսվելուց հետո: Միսսիս Ֆուլտոնը գուռը ծեծեց և Բորի ձեռքից պինդ բռնած ներս մտավ:

Սենյակի մեջտեղում դրված եր մի յերկար սեղան և նրա յերկու կողմը դրված եյին նույնքան յերկար նստարաններ, վորոնց վրա նստած եյին միստր Գրեբբլի աշակերտները: Սեղանի ծայրում մի շատ բարձր աթոռի վրա բազմած եր ինքը, միստր Գրեբբլը, մի յերկար քանոն ձեռքին: Բորին թվաց, թե նա նման ե կառապանի, վորի նստելու տեղը շատ բարձր ե լինում: Միստր Գրեբբլի գզգզված շիկահար մազերը և շեկ մորուքը պատում եյին նրա խորշոմած դեմքի չորս բոլորը, վոր նման եր խորոված խընձորի: Նրա կուրծքը խնամքով ծածկված եր կարմրագույն տաք

ժիլետով, վորի վրա կային անհամար հետքեր ամեն տեսակ ծխախոտի՝ քիթը քաշելու, ծխելու և ծամելու:

Նրա մատները, վոր պինդ սեղմած պահում եյին քանոնը, նիհար եյին, բարակ ու դեղնագույն: Բորն ուշադրությամբ դնեց Պեդագոգուսին*), — այդպես եյին անվանում աշակերտներն իրենց ուսուցչին, — և վճռեց, վոր Պեդագոգուսը շատ ել գեղեցիկ մարդ չե:

Հյուրերին տեսնելուն պես Գրեբբլը վար իջավ իր գահից ու բղավեց՝ «հանգարտ» և քանոնը այնպիսի ուժով շրխկացրեց սեղանին, վոր կարծես հրացան արձակեցին: Աշակերտները վայրկենապես ձեռքերը ծածկեցին սեղանի տակ և տեղնուտեղը մնացին սսկված: Կուրծքը դուրս ցցած և շիկահեր գլուխը վեր բարձրացրած՝ միստր Գրեբբլը հանգիսավոր կերպով մոտեցավ միսսիս Ֆուլտոնին, իսկ Բորի վրա չնայեց անգամ:

Միսսիս Ֆուլտոնը քաշվելով ու ամաչելով բացատրում եր միստր Գրեբբլին, թե Բորը վորք ե և սրանից միջանի տարի առաջ մեռած ագարակատեր Ֆուլտոնի վորդին ե: Արտասովալից աչքերով պատմում եր նա միստր Գրեբբլին, վոր ամուսնի մահից հետո ինքը մնացել ե առանց ապրուստի և ստիպված ե իր ծանր աշխատանքով պահել իր վորբացած յերեխաներին:

— Բորը խելացի յերեխա յե, ասաց նա, վերջացնելով իր խոսքը, — բայց նայող չունի. յեթե դուք այնքան բարի լինեյիք, վոր ձեր ծով գիտությունից թեկուզ մի չնչին բաժին հանեյիք իմ վորբիս համար...

Բորը մի ականջով լսում եր մոր խոսքերը, իսկ մյուս ականջով՝ նորից իրենց չարությունն սկսած աշակերտների սրախոտություններն ու ծաղրաբանությունը: Հանկարծ, ի մեծ զփրմանս Բորի, Պեդագոգուսը գրչահատի պես յերկու տակ ծալեց իր յերկար մարմինը, ձեռքը մեկնեց դեպի նրա ձախ թուշը և իր ցուցամատով այնքան ճմլեց, մինչև վոր թուշը բոլորովին կարմրեց: Ամենագարմանալին այն եր, վոր Բորը վոչ մի ցավ չեր զգում, գրանից յեղրակացրեց, վոր Պեդագոգուսը այդ տարորինակ յեղանակով շոյում ու փաղաքշում ե իրեն: Յերեվում ե, մտածում եր նա, վոր Պեդագոգուսը յեթե շատ ել գեղեցիկ մարդ չե, բայց վատ մարդ ել չե:

Յեվ իսկապես, միստր Գրեբբլը ամենևին վատ մարդ չե: Նա

*) Պեդագոգ նշանակում ե մանկավարժ, սրանից ծաղրական «Պեդագոգուս»: Մ.Ք.:

շատ կարեկցեց ու խղճաց միսսիս Թուլտոնին, վոր չնայելով իր դառն աղքատութեանը, անպատճառ ուզում եր կրթութիւն տալ իր յերեխաներին, այդ պատճառով Բորի կրթութեան համար նա շատ շնչին վարձ նշանակեց: Միսսիս Թուլտոնը անչափ շնորհակալ յեղով միստր Գրեքլից, հետո աչքերի արտասուքը սրբելով պատվիրեց Բորին խելոք կենալ, համբուրեց նրան ու հեռացավ:

Յեւ անա դուռը ծածկվեց միսսիս Թուլտոնի հետեւից և առաջին անգամ իր կյանքում Բորն դգաց, վոր մնացել է մենակ ու իրեն կամքին թողած: Ինչպես ծտերի յերամը վրա յե պրծնում շաղ տված հատիկների վրա, այնպես ել աշակերտների մի խումբ շրջապատեց խեղճ Բորին: Միքանի վայրկյան Բորը մնաց անշարժ տեղումը կանգնած և աչքերը գետին խոնարհած, կարծես խոր մտածմունքի մեջ եր ընկել: Մեկ ել համարձակ գլուխը բարձրացրեց և բարեկամաբար ժպտալով՝ անցավ աշակերտների շարքով և սեղմեց բոլորի ձեռքը: Իր այդ վարմունքով Բորը միանգամից գրավեց իր նոր ընկերների սիրտը: Նույնիսկ Տոմ Հենտլին, վոր մի լողլող ու կովարար տղա յեր, փոխանակ նորեկի գլխից մազերի մի փունջ պոկելու, ինչպես նա սովորաբար անում եր, ինքն ել ջերմ կերպով սեղմեց Բորի ձեռքը, իսկ մյուս ձեռքով զիջողաբար խփեց նրա ուսին: Տեսնելով, վոր այդ ժամանակ Պեդագոգուսն զբաղված է քիթը քթախոտ լցնելով, աշակերտները խիտ շարքերով շրջապատեցին Բորին և հազար ու մի հարցեր ելին տալիս նրան:

— Բանի՞ տարեկան է նորեկը և գնդակ խաղալ գիտի՞ թե վոչ, — ճշում եր փոքրիկ Տոնի Այլինդը:

— Նորեկը քույր ու յեղբայր ունի՞ թե վոչ և քանի տարեկան են նրանք, — անպատճառ ուզում եր իմանալ դարբնի տղա Տոնի Ջեմսը:

— Ինչո՞ւ յե նորեկի քիթը պեպենոտ, — ձեռք չեր քաշում Բորից և ուզում եր անպաճառ իմանալ հարցասեր Գրեքլին:

Բորը չեր իմանում իրեն ուղղած հարցերից վորին պատասխանի: Ամենից շատ նա դժվարացավ պատասխանել պեպենների մտին արած հարցումին, վորովհետև դրա մասին նա յերբեք չեր մտածեր: Նրան դժվար կացութիւնից հանեց Պեդագոգուսը, վորը գիտնականի տեսքով հաղորդեց, թե պեպենները, ինչպես և խալերը, յերկնային շնորհքի նշան են, վորոնք ի վերուստ իջնում են մարդկանց վրա:

Բորը բոլորովին այլ կարծիք ուներ պեպենների ծագման

մասին: Նրա կարծիքով պեպենները առաջ են գալիս արեւից, այդ պատճառով ձմեռը պեպեններ շատ քիչ են լինում: Սակայն Պեդագոգուսն այնպես համոզված ձևով բացատրեց պեպենների առաջ գալու պատճառը, վոր Բորը սիրտ չարեց նրան հակաճառելու:



Այնուհետև Պեդագոգուսը նորից բազմեց իր գահի վրա և քանոնը վորոտաճայն շրխկացրեց սեղանին: Իսկ փորձից սովորած աշակերտներն անմիջապես ձեռքները պահեցին սեղանի տակ: Բորի գալու պատճառով ընդհատված դասը շարունակվեց:

2. ՏՈՄԻ ԳԱՐԲԵՆՈՑԸ ՅԵՎ ՄԻՍՏՐ ԳՐԵԲԲԼԻ ՆԿԱՐԸ

Ինչի մասին վոր խոսելիս լիներ միսոր Դրեբբլը՝ վոսկեվառ արեգակի, մեր սև հողագանդի, թե անհուն ու կապուտակ յերկնքի մասին, նա պատմում էր նույնքան վստահութամբ, վորքան և պեպեններին մասին: Նա ասում էր, թե լույսը ստեղծվել է աշխարհի ստեղծագործության առաջին որը, իսկ արեգակը և յերկնքի մյուս լուսատուները՝ չորրորդ որը: Յե՛վ Բորը չէր հասկանում, թե վճրատեղից եր գալիս լույսն առաջին յերեք որը, քանի վոր լուսատուները ստեղծված են յեղել չորրորդ որը:

Պեղագործուր խորագետ համոզված էր, վոր ինքը մեծ գիտնական է: Չէր լինում մի հարց, վորի պատասխանը նա անմիջապես չգտներ, թեև այդ պատասխանները շատ էլ դյուրեմբունելի չէին լինում: Նրա բացատրած բնության բոլոր յերկույթների մեջ անպատճառ պետք է մասնակցած լինեյին աստուծու ձեռքը, հրեշտակներն ու սատանաները: Աշակերտների մեծ մասը հավատում էր Պեղագործուրի պատմություններին, միայն մի քանի ուշիմ տղաներ, վորոնց թվում և Բորը, ծածուկ ծիծաղում էին նրա վրա:

Յերբեմն, յերբ ձանձրանում էին Պեղագործուրին լսելուց, նրանք գնում էին զբոսնելու մոտակա անտառը կամ կանաչազարդ լեռները: Զով անտառում կանաչ մամուռի վրա պառկած ախանջ էին դնում նրանք թռչունների յերգին:

Յերբեմն նրանք իջնում էին զարգանդ ազդող ձորի խորքը, վորտեղ կային ոճեր և թունավոր ճանճեր: Գետի ափին վարտիքները ծնկներից վեր քաշած ժողովում էին կապտագույն, դարչնագույն ու խայտարեկ խեցիներ: Յերբեմն էլ իրենց շինած կորթերով ձուկ էին բռնում, խարույկի վրա խորովում էին և ուտում: Այդ բոլորն անհամեմատ ավելի զվարճալի յեր, քան Պեղագործուրի դատարկաբանությունները լսելը:

Շատ հետաքրքիր էին այդ զբոսանքները, բայց վոչ մի բան Բորին այնքան չէր ուրախացնում, վորքան դարբին Տոմին արած այցելությունները: Դարբին Տոմը գյուղում հայտնի մեքենապետի և իր գործը լավ իմացող մարդու համբավ ունեւ: Բորին շատ գուր էր գալիս, յերբ տեսնում էր, թե ինչպես ջարդված սայլը Տոմի ճարպիկ ձեռքերի շնորհիվ մի քանի ժամից հետո բոլորովին նորոգված և հեցերը պսպղալին դուրս էին բերում դարբնոցից: Նա կարող էր ժամերով դիտել, թե ինչպես է Տոմը յերկաթի պայ-

տերը մեխում ձիերի սմբակներին, ինչպես պայտած ձիերը դուրս վազելիս ուրախ խրխնջում էին: Առանձնապես նրան դուր էր գալիս մի շիկակարմիր ձի, վորի անունը դրել էին Ռեդդի: Պայտելուց առաջ Տոմը փաղաքջանքով խփում էր նրա բաշին: Այն ժամանակ Ռեդդին վտար ծալում էր և հնազանգությամբ դնում Տոմի մոխրագույն գոգնոցի վրա: Մի քանի րոպե անցած Ռեդդին, վորի չորս վոտներն էլ արդեն պայտած էին լինում, սլանում էր կանաչ դաշտով: Նրա շիկակարմիր բաշը քամուց բորբոքվող բոցի նման փողփողում էր հեռվում:

Յերբ դարբին Տոմը լավ տրամադրության մեջ էր լինում, թույլ էր տալիս Բորին, վոր ծանր մուրճով խփի գնդապին, փչիք քուրայի փուքսը և շիկացնի յերկաթի կտորտանքը:

Դարբին Տոմն ամենեին նման չէր Պեղագործուրին: Նա միշտ տալիս էր պարզ ու հասարակ պատասխաններ Բորի բոլոր հարցերին՝ թե ինչ՞ու յեն յերկաթը տաքացնում մինչև շիկանալը, ինչ՞ու յեն մի մուրճով խփում մյուսին, ինչ՞ու կովերին չեն պայտում:

Արտաքինով էլ դարբին Տոմն ամենեին նման չէր Պեղագործուրին: Տոմը շատ լայնաթիկունք մարդ էր, ձեռքերը մկանոտ էին, յերեսը թեև մրից կեղտոտված էր, բայց առողջ և կենսուրախ արտահայտություն ունեւ: Հաճելի յեր նայել դարբին Տոմի գորեղ կազմվածքին:

Շատ լավ է ամառն ու դարնանը զբոսնելու գնալ լեռներն ու անտառը, իջնել ձորն ու մոտենալ գետին: Բայց ամառնը հետևում է աշունը, աշնանը՝ ցուրտ ու ձյունոտ ձմեռը, յերբ այլևս զբավիչ չեն լինում վոչ անտառը, վոչ գետը, վոչ ձորը, վոչ էլ նույնիսկ աննման Տոմի դարբնոցը: Շուտ է մթնում և մարդ ստիպված է լինում յերեկոները կարճել տանը, ոջախի մոտ: Բորն էլ կարգում ու սովորում էր Պեղագործուրի տված դասը, հետո մոտենում էր պատուհանին տեսնելու՝ միսսիս Փուլտոնը աշխատանքից տուն չի՞ վերադառնում արդյոք: Վոչ, չի գալիս: Վերջերս նա ավելի և ավելի ուշ է վերադառնում տուն: Այն ժամանակ Բորը ձանձրույթից սկսում էր սենյակի մի անկյունում վարպետություն անել, շինել արկղիկ, չաչանակ կամ սայլակ: Այդպիսի գործերում Բորը մեծ վարպետ էր: Յերբեմն էլ նա տախտակը կտրտելով շինում էր շուն, ձի, մարգ: Հեշտ կտրտելու համար նա նկարում էր տախտակի վրա կտրտելիք առարկայի պատկերը: Այդ նկարները հաճախ

նա թողնում եր առանց կտրելու և հետևյալ առավոտը ցույց եր տալիս ընկերներին:

Շուտով Բորը մեծ նկարչի հուշակ ստացավ ուսումնարանում: Կավիճով կամ ածուխով նրա նկարած մարդու և գազանների նկարները կարելի չեր տեսնել ամեն տեղ՝ սեղանների, պատերի, դռների վրա: Շատ ջանք գործ դրին միասին Ֆուլտոնն ու Պեդագոգուսը, վոր կարողանան մի քիչ չափավորել նրա նկարելու յեռանդը: Բորը հնազանդվեց, բայց միքանի որ անցած զարմացքեց իր ընկերներին մի նոր անակնկալով: Յերը Պեդագոգուսը հարևան սենյակում պառկել եր մի ժամ հանգստանալու, մեկ ել նրա աթոռի վերևը տեսան նկարված հենց իրեն՝ Պեդագոգուսի պատկերը: Նրա յերկար ու նիւար մարմինը և վոսկրացած մատները արտասովոր ճշտությամբ եր նկարել Բորը: Խորոված խնձորի պես նրա թորշոմած յերեսի վրա աչքերը նայում էին ինչպես կենդանի մարդու աչքեր: Նրա նուրբ բերանը կարծես անա, վորտեղ վոր ե, պիտի բացվի և հոսեն այնտեղեց նրա «աստվածային» զրախոսությունները: Քիթը թուզուսի կտուցի պես ցցված եր նրա յերեսին: Նրա բարձր ճակատի վրա թափթըփած շիկակարմիր մազերը զարմանալի նման էին դարձնում պատկերը կենդանի Պեդագոգուսին:

Աշակերտներն իրար վրա էյին թափվել պատկերի առաջ, միմյանց ուսերի վրա էյին թուշում, վորպեսզի ավելի մոտիկեց տեսնեն ու շոշափեն իրենց անեղ ուսուցչի իսկական մազերը: Չե, կասկած չկար, վոր այդ մազերը հենց իր՝ Պեդագոգուսի մազերն են:

Քիչ հեռու կանգնած եր Բորը և ժպտալով նայում եր իր հուզված ընկերներին: Յերը վերջապես ավարտվեց այդ զարմանահրաշ պատկերի դիտումը, աշակերտները շրջապատեցին Բորին, հայտնում էյին նրան իրենց հիացմունքը և խնդրում, վոր հայտնի իրենց Պեդագոգուսի շիկակարմիր մազերի զարմանալի նմանության գաղտնիքը:

Այն ժամանակ Բորը առանց մի խոսք արտասանելու խորհրդալոր կերպով մտոր մեկնեց դեպի հարևան սենյակի դուռը, վորտեղ նիրհում եր իրենց ուսուցիչը... Աշակերտները սարսափեց քարացածի պես մնացին տեղներում կանգնած: Մտածում էյին՝ մի գուցե Բորը թուշլ ե ավել իրեն խուզել Պեդագոգուսի մազերն այն ժամանակ, յերբ նա իր սենյակում անմեղ մանկան պես քնած ե յեղել:

Ամերիկայի հնդիկների պես, վորոնք պրերիայում դարանաժուտ մոտենում են իրենց թշնամուն, նրանք կիսաբաց արին գլուռ այն սենյակի, վորտեղ քնած եր մազերը խուզված իրենց ուսուցիչը... Մահճակալի վրա պառկած, նիւար վոտները մեկնած և ձեռքերը կարմիր ժրխտի վրա խաչած՝ խոփացնելով հանգիստ քնած եր Պեդագոգուսը: Նրա հրաշալի շիկակարմիր մազերն անփաս իրենց տեղումն էյին:

Աշակերտները դարձյալ վրա տվին Բորին և նրան հարց ու փորձ էյին անում: Բայց Բորը մնաց անաստան: Վոչ խնդրեք, վոչ հորդորանքը և վոչ նուշնիսկ սպառնալիքն անկարող յեղան ստիպելու նրան, վոր հայտնի իրենց շիկակարմիր մազերի գաղտնիքը:

Յերը աշակերտները տեսան, վոր ինչ ել անեն՝ Բորի համառությունն անկարող կլինեն կոտրել, կամաց-կամաց հանգստացան:

Յեվ միայն մի տարի անցնելուց հետո Բորը հայտնեց իր գաղտնիքը իր մտերիմ ընկերոջը՝ դարբին Տոմի տղա Ջեմսին, յերբ նրա հետ միասին պառկած էյին խոտի վրա: Բանն այսպես ե յեղել: Միտոր Գրեբբլի յերեսը նա նկարել ե նախ ածուխով ու կավիճով: Բայց միակ ուշադրության արժանի և աչքի ընկնող բանը միտոր Գրեբբլի ամբողջ անձնավորության մեջ նրա բոցավառ մազերն էյին, իսկ ածուխն ու կավիճը ինչ չափով ել վոր միմյանց հետ խառնված լինեն, վոչ մի դեպքում շիկակարմիր գուշն չի ստացվի: Բորը յերկար և զուր ե վորոնել համապատասխան ներկ: Հանկարծ նրա մեջ միտք ե ծագել փոխարինել ներկը Ռեդդիի բաշից պոկած իսկական շիկակարմիր մազերով: Բորը նախքան այդ գործը կատարելը յերկար ժամանակ տատանվել և մտատանջվել ե: Յեվ անա մի յերեկո նա վերցնում ե միասին Ֆուլտոնի մկրատը և գաղտագողի մտնում ե հարևանի ախոռ: Վոչ մի տեղից ձայն ծպտուն չեր լսվում: Ռեդդին խշխռցի ձայն լսելով՝ ականջները սրում և անհանգստանում ե: Յերբ Բորը քաղցրությամբ տալիս ե Ռեդդիի անունը, նրա սրած ականջները կախ են ընկնում: Հուզմունքեց դողալով Բորը մոտենում ե ձիուն և դողողջուն ձեռքով կտրում ե նրա բոցավառ բաշից մազերի յերկու հաստ փունջ:

Ռեդդին բարեկամարար մոտեցնում ե դունչը Բորի յերեսին: Բորը համբուրում ե անման Ռեդդիի դունչը, թազցնում ե մազերը ձոցում և վազում տուն... Այդտեղ նա կպցնում ե անավարտ պա-

կերին Ռեդդի բաշից կտրած մագերի փունջը, այնպիսի ձև տալով նրանց, վոր նման լինեն Պեդագոգուսի մագերին...

Ջեմսը մեծ զարմանքով ու հիացմունքով լսեց Բորբի խոստովանութիւնը, վորը հենց այդտեղ յերգվեցրեց նրան և խոստում առավ նրանից, վոր վոչ մի ժամանակ և վոչ վոքի չի հայտնի նա շեկակարմիր մագերի գաղտնիքը:

3. ՎՈՍԿԵՐՁԻ ՄՈՏ

Բորբը յերեք տարեկան յերեխա յեր, յերբ մեռավ նրա հայրը: Նա ազոտ կերպով եր հիշում մի հաղթանդամ մարդու, վոր բարձրաձայն ծիծաղում եր և ուսին եր նստեցնում իրեն: Նրա այտերը ծածկված եյին կոշտ մագերով և ծակում եյին ինչպիս խողանակը: Բորբին շատ դուր եր գալիս, յերբ նստած եր լինում այդ մարդու ուսերին: Յերևի հենց այդ մարդն և յեղել Բորբի հայրը, ազարակատեր Ֆուլտոնը:

Իննը տարի յեր անցել Բորբի հոր մահից հետո, և այդ ամբողջ ժամանակ միսսիս Ֆուլտոնը ստիպված ե յեղել ծանր աշխատանքով փող աշխատել, վոր հոգա վորբերի սնունդն ու հագուստը: Քանի յերեխաները մեծանում եյին, այնքան նրա համար դժվար եր լինում մեծակ յերեխաների բոլոր կարիքները հոգալ. նա հաճախ մտածում եր, ինչպիս անի, վոր յերեխաներին ինքնուրույն աշխատանքի սովորեցնի:

Բորբի տասնմեկ տարին լրացել, տասներկուսի մեջն եր արդեն: Նա վարժ կարգում եր ամեն գիրք և համարյա անսխալ գրում եր վոչ շատ բարդ նախադասութիւններ: Իհարկե սովորելու նա դեռ շատ բան ուներ, բայց ինչ արած, յերբ փողը չեր հերիքում նրան ավելի ուսում տալու համար:

Մի յերեկո, յերբ Բորբը նստած փայտե գդալով սուպ եր ուտում, միսսիս Ֆուլտոնը տխուր ու տրտում նայելով նրան, ասաց.

— Լսիր, Բոր, յես ուզում ես, վոր դու մի վորևե արհեստ սովորես: Դարբին Տոմի կինն ինձ ասաց, վոր նա մի հարուստ ազգական ունի Ֆիլադելֆիայում, վոսկերիչ ե...

Բորբը վոչ մի խոսք չարտասանեց, բայց մայրը նկատեց, վոր նրա փայտե գդալն, այլևս չի աշխատում:

— Նա քեզ վոսկերչութիւն կսովորեցնի և դու ել կկարողանաս փող աշխատել:

Բորբին մեծ վիշտ պատճառեցին մոր խոսքերը: Նա մտածում եր,

վոր պիտի հեռանա իր հայրենի Լիտալ-Բրիտանից, վորտեղ Բորբը գիտեր յուրաքանչյուր փողոցը, յուրաքանչյուր տունը, վորոնք այնքան մոտ եյին նրա սրահին: Պիտի թողնի մորը և հայրենի տունը, դարբին Տոմի, բարձրաբերձ ծառերի անտառը, վորը թնդում եր թռչունների յերգի ձայնից, և խայտաբղետ խեցիները գետի ափին: Այդ բոլորը թողնելու միտքն անասելի տխրութիւն եր պատճառում նրան:

Մանավանդ վոր հենց այդ ժամանակ միտար Գրեբըլի ուսումնարանում լինում եյին զանազան ուրախալի դեպքեր:

Բորբի ցուցումներով աշակերտները տախտակներից շինել եյին մի սայլակ, վորին լծվելով մեծ յեռանդով քաշում եյին փողոցով, իսկ աշակերտներից յերեք պարագլուխներ՝ Տոնի Այլենդը, Դարբին Տոմի տղա Ջեմսը և ինքը՝ սայլակը հնարող Բորբը, վորպես իսկական սայլապաններ մեծ յեռանդով քշում եյին ուրախաձայն բղավող ու աղմկող «ձիերին»: Փոշին բարձրանում եր ու բռնում ճանապարհը. կարելի յեր կարծել, վոր տափաստաններում արածող ձիերի յերամակ ե անցնում այդ փողոցով: Անցուդարձ անողները շլարած կանգնում-նայում եյին, իսկ ծխատեր քահանան յերկուրից խաչակնքում եր յերեսը:

Դարբի տակ, ճամբի վոլորանում սայլը խաղի քարտերից շինվածի պիս հանկարծ բաժան-բաժան յեղավ միքանի մասի. թե սայլի մեջը նստածները և թե ձիերը բարձրաձայն վայնասուն բարձրացնելով ամենքը մի-մի կողմ գլորվեցին: Ջեմսի ճակատն եր ուռել, Տոնիի ծնկներն եյին արնել, իսկ սայլը հնարողի ձեռքերն եյին քերծվել, բայց աշակերտներից վոչ վոք առանձնապես չհուզվեց իրենց սայլի այդպիսի անսպասելի խորտակումից:

Ահա ձեզ և մի ուրիշ ուրախալի դեպք: Մոտիկ անցյալում Պեդագոգուսն ամուսնացել եր, այդ պատճառով աշակերտներին առատորեն հյուրասիրել եյին հարսանիքի սեղանից մնացած համեղ մնացորդներով: Ի պատիվ իր ամուսնութիւնի Պեդագոգուսը խոստացել եր աշակերտներին զբոսնելու տանել մոտակա ավանը, և աշակերտներն անհամբերութիւնով սպասում եյին այդ որին:

Յե՛վ այժմ այդ բոլոր զվարճութիւններին նա պիտք ե հրածելոտ տա ու գնա Ֆիլադելֆիա անձանոթ քաղաքը, անձանոթ մարդկանց մոտ:

Ամբողջ յերեք շաբաթ միսսիս Ֆուլտոնը պատրաստութիւն եր տեսնում Բորբին ճանապարհ պցելու համար:

Մինչև ուշ գիշեր լսպտերի աղաւ լույսով կար եր անում

նա, իսկ Բորը մի անկյուն քաշված ու պառկած՝ նայում էր մոր դժգոլուն և իր կարի վրա կռացած յերեսին:

Ժամանակ առ ժամանակ նա աչքերը հեռացնում էր կարից, ձգում էր իր ընդարմացած ձեռքերը և մի ըոպեյաչայի խոր մտածմունքի մեջ ընկած նայում էր մութ պատուհանին: Բորն անչափ խղճում էր իր մորը, բայց նա դեռ փոքր էր, անկաշող էր նրան վորեհ երգնութուն հասցնել: Նա յերազում էր այն որվա մասին, յերբ ինքը մեծացած և ուժեղ մարդ դարձած կլինի և իր պառավ մոր համար հանգիստ ու պատվավոր կյանք կապահովի:

Հետո նրա աչքերը փակվում էին, մտքերը խառն ու փրնթոր դառնում, ճրագի լույսը կամաց-կամաց աղոտանում էր և Բորը քնում էր: Յերազում նա տեսնում էր Ֆիլադելֆիա քաղաքը: Տներն այդ քաղաքում շինված էին արծաթից, իսկ թեք տանիքները փայլիլում էին վոսկոե պես և այնքան պայծառ էին, վոր մարդու աչք էին ծակում: Յերբ նա դարթնում էր, տեսնում էր իր բարձի վրա առավոտվա արեգակի վոսկեփայլ ճառագայթները:

Վերջապես յեկավ մեկնելու որը: Յերկու ձի լծած ֆուրգոնի չորս կողմը, վորի մեջ նստած էին միսսիս Ֆուլտոնն ու Բորը, Լիտտլ-Բրիտեյնի յերեխաները աներես բռների պես դես ու դեն էին վազվզում ու դժվժում:

— Այս յես քեզ եմ ընծայում,—ասաց Ջեմսը և մեկնեց Բորին մի փայտե արկղիկ:

Բորը նայեց արկղի մեջ և տեսավ, վոր այնտեղ Ջեմսի ձկնորսական հրաշալի պարագաներն են՝ պինդ և լավ վոլորած կարթաթեկեր, նավի խարսխի նման յերկու կողմանի կարթեր և գուլն-զգուլն լողաններ: Բորը շատ հուզվեց, յերբ Ջեմսից ստացավ այդ ընծան: Միայն Բորին էր հայտնի, թե վորքան էր սիրում ու պահատում Ջեմսն իր ձկնորսական պարագաները:

Աշակերտները հասակավորների նման հերթով մոտենում էին Բորին և հրաժեշտ տալիս նրան, սեղմելով նրա ձեռքը: Վերջապես կառապանը մտրակեց ձիերին:

— Շուտով վերադարձիր, իր ճղճղան ձայնով գոչեց Տոնի Այլենդը, իսկ յերեխաները փողու ամպերի միջով վազում էին ֆուրգոնի հետևից: Բանի հեռանում էին, այնքան յերեխաների թիվն ավելի ու ավելի պակասում էր, մինչև վոր ամենավերջինը և միակը մնաց Ջեմսը՝ Բորի ամենամտերիմ ընկերը:

Հայրենի Լիտտլ-Բրիտեյնը մնաց մեկնողների հետևում: Անց-

նում էին նրանց կողքով կանաչ արտեր, անտառներ և արոտատեղիներ: Ճանապարհին հաճախ նրանք մի ֆուրգոնից տեղափոխվում էին մի ուրիշ ֆուրգոն և Բորն ամեն անգամ ինքն էր տեղափոխում իր կարթրագուլն ու փոքրիկ սնդուկը, վոր տվել էր նրան մայրը: Վերջապես յեկավ այն ըոպեն, յերբ ուղևորներն սասցին, թե մոտենում են Ֆիլադելֆիային, իսկ քիչ ժամանակ անցած յերեկացին և քաղաքի արվարձանները: Կառապանը ձիերն ավելի արագ քշեց և ֆուրգոնը բերեց կանգնեցրեց քաղաքային խորհրդարանի առջև:

Միսսիս Ֆուլտոնը Բորին տանում էր Ֆիլադելֆիայի մարդաշատ փողոցներով և Բորը զարմանքով էր նայում ահագին տնիւրին, գեղեցիկ կառքերին և շքեղ հագնված մարդկանց: Ճշմարիտ է, տներն արծաթե չէին, վոչ ել տանիքները վոսկե, բայց և այնպես նրանք շատ դուր յեկան Բորին:

Յերկու բազմամարդ փողոցների անկյունում միսսիս Ֆուլտոնը կանգ առավ մի մեծ խանութի առաջ, վորի դռան մոտ ահագին վոսկե տառերով գրված էր՝

ՎՈՍԿԵՐԻՉ ԱՐՐԱՀԱՍ ՍՄԻՏԱՐՆ

6190
53

— Ինչ համեստ ու քաղաքավարի պահիր միսսոր Սմիտսոնի ներկայութեամբ,—ասաց միսսիս Ֆուլտոնը և հրեց դուռը Բորը տեսավ, վոր ինքը գտնվում է վոսկեբջի արհեստանոցում:

Առաջին անգամն էր իր կյանքում տեսնում Բորն այդպիսի գեղեցիկ բաներ: Վաճառասեղանի վրա ապակու տակ դարսած էին ամեն տեսակ արծաթե և վոսկե զարդեր՝ շղթաներ, ապարանջաններ, պայծառ ու շողջողացող քարերով մատանիներ, վորոնցից միքանիսը բաց կանաչագույն էին, ինչպես նոր բողբոջած տերև, կապույտ, ինչպես դարնանային յերկինքը, և կարմրագույն, ինչպես թարմ արյունը: Բորը յերբեք տեսած չկար այդպիսի քարեր: Նա այդ քարերի մասին գիտեր միայն իր կարդացած հեքիաթներից: Ստյապաբոտ խեցիները և ճլաքարերը այժմ նրա հիշողութեան մեջ աղոտացան:

Պատերի յերկարութեամբ շինված դարակներում կային բազմաթիվ բրոնզե ժամացույցներ, վագաներ, զանազան արձանիկներ: Բորն աչքերը չորս էին դառել այդչափ հիանալի բաներ տես-

նիւուց և նա վարպետ մտաւստուղի մեջ վերջապետ նկատեց նաև ծանրամարմին միստր Սմիտսոնին, վորը սև ծխամորճը բերնին փայլուէլած վաճառասեղանի հետևում նստած փնչացնելով ծխում եր:

Միստր Ֆուլտոնը Բորին բոլորովին մոտեցրեց միստր Սմիտսոնին և ասելով, վոր դարբին Տոմի կնոջ խորհրդովն է յեկել նրա մոտ, խնդրում եր Բորին ընդունել իր մոտ աշխատելու: Սմիտսոնը մի խիստ հայացք գցեց փոքրիկ Բորի վրա, փչեց նրա յերեսին ծխամորճի կապտավուն ծուխը, վորից քիչ եր մնում Բորի շունչը կտրվի, և՛ խստաձայն հարցրեց՝

— Քանի՞ տարեկան ես, ծիտիկ:

— Տասներկու,— պարոն, պատասխանեց Բորը և կամենում եր ասել Սմիտսոնին, վոր իր անունը ծիտիկ չէ, այլ Բոր կամ Ռոբերտ Ֆուլտոն է, բայց միստր Սմիտսոնն ընդհատեց նրան՝ ասելով.

— Փոքր ե դեռ, չի կարող:

Բորը նայեց մորը: Նա կանգնած եր Սմիտսոնի առաջ վախեցած և աչքերը գետնին խոնարհած: Բորը հիշեց իր ցանկութիւնը դառնալ ինքնուրույն մարդ, վորպեսզի կարողանա ոգնել մորը: Նա նայեց ուղիղ Սմիտսոնի աչքերին և հանգիստ կերպով ասաց.

— Բայց յես գիտեմ կարգալ և գրել, հաշվել ել լավ գիտեմ: Նկարում ել եմ,— ավելացրեց նա հաղիվ կարողանալով ծիծաղը պահել, հիշելով իր նկարած Պեգադոգուսի պատկերը: Ուրախ ժպիտը նկատելի յեր նրա շրթունքների վրա:

— Ծիծաղելու բան չկա,— նորից փնչացնելով ասաց Սմիտսոնը,— իսկ թե վորքան դու գրագետ ես, այդ մենք իսկույն կտեսնենք:

Այս խոսքերի վրա նա դեմ արեց Բորի քթին սև կաշե կաղմով մի հաստ գիրք:

— «Ճանապարհորդութիւն աշխարհի շուրջը, վորը կատարել է ծովակալ լորդ Անսոնը 1740, 41, 42, 43, և 44 թվականներին, լինելով հրամանատար նորին մեծն Բրիտանական մեծութեան նախատորմի, վորն առաքելած եր վորոնումներ կատարելու Հարավային ծովում, կազմված է նրա թղթերից ու վավերագրերից», առանց շունչ քաշելու կարգաց փոքրիկ Բորը, այնպես վոր կարծես սուզվելիս լինեք խորը ջրի մեջ:

— Վոչինչ, լավ է կարգում,— մութմութաց Սմիտսոնը և նայեց միստր Ֆուլտոնի կողմը:— Լավ, թող մնա: Կկերակրեմ ու արհեստ կսովորեցնեմ:

Միստր Ֆուլտոնը խնդրեց միստր Սմիտսոնին, վոր յերեխա-

յին չնեղացնի, հրաժեշտ տալիս Բորի ձեռքի մեջ դրեց միքանի հատ սև փող և դուրս յեկավ խանութից:

Բորը մնաց բոլորովին մենակ այդ ահագին ու ոտար քաղաքում, վոսկերչի խանութում: Նա հիշում եր, ինչպես միքանի տարի առաջ մայրը բերել եր նրան միստր Գրեբբլի ուսումնարանը և ինքը, առաջին անգամ կյանքում, նույնպես մնացել եր բոլորովին մենակ ոտար մարդկանց մեջ: Բայց այն ժամանակ նա գիտեր, վոր մայրը շատ մոտ է գտնվում, վոր բավական է դուռը բաց անի և վազելով անցնի յերկու-յերեք փողոց, վոր նորից տանը լինի: Այժմ այլևս այդպես չի: Մայրը մեկնել գնացել է հեռու գտնվող Լիտտլ-Բրիտեյն, իսկ Բորը մնացել է մենակ այս ահագին քաղաքում, մոռալ խանութում, մի անհամակրելի ու հաստափոր տիրոջ մոտ:

Յերբ մոր հետեից դուռը ծածկվեց, Բորի մեջ մի անդամադրելի ցանկութիւն ծագեց՝ վազել միստր Ֆուլտոնի հետևից, խնդրել, աղաչել նրան, վոր իրեն ել հետը վերցնի-տանի հայրենի Լիտտլ-Բրիտեյն: Բայց անմիջապես նրա պեպենոտ յերեսը կարմրեց ամթից:

Չէ՞ վոր ինքը վորոշել է անկախ մարդ դառնալ, վորպեսզի մորը հանի աղքատ դրութիւնից: Ի՞նչ կլինի խեղճ միստր Ֆուլտոնի դրութիւնը, յեթե նա հեռանա խանութից առանց մի արհեստ սովորելու, առանց մի գործի տեր դառնալու:

Վո՞չ, հա՞զար անգամ վոչ: Բորը հաստատ վորոշել է մնալ վոսկերիչ Սմիտսոնի մոտ: Նա յերեսը դռնից դարձրեց և հարցական հայացք գցեց տիրոջ վրա:

— Լսի՞ր՝ ինչ եմ ասում, ծիտիկ, անկյունում դրած խողանակը վերցրու և խանութը մաքրի:

Բորը շատ ել համոզված չեր, վոր սենյակ մաքրելը վորեն կապ ունի վոսկերչի արվեստի հետ: Բացի այդ նրան գայրացնում եր «ծիտիկ» մականունը, վոր գրիլ եր իր հաստափոր տերը: Բայց հենց առաջին անգամից հակաճառել տիրոջը նա անհարմար համարեց: Չէ՞ վոր տերը, յերբ ուզենա, կարող է վերադարձնել իրեն գյուղ:

— Դեհ, ծիտիկ, շուտ արա, խլացի՛ր ես, ինչ է,— լսեց Բորը Սմիտսոնի բարկացկոտ ձայնը և վազեվազ գնաց վերցրեց խողանակը:

Այսպես սկսվեց Բորի աշխատանքը վոսկերիչ Արրահամ Սմիտսոնի արհեստանոցում:

4. ԴԺԲԱԽՏ ՊԱՍՏԱՆԱՐ

Արբանակամ Սմիտսոնի խանութը բաղկացած էր յերկու սենյակից: Առաջին և մեծ սենյակի պատուհանները նայում էին դեպի փողոցը և դուռն էլ բացվում էր փողոցի վրա: Այդ մի շքեղ զարդարված, ընդարձակ և մաքուր սենյակ էր: Այստեղ հաճախ լինում էին նշանավոր հաճախորդներ՝ մետաքսե թանգարժեք լաշխան շորերով տիկիներ, թավիշե կարճ շալվարով, գուլպաներով և ժապավեններով տուֆլիներ հագած ջենտլմեններ, վորոնք վստակե լուսնեաները աչքերի մոտ պահած նայում էին այն թանգարժեհին իրերը, վոր առաջարկում էր նրանց Արբանակամ Սմիտսոնը: Այդ ընդհանրությունն առանցիկ նման չէր լինում այն միտք Սմիտսոնին, ինչպես նրան ճանաչում էր Բորը: Նրա մոայլ կերպարանքի հետքն էլ չէր մնում, իսկ նրա թուռնավոր ծխամորճը մնում էր հանգիստ պառկած վաճառասեղանի հետևում, խուռում էր փաղաքըղ ձայնով և մեջքը կորացնում, վոր ավելի հաճոյանա: Նշանավոր տիկիներն ու ջենտլմենները գնում էին նրանից մանր-մուշր բաներ, վոր պատրաստում էին արհեստավորները յերկրորդ սենյակում:

Յերկրորդ սենյակն առանցիկ նման չէր առաջինին: Դա մի յերկար սենյակ էր խեղդով ողով և փոքրիկ լուսամուտներով, վորոնցից հաղիվ էր ներս թափանցում արեղակի լույսը: Այդ սենյակն ավելի նմանվում էր դամբարանի, քան սենյակի: Կեղտոտ պատերի յերկարությամբ շինված էին լայն վորմաթախտեր, վորոնց վրա քնում էին Արբանակամ Սմիտսոնի արհեստավորները: Լուսամուտների մոտ դրված էին աշխատանքի փոքրիկ սեղաններ: Վաղ առավոտվանից մինչև ուշ յերեկո Բորը տեսնում էր սեղանների վրա կուսացած արհեստավորներին՝ կաշվե կոշտ գոգնոցները առաջները կապած: Սենյակի մի անկյունում կար միջակ մեծությամբ մի քուրա: Այդտեղ էին հալում մետաղները, վորից առաջացած խեղդող մխաճոտը լցնում էր սենյակը և քերձում այդտեղ աշխատողների կոկորդն ու թոքերը: Այդ քուրային նայելիս Բորը հիշում էր դարբին Տոմին և իր ազատ, ուրախ կյանքը Լիտտլ-Բրիտեյնում:

Բորը վեր էր կենում վաղ առավոտյան մյուս արհեստավորների հետ միասին և արագ հագնվելով՝ վազում էր մոտակա պանդոկը յեռման ջուր բերելու համար: Հետո ավելում էր խանութը,

փողին սրբում և ճաշի համար կարտոֆիլ մաքրում: Ծաշից հետո զանազան հանձնարարություններ էր կատարում:

Մի ամբողջ ամիս Բորն այդպես անցկացրեց: Այդ ամբողջ ժամանակ նա յերազում էր մի կերպ ազատվել այդ արհեստանոցից և վերադառնալ իր հայրենի գյուղը: Բայց ամեն անգամ, յերբ նա հիշում էր միասին Ֆուլտոնին և իր վճիռը անկախ մարդ դառնալու մասին, նա հրաժարվում էր իր բաղձանքները կատարելուց:

Մեկ անգամ ճաշից հետո միտք Սմիտսոնն իր մոտ կանչեց Բորին:

— Ծիտիկ, վաղվանից սկսած դու կողմես հալիչ Զիմին: Կասես նրան, վոր յես եմ ուղարկել քեզ:


Բորն այդ վոր լսեց, ուրախությունից նրա սիրտը սաստիկ բաբախեց: Հասավ վերջապես յերջանիկ ողբ: Վաղվանից Բորը կտվորի վոսկերչության արվեստը և առաջին քայլը կանխ անկախ մարդ դառնալու ճանապարհին: Ամբողջ յերեկոն Բորը խելագարի պես պտույտ էր գալիս խանութում և արհեստանոցում: Հանկարծ նա գու քաշեց ու ընկավ խողանակի վրա, վորի մի ծայրը ուժով խփեց նրա ճակատին և խիստ տեղը ուռուցք գոյացավ: Ընթրիքի համար կարտոֆիլ մաքրելիս նա յերկու անգամ ձեռքը կտրեց: Ծանր թեյամանից թափված յեռման ջուրը ոճի պես կծեց նրա բորիկ վոտը: Բայց այդ բոլոր մանր-մուշր անախորժությունները մի մազաչավի անգամ չկարողացան պակասեցնել Բորի ուրախությունը:

Գիշերը նա յերազում տեսավ, վոր ինքը վոսկե մի անագին նավ է շինել և այդ նավը գնել է իրենից ծովակալ լորդ Անսոնը, այն անձը, վորը մեկնել և Հարավային ծովը և վորի մասին Բորն ինքը գաղտնի կարգացել էր կաշվե կազմով հաստ գրքում:

Մյուս առավոտ Բորը զարթնեց լուսաբացին: Արհեստավորները դեռ քնած էին և Բորը լսում էր նրանց ծանր ու ընդհատվող խուժոցը: Նա վորմաթախտից թռավ ներքև, արագ հագնվեց և դուրս յեկավ փողոց: Բորը լիակուրճ շնչում էր վաղորդյան ողբ: Նա իրեն բախտավոր էր զգում, վոր այդ առավոտ նա չպետք է գնա պանդոկը յեռման ջուր բերելու, խանութը չի ավելում և այդ անիծված կարտոֆիլն այլևս չի մաքրելու:

Մի կես ժամ անց Արբանակամ Սմիտսոնի վարպետներն ու յենթավարպետները նույնպես զարթնեցին քնից: Արագ հագնվելուց և մի քիչ տաք ապուր ուտելուց հետո նրանք հագան կաշվե ծանր

գողնոցներն ու սկսեցին իրենց աշխատանքը: Բորը տեսավ, թե ինչպես հալիչ Ջիմը մի կողմ դրեց իր գավաթը և ուրախ յերգելով գնաց դեպի իր քուրան: Այն ժամանակ Բորը վճռեց մոտենալ նրան:



— Միտար Սմիտսոնը ինձ ուղարկել է ձեզ մոտ,— քաշվելով ասաց նա Ջիմին,— վոր դուք ինձ սովորեցնեք:

Ջիմը սովորական շարժումով կապելով իր գողնոցը՝ անվստահությամբ վոտքից գլուխ նայեց փոքրիկ Բորին:

— Սովորեցնեմ քեզ,— հարցրեց նա,— լավ, նայիր տես, յես ինչպես եմ աշխատում:

Մեծ ունեւիթով նա վերցրեց հալոցը, վորի մեջ զրված էյին արծաթի ձուլեր և արագ շարժումով դրեց կրակի վրա: Մի վոտով նա շարունակ ձգում էր փուքսը փչող թելը:

Ջիմը մի լավ և ուրախ արհեստավոր էր: Նա մյուս արհեստավորներից շատ ջանել էր և Աբրահամ Սմիտսոնի մոտ աշխատելը դեռ նրան չէր ձգմել: Նա շարունակ ուրախ յերգեր էր յերգում, կատակներ էր անում իր ընկերների հետ և սրախոսություններ անում նրանց հասցեյին, ցույց տալով իր սպիտակ առամները: Աշխատում էր նա արագ և լավ և Աբրահամ Սմիտսոնը նրան շատ էր գնահատում: Այսոր Ջիմին առանձնապես լավ տրամադրության մեջ էր, և Բորն ուրախությամբ ժտածում էր, թե վորքան դուրեկան պիտի լինի Ջիմի ղեկավարությամբ աշխատելը: Յերկու անգամ Ջիմը հալոցը քուրայից հանեց, բայց արծաթի փայլուն ձուլերը դեռ չէին հալվել: Ջիմը յերբորդ անգամ դուրս քաշեց քուրայից հալոցը և այն ժամանակ Բորը տեսավ հալոցի տակին պղպջացող և միապաղաղ փայլուն գանգվածը: Ավելի լավ տեսնելու համար նա կանդնեց վոտների մատների վրա և ավելի խորը կռացավ դեպի հալոցը, բայց անմիջապես հետ քաշվեց, վորովհետև մի բարկ հոտ դիպավ նրա քթին, վորից նա սկսեց սաստիկ հաղար: Ջիմը կշկշալով ծիծաղեց:

Հենց այդ ըրպեյին դուանը յերեվաց Աբրահամ Սմիտսոնի կլորիկ փորը:

— Ջիմ,— լավեց նրա ձայնը,— մի յեկ այստեղ:

— Կտիր ինչ եմ ասում, փոքրիկ,— ասաց Ջիմը Բորին,— շորի կտորը վերցրու և փաթաթի ունեւիթը, իսկ հիմա պիտե բռնի հալոցը ունեւիթով: Չգուշ, վոր ձեռքիցդ բաց չթողնես, յես շուտով կգամ:

Հալոցը ծանր էր և շիկանալու աստիճան տաքացած: Նրա տաքությունը շուտով անցավ ունեւիթին: Լավ է, վոր Ջիմն ասաց՝ ունեւիթը շոբով փաթաթի, թե չե Բորի բանը շատ վատ կլիներ:

Անցավ մեկ ըրպե, յերկու ըրպե, Ջիմը չէր յերևում: Ունեւիթը տաքացել էր, քուրայի տաք բոցը այրում էր Բորի յերեսը, ձեռները: Այս ուր կորավ Ջիմը: Բորն զգում էր, վոր հալոցը պահելը ավելի ու ավելի դժվար է դառնում: Դրա վրա պետք է ավելացնել և այն, վոր բարկ հոտից նրա գլուխը պտուլտ էր գալիս: Բորն ուղեց ձայն տալ, մեկին ոգնության կանչել, բայց

ձայնը կողորդից: Դուրս չեր գալիս: Բորը սլատրանս եր
այդ անիծված հալոցը վայր գցել հատակի վրա, բայց նրա
ձեռքերն ու վոտները չեյին հնազանդում իրեն: Նա արձանի պես
մնացել էր տեղում անշարժ կանգնած, վոտները չռած՝ թուլացող
ձեռքերն առաջ մեկնած և վերջին ճիգն եր թափում, վոր ունե-
լիքը պինդ բռնի:

Քնեբակներում ուժեղ դարկում էր արյունը, լայն բացված
աչքերը առանց թարթելու նայում էին կրակին: Ձեռքերն ըն-
դարմանում էին, թվում էր, վորտեղ վոր է, կթուլանան և հալոցը
բաց կթողնեն:

Մեկ էլ Բորին այնպես թվաց, թե քուրան տեղից շարժվեց,
հատակն էլ նրա վոտների տակն է շարժվում, նա գիտակցու-
թյունը կորցրեց, չեր գտնում վորտեղ է և ինչ է անում, և հալոցը
ձեռքից բաց թողից:

Յերբ Բորն ուղքի յեկավ, տեսավ իրեն վերևը կանգնած Զիմի
վախեցած ու գունատ յերեսը և իսկույն հասկացավ, վոր մի վատ
բան է արել:

— Տխմար արարած, — լսեց նա Սմիտսոնի մոնչոցը: — Բնխտը
բանել է, վոր ինքը չի այրվել: Ավելի լավ է՝ թող կարտոֆիլ մաքրի,
քանի վոր անընդունակ է բան սովորելու: Այ դու, տխմար: Բայց
դու էլ պակասը չես, — կշտամբեց Սմիտսոնը խեղճ Զիմին և դուռը
ըրկակացնելով դուրս յեկավ արհեստանոցից:

Բորը նիհար ձեռքով հետ տարավ աչքերի վրա ընկած շագա-
՝ աղաղույն մազերի փունջը և նայեց իր շուրջը: Իրենից յերկու
քայլ հեռու տեսավ նա շուռ յեկած հալոցը և ցեխի ու ավազի
հետ խառնված արծաթի շերտը: Չորս կողմը խմբված կանգնած
էին արհեստավորները: Նրանցից մեկը Բորին ջուր տվեց:

— Բախտավոր տղա յե, վոր իրեն չի այրել:

— Ասել չի ուզի, վոր բախտը բանել է:

«Կարտոֆիլ մաքրել», «կարտոֆիլ մաքրել» — արձագանքի պես
կրկնվում էին նրա ականջում միտքը Սմիտսոնի խոսքերը: Նա
անխոս ուղղվեց դեպի կարտոֆիլով լիքը դուլը և հենց այդ
միջոցին էլ նա հիշեց իր հաստատ վճիռը՝ անպատճառ հաջողու-
թյուն ձեռք բերել:

«Այսոր գործն անհաջող դնաց, ասում էր նա ինքն իրեն, —
եհ, ի՞նչ արած, բայց վոչ մի անհաջողություն ինձ չի կտարի:
Մե՞ք դեռ կպայքարենք, Աբրահամ Սմիտսոն»:

Յե՛վ նա սկսեց կարտոֆիլ մաքրել:

5. ԳԻՇԵՐՎԱ ԿՈՒՎՆ ԱՐՇԵՍԱՆՈՑՈՒՄ

Գործերը դարձյալ ընթացան հին յեղանակով: Լուսարացին
Բորը վորմնաթախից վար էր ցատկում, շտապ-շտապ հագնվում
էր և վազում մոտակա պանդոկը յեռման ջուր բերելու: Հետո
ավելում էր խանութը, ջնջոցով մաքրում էր ժամացույցները
և ուրիշ մանր-մուկ իրերի վրա նստած փոշին: Ճշգից առաջ
մաքրում էր կարտոֆիլը, իսկ յերեկոյան այս ու այն կողմն էր
վազվզում քաղաքում միտքը Սմիտսոնի հանձնարարությունները
կատարելու համար:

Այդպես անցնում էին որբը որբերի հետևից, ամիսները
ամիսների հետևից: Տարին լրացավ, լրացավ և յերկրորդ, յերրորդ
տարին, իսկ միտքը Սմիտսոնի մտքովն էլ չեր անցնում Բորին
վոսկերչուժյան արհեստը սովորեցնել: Անտանելի յեր դարձել Բորի
կյանքը Աբրահամ Սմիտսոնի մոտ: Նա ավելի ու ավելի հաճախ էր
մտածում հեռանալ նրա արհեստանոցից:

Այդ ժամանակ Բորի տասնվեց տարին լրացել էր, տասնը-
յոթերորդ տարվա մեջն էր: Լիտու-Բրիտոյնի աշակերտները նրան
այժմ չեյին ճանաչի, այնքան փոխված էր նա:

Նախկին փոքրիկ աշխույժ և ուրախ յերեխայի փոխարեն
նրանք կտեսնեյին այժմ մի մռայլ, յերկարահասակ ու նիհար
պատանու: Այո, ուրախ որ չտեսավ Բորը Աբրահամ Սմիտսոնի
արհեստանոցում:

Նրա միակ մխիթարությունը նկարչությունն էր: Հենց վոր
մի ըոպե ազատ ժամանակ էր ունենում, Բորը ածուխի մի կտոր
էր վերցնում և նրանով նկարում թղթի վրա զանազան նկար-
ներ: Ամենից շատ նրան հաջողվում էր նկարել մարդկանց
պատկերներ: Նա նկարում էր Աբրահամ Սմիտսոնի արհեստավոր-
ների նիհարած ու մռայլ դեմքերը և թանգազին իրեր գնելու հա-
մար խանութը հաճախող տիկիներին ու պարոնների լավ խնամ-
ված ու լիքը յերեսները: Արհեստավորները դարձանում էին, թե
վորքան նման և արագությամբ էր նկարում Բորը պատկերները:
Նրանք գովում էին Բորին և հյուրասիրում: Փոխարենը Բորը
ընծայում էր նրանց ի հիշատակ իր նկարները:

Արհեստավորները բոլորը սիրում էին Բորին, իսկ ինքը
Բորն առանձնապես մոտ էր ձուլիչ Զիմին: Կիրակի որբը նրանք
յերկուսով սովորաբար դուրս էին գալիս արհեստանոցից, վոր-

տեղ ողը միշտ ծանր եր լինում և խանձահոտը միշտ անպակաս, և միասին գնում եյին քաղաքից դուրս դաշտերում զբոսնելու, կամ քաղաքային մեծ շուկան:

Շուկայում ժամանակը շատ ուրախ եր անցնում: Բալագաններում յիբեանները ներկած ծաղրածուները զանազան ծամածուծություններ եյին անում, յերաժիշտները՝ վորքան ուժ ունեյին՝ փչում եյին իրենց մեծ ու պստիկ մետաղյա փողերը: Ձեռնածուները, հայտնի չե ինչպես, անվերջ կերպով դուրս եյին քաշում մի փոքրիկ ու կեղտոտ գլխարկից գունդգույն ժապավեններ և կենդանի ու կչկչան հավեր: Նրանք բարձր նետում եյին վերև սուր ու փայլուն դանակներ և հետո բռնում նրանց համարյա թե իրենց աչքի կոպերով: Ամբոխը ճիչ ու աղաղակ եր բարձրացնում, յերբ պսպղան դանակը կարծես ահա, վորտեղ վոր ե, պիտի կտրի աչքի քնքույժ թաղանթը: Թովչի շվիկէ ձայնից դուրս եյին սողում յեղեգնից գործած զամբյուղից գիշատիչ գազաններ, չտեսնված թռչուններ և ոճեր: Ոճի աչքերը տեսնելիս՝ սարսափած ամբոխը մի կողմ եր քաշվում:

Հետաքրքիր շատ բաներ կային քաղաքային մեծ շուկայում, և յերկու բարեկամները տհաճությամբ եյին վերադառնում իրենց կիսախավար ու խեղդուկ արհեստանոցը: Տուն վորադառնալիս Բորը միշտ տխուր տրամադրության մեջ եր լինում և ձուլիչ Ջիմը, վորքան կարողանում եր, աշխատում եր նրան ուրախացնել:

Մեկ անգամ, յերբ նրանք վերադառնում եյին շուկայից, Բորն առանձնապես տխուր եր և լուռ:

— Լսիր, Բոր, ասաց նրան ձուլիչ Ջիմը, — յես ցույց տվեցի քո նկարը «Արծաթե գավաթում» (այդպես եր կոչվում հարեւան պանդոկը, վորտեղից Բորը յեռման ջուր եր բերում), և պանդոկի տերը խնդրեց, վոր մի բան նկարես իր պանդոկի համար: Նկարի, Բոր, նա քեզ կվճարի դրա համար:

Հետևյալ օրը, յերբ աշխատանքները վերջացան, Բորը նստեց նկարելու: Նա յերկար մտածում եր, թե ինչը կարող եր դուր գալ «Արծաթե գավաթի» տիրոջը: Մեկ մտածում եր կենդանիներ նկարել, կամ տեսարաններ իր հայրենի Լիտու-Բրիտանից: Ձեզժվար թե դա դուր գա պանդոկի տիրոջը: Հանկարծ Բորի գլխում մի լավ միտք ծագեց: Նա մի տեղից ներկեր ձարեց և միքանի որ հետո նկարը պատրաստ եր: Նկարված եր մի մեծ կրո սեղան, վորի շուրջը նստած եյին միքանի ուրախ մարդիկ և արծաթե գավաթներից կում կում խմում եյին փրփրակալած գարե-

ջուրը: Այդ նկարը պետք ե ներկայացնել «Արծաթե գավաթ» պանդոկը:

Բորը մի շորի կտորով ծածկեց իր նկարը և տարավ պանդոկը: Յերբ պանդոկապետը նկարը տեսավ, զարմանքից իր մտտ ձեռքերը միմյանց խփեց: Նա բարձր ծիծաղում եր, գովում, գովաբանում եր Բորին, բարեկամաբար խփում եր նրա ուսին, իսկ նրա փորն իջնում-բարձրանում եր ուրախ հուզմունքից: Յերբ մի քիչ հանգստացավ, նա մի մեխ խփեց պատին, ձարմանդներ ամբարցրեց նկարին և կախեց վաճառասեղանի վերևը: Հետո նա արկղից հանեց յերկու արծաթե դրամ ու տվեց Բորին, առաջարկելով նրան նաև մի գավաթ գարեջուր: Բորը գարեջրից հրաժարվեց, բայց դրամը վերցրեց:

Ժամանակ առ ժամանակ Բորը նկարում եր «Արծաթե գավաթի» տիրոջ համար մանր նկարներ և ստանում եր նրանից մեկ կամ յերկու արծաթե դրամ, վորը դնում եր իր կարմիր սնդուկի մեջ: «Յերբ դրամները շատանան, — մտածում եր Բորը, — կուղարկեմ Լիտու-Բրիտանից»:

Մի անգամ ուշ գիշերին, յերբ արհեստավորները քնած եյին իրենց վորմնաթախտերի վրա, Բորը լամպի տակ դրված փոքրիկ սեղանի առաջ նստած յեռանդուն կերպով նկարում եր: Նկարը համարյա թե պատրաստ եր: Բորն այնպես եր տարվել աշխատանքով, վոր չլսեց դան բացվելը և տիրոջ կամացուկ մոտենալն ու իր հետևը կանգնելը:

— Հիմա յեմ հասկանում, թե ինչու յե այդքան վառելայուղ գնում և ինչու յես դու այդչափ թմրած ու ծուլ լինում աշխատանքի ժամանակ:

Բորը ցնցվեց ու հետ նայեց:

— Միտք Սմիտսոն, — հանդարտ ձայնով ասաց Բորը, — յուղի գինը, յեթե ցանկանում եք, կվճարեմ, իսկ աշխատանքից ազատ ժամանակը ինչքան սիրտս ուզում ե՛ կարող եմ նկարել, յես գերի հո չեմ, ազատ մարդ եմ: Բացի այդ, դուք ճիշտ չեք ասում, վոր յես ծուլ եմ:

— Ձայնդ կտրիր, — գոռաց միտք Սմիտսոնը:

Քնաթաթախ արհեստավորները տեղներում շարժվեցին, իսկ միքանիսը մինչև անգամ գլխները բարձրացրին:

— Ո՞վ ճիշտ չի ասում, հապա մեկ ել կրկնիր ասածդ:

— Դուք, միտք Սմիտսոն, ճիշտ չեք ասում, յես աշխատում եմ ձեզ համար առավոտվանից մինչև ուշ գիշեր:

Միստր Սմիտսոնի աչքերը արյունով լցվեցին, նա Բորի աչքին այնպես եր յերևում, ինչպես մի կատաղած յեզ, վոր մի անգամ նա տեսել էր Լիտտը-Բրիտեյնում:

— Յես, Աբրահամ Սմիտսոնս, սժւտ եմ ասում,—գոռաց նա:

— Այո, յեթե դուք, միստր Սմիտսոն, պնդում եք, վոր յես ծուլ եմ,—հաստատ ձայնով կրկնեց Բորը:

— Յես քեզ ցույց կտամ... ասաց Սմիտսոնը ու մոտեցավ սեղանին:

Ինչպես յերևում եր, նա ուզում եր վերցնել նկարը և պատահապատահ անել, բայց այդ ընդմիջին պատահեց մի բան, վոր միանգամայն չեր համապատասխանում Աբրահամ Սմիտսոնի արհեստանոցում տիրող բարքերին:

Բորն առաջ շարժվեց, իր յերեխայական վտիտ մարմնով ու թույլ կրծքով դեմ կացավ միստր Սմիտսոնին և իր կրծքով փակեց նրա ճանապարհը: Արհեստավորները վորմնաթախտերից վար ցատկեցին ու բոլորը կիսամերկ խռնվեցին Բորի ու Սմիտսոնի չորս կողմը: Սմիտսոնը մի ընդմիջում չէր ընկնում, հետո իր անազին մարմնով առաջ շարժվեց դեպի Բորը:

— Միստր Սմիտսոն,—մի քիչ խլացած, բայց հանգիստ ու հաստատ ձայնով ասաց Բորը, առանց նրան ճանապարհ տալու, խնդրում եմ չմոտենաք իմ նկարին:

— Հեռու, շան լակոտ,—կատաղած գոչեց Սմիտսոնը և ձեռք բարձրացրեց Բորի վրա:

Մի խուլ աղմուկ լսվեց արհեստավորների մեջ, բայց նրանցից վոչ վոք սիրտ չարեց Բորին ոգնելու: Նրանք տեսան՝ ինչպես Բորը ճարպիկ կերպով խուսափեց հարվածից և բռնաբերին հատուկ արագությամբ այնպիսի մի հարված հասցրեց միստր Սմիտսոնի այտուկներին, վոր նրա ծխամորճը բերնից դուրս թռավ և հարվածից կարմիր բիծ գոյացավ նրա այտուկների վրա: Այն ժամանակ Աբրահամ Սմիտսոնը սաստիկ կատաղած վրա պրծավ Բորի վրա: Բորի վախճանը կարծես անխուսափելի յեր, բայց այդ վարկյանին ընդհանուր լուրթյան մեջ լսվեց հալիչ Ջիմի վճռական ձայնը:

— Պարոն, մի նեղացնեք յերեխային: Թողեք նրան հանգիստ: Զարմանքից ու շփոթվելուց միստր Սմիտսոնի բերանը բաց մնաց:

«Այս ինչ է, ապտամբուլոթյուն, ապտամբուլոթյուն է իմ արհեստանոցում, Աբրահամ Սմիտսոնի վոսկերչական արհեստանոցում», մտածում եր նա: Նա նկատեց, ինչպես հալիչ Ջիմը ամբողջ

խից գատվեց և մոտեցավ Բորին: Մնացած արհեստավորների աչքերի արտահայտությունից գուշակեց, վոր նրանց համակրությունն ել այդ անիծված տղայի կողմն է: Այո, նա այժմ մենակ եր և անպաշտպան իր սեփական արհեստանոցում:

— Վաղը, կտեսնենք,—փնթփնթաց նա և դուրս յեկավ սենյակից:

Բորը սեղմեց Ջիմի ձեռքը:

— Դու իսկական բարեկամ ես,—սրտանց ասաց նա:—Յես քեզ կհատուցեմ նույն յեղանակով:

Ջիմը վոչինչ չպատասխանեց, միայն գորովանքով խփեց հուզված Բորի ուսին:

Կռիվը վերջացել եր: Արհեստավորներից յուրաքանչյուրը գնաց իր տեղը և պառկեց քնելու: Կամաց-կամաց սովորական կարգը վերականգնեց արհեստանոցում: Միայն հալիչ Ջիմը և ցրիչ Բորը մի կողքից մյուսի վրա եյին շուռ գալիս իրենց տեղերում, մեկ ել միստր Սմիտսոնի հանգած ծխամորճը անկոչ հյուրի պես ընկած եր կեղտոտ հատակին:

6. ԹՈՒՂԹ ՈՒ ՆԵՐԿԵՐՈՎ ՊԱՆԴՈՎԻՑ ՊԱՆԴՈՎ

Բնական է, վոր միստր Սմիտսոնը առավոտյան վաղ, յերբ դեռ նոր եր լույսը բացվել, Բորին արհեստանոցից դուրս արեց: Բորը տեղ չուներ գնալու, այդ պատճառով արհեստանոցի մոտեքում իր կարմիր սնդուկի վրա նստած խոր մտածմունքի մեջ եր ընկել, թե ուր գնա և վորտեղ մի ապաստան գտնի:

Նա մեկ մտածեց գնալ Լիտտը-Բրիտեյն, բայց հետո մտածեց, վոր իր ունեցած միջանի արծաթե դրամները, վորոնք պահված եյին սնդուկի խորքում, բավական չեն լինի նույնիսկ ճանապարհածախսի համար: Հինց ասենք թե բավական ել լինեյին, բայց միթե նա սիրտ կաներ այժմ տուն վերադառնալ, առանց մի արհեստ սովորած լինելու Ֆիլադելֆիայում: Ցավը այն եր, վոր նա վոչ մի արհեստ չգիտեր և ուղեր-չուղեր պետք է սեփազործ բան-վոր դառնար և հազիվհազ իր գլուխը պահեր...

Այդպես Բորը տխուր մտածմունքների մեջ եր ընկած, նրա տած եր իր կարմիր սնդուկի վրա:

Կեսուրին նա սաստիկ քաղց զգաց և հիշեց, վոր առավոտվանից վոչինչ չէ կերել: Դուրսը մեքիչ պտույտ եր գալիս և քաղցից փոքում մի տեսակ խուլ ցավ եր զգում: Բորը սնդուկը դրեց ուսին և քայլերն ուղղեց դեպի «Արծաթե գավաթ» պանդոկը:

«Արծաթի գավաթի» տերը նստած էր իր սլանդոկի դռանը և պարապուրթյունից տաքանում էր արեգակի տակ ինչպես մի գեր կատու: Նրա մի աչքը խուփ էր, մյուսը կիսախուփ: Բայց նա հեռվից նկատեց Բորին և ձեռքով արեց, վոր իր մոտ գա:

— Մոտ յեկեք, յերիտասարդ,— ձայն տվեց նա Բորին,— գիտեմ, գիտեմ արդեն վոր ձեր ու միստր Սմիտսոնի բնավորությունները միմյանց չեն բռնել:

Բորը մանրամասն պատմեց նրան յերեկվա դեպքի մասին և պանդոկապետն, ըստ յերեկվաթիւն՝ Բորի կողմը բռնեց: Նա շարունակ կարեկցաբար շարժում էր դուռը և ասում, վոր ինքը պատրաստ է Բորին ամեն տեսակ ոգնություն ցույց տալու, իհարկե յեթե իրեն վճարեն ինչ վոր հարկն է: Բորը շնորհակալ յեղավ պանդոկապետին նրա լավ վերաբերմունքի համար և խնդրեց մի բան տա ուտելու:

«Արծաթի գավաթի» պանդոկապետը բերեց Բորի համար տաք ու փխրուն կարտոֆիլ դժակի յուղի հետ և անուշաբույր ու տաք սուրճ: Բորն ախորժակով սկսեց ուտել: Բորը դեռ չէր վերջացրել իր սուրճը, վոր պանդոկապետն ասաց, թե վատ չէր լինի, յեթե Բորը ճաշի վճարի փոխարեն մի բան նկարի «Արծաթի գավաթը» դարգարելու համար:

— Յես գեղարվեստը շատ բարձր եմ գնահատում,— պարծանքով ասաց նա:

Բորը շատ ել տրամադիր չէր նկարելու, բայց մտածեց, վոր դա ճաշի գինը վճարելու ամենալավ ձևն է: Նա իր սնդուկից հանեց թուղթ և մի կտոր ածուխ և սկսեց նկարել: Բայց նրա նկարն իր ուղածի պես դուրս չէր գալիս, պատճառը կամ շատ կուշտ ճաշած լինելն էր, կամ սաստիկ հոգնածությունը: Նրա նկարած գաղաններն անճոռնի էին, իսկ մարդիկ ավելի վատ: Յերբ մի ժամի չափ չարչարվելուց հետո Բորը սեսավ, վոր բան դուրս չի գալիս, և ուզեց թողնել այդ աշխատանքը, հանկարծ նրա աչքն ընկավ մի թուխ, գեղեցկադեմ ու սև մորուքով ջնստըլմենի վրա, վոր նստած էր պատի մոտ դրած սեղանի առաջը և շրջապատված էր իր մտերիմներով, վորոնք գարեջուր էին խմում և աշխույժվու գվարթ զրույց անում: Այդ անձանիթը լայնաթիկունք էր և արտաքուստ մի փոքր նման դարբին Տոմին: Նա «Արծաթի գավաթի» սովորական այցելուներից ավելի լավ էր հագնված:

Բորը մեքենայորեն շարժում էր ածուխը թղթի վրա: Այդ ժամանակ մոտեցավ նրան պանդոկապետն ու հարցրեց, չի՞ ցան-

կանում արդյոք մի բան ուտել: Յերբ նա Բորի ուսից վոր նստեց նկարին, հիացմունքից ու զարմանքից բարձր աղաղակեց: Նա տեսավ, վոր Բորի նկարածը հարուստ վաճառական Ջեկսոնի պատկերն է, վորը, պանդոկապետի ասելով, իր այցելությամբ այստեղ «պատիվ է արել» «Արծաթի գավաթին»:

Առանց Բորի համաձայնությունն առնելու պանդոկապետը վերցրեց անավարտ նկարը և վազելով մոտեցավ այն սեղանին, վորտեղ նստած էր այդ ջնստըլմենը, վորին նա անվանում էր վաճառական Ջեկսոն: Սեղանի շուրջը նստած ամբողջ ուրախ խումբը կուսցած նայում էր նկարին և պանդոկապետից պակաս չէր զարմանում ու հիանում: Վաճառական Ջեկսոնը տեղիցն արագ վեր կացավ և գնաց դեպի Բորը: Նա սեղանից Բորի ձեռքը և հայտնեց իր անունը:

— Յերիտասարդ,— ասաց նա Բորին,— ձեր նկարած պատկերն ինձ շատ դուր է գալիս, կուղեյի, վոր ծախեք ինձ: Ինչ գին ուզեք կվճարեմ:

— Բանը վճարը չի, միստր Ջեկսոն, այլ այն, վոր այդ նկարը յես նկարել եմ վոչ թե ինձ համար, այլ պանդոկի տիրոջ համար, այդ պատճառով յես չեմ կարող ծախել:

— Պանդոկի տիրոջ հետ յես համաձայնության կգամ, դուք հանգիստ յեղեք: Իսկ այժմ առաջարկում եմ ձեզ պատկերը վերջացնեք և մտածեք ձեր աշխատանքի համար ստանալիք վճարի մասին: Յես դեռ մի ժամի չափ կմնամ այստեղ: Համաձայն եք:

Բորը շարունակեց իր աշխատանքը և մի ժամից հետո նկարը բոլորովին պատրաստ էր: Այժմ նա ավելի ևս դուր յեկավ բոլոր ներկա յեղողներին: Պանդոկի մշտական հաճախորդները մեկ նայում էին նկարված պատկերին, մեկ՝ միստր Ջեկսոնին, կամ ընդհակառակը՝ իրենց հայացքը միստր Ջեկսոնից դարձնում էին պատկերի վրա, գովում էին Բորին և միահամուռ հայտնում իրենց հավանությունը:

— Վորքան պիտի վճարեմ ձեզ, յերիտասարդ,— հարցրեց Ջեկսոնը

Տեսնելով, վոր Բորը տատանվում է և չի իմանում ինչ ասել, նա իր ժիլետի դրպանից հանեց մի վոսկե դրամ:

— Կարծում եմ այսքանը բավական կլինի,— հարցրեց նա շփոթված Բորին, դրեց նրա ձեռքի մեջ դրամը և դուրս յեկավ պանդոկից:

Միստր Ջեկսոնի պատկերի ունեցած հաջողությունն ստի-

պեց Բոբին լուրջ կերպով մտածել իր անելիքի մասին: Նա լավ հասկանում էր իհարկե, վոր իր ամեն մի նկարի համար վտակե դրամ չի ստանա, բայց և այնպես հույս ուներ, վոր, վորպես թափառական կենդանագրող, նա կարող կլինի մի կերպ իր գլուխը պահել:

Նա գնեց նկարչական պարագաներ՝ կտավ, ներկեր ու վրձին և լի հույսով սկսեց այցելել պանդոկները՝ նկարչական արվեստի սիրահարներ գտնելու համար:

— Ձենտլմեններ, ո՞վ և ուզում ունենալ իր գունավոր պատկերը քսան ըոպեյուս: Նկարում եմ արագ և եփան, ինչպես հատուկ ե ամերիկացիներին: Ոգտվեցեք առիթից, ժամանակը թանգ ե: Այսպես եր հայտարարում Բորը պանդոկները հաճախող առևտրականներին ու գործակատարներին, վորոնք մի կես ժամով պանդոկ եյին մտնում մի քիչ բան ուտելու և մի գավաթ փրփրակալած գարեջուր խմելու:

Շտաբերն եյին ցտնկանում ունենալ եփան գնով և քսան ըոպեյուս նկարված իրենց պատկերը: Բորը նստում էր պատվիրատուի առաջ և մինչդեռ նա կում-կում խմում էր իր մի գավաթ գարեջուրը և հանգիստ գրույց էր անում իր հարևանի հետ, արագ նկարում էր նրա պատկերը: Բորը սուր տեսողութուն ուներ և պատկերը հաճախ զարմանալի նման էր լինում: Բորը հիացմունք էր պատճառում պանդոկների հաճախորդներին և համարյա վոչ մի անգամ չէր լինում, վոր պատվիրատուն անբավական մնար:

Կամաց-կամաց Բորը անուն հանեց պանդոկները հաճախողներին շրջաններում և իր աշխատանքով կարողացավ հետ պցել մի փոքրիկ գումար: Այդ գումարի մի մասը նա ուղարկեց մորը, իսկ մյուս մասով մի փոքրիկ սենյակ վարձեց, վորտեղ սարքեց իր նկարչական արվեստանոցը:

«Միտր Ռոբերտ Ֆուլտոնի» գործերը, ինչպես այժմ մեծարում եյին նրան, սկսեցին հաջող գնալ:

— Ռոբերտ Ֆուլտոնը տաղանդ ե,—ասում եյին պատվիրատուները: Մյուս նկարիչները ներկը հա քսում ու քսում են, իրենք ել են տանջվում, պատվիրատուներին ել են տանջում և հազիվ են կարողանում պատկերը նմանեցնել: Իսկ յերբ Ֆուլտոնն և նկարում, մի ժամից հետո նրա նկարած պատկերը կենդանի մարդու պես նայում ե պատվիրատուի վրա: Այ, տաղանդն այդ ե:

Ռոբերտ Ֆուլտոնի արվեստանոցը մեծ հռչակ ստացավ Ֆիլա-

դելֆիայում: Հարուստ առևտրականներն ու աստիճանավորները, նրանց զուգված ու զարդարված կանայք ու յերեխաները հաճախ կանգնած եյին լինում Ռոբերտի նկարակալի առջև: Նա շատ էր աշխատում, առավոտից մինչև յերեկո, և լավ փող էր վաստակում, բայց այդ միատեսակ աշխատանքը նրան վերջիվերջո սաստիկ ձանձրացրեց և զգվելի դարձավ: Նա վճռեց թողնել այդ հարկադրական աշխատանքը և լուրջ կերպով պարապել արվեստով, հենց վոր այնքան դրամ լինի աշխատած, վոր մոր համար մի փոքրիկ ազարակ գնի: Միսսիս Ֆուլտոնը մեկ-մեկ նրան նամակ էր գրում, և Ռոբերտը հազիվ կարողանալով կարգալ նրա խզբեզած նամակները, տեղեկանում էր, վոր իր մայրը դարձյալ զուբկ և սեփական անկյունից և առաջվա նման քարշ ե տալիս իր գառը կյանքը վորպես որավարձ աշխատավոր: Ռոբերտն սկսեց չափազանց զուբկ կյանք վարել և ավելի ևս մեծ յեռանդով կպչել աշխատանքի: Յերեք տարի անցնելուց հետո նա այնքան փող էր հավաքել, վոր կարող էր մի ազարակ գնել:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԵԾ ՍԱՐԴՈՒ ՀԵՏ

Ուրախ և զվարթ վերագարձով Ռոբերտը իր հայրենի Լիտտալ-Բրիտեյն: Ավանը համարյա չէր փոխվել՝ նույն փոքրիկ տնակներն եյին, նույն ցեխոտ ու նեղլիկ փողոցները, վորոնցով շարժվում եյին վոսկեգույն հարդով բարձած սայլերը, իսկ յերեկոյան մոտ շրջակա արոտատեղերից դեպի ավան եյին գալիս հոտերը:

Ամեն ինչ այստեղ մնացել էր նույնը, ինչպես անցյալում, այն զանազանությամբ միայն, վոր այն վայրը, ուր անց էր կացել նա իր մանկությունը, այժմ յերևում էր նրան սաստիկ փոքր, համարյա վորպես մի խաղալիք: Նրան այնպես էր թվում, վոր իրենց տնից մինչև միտր Գրեբլի ուսումնարանը տանող ճանապարհը առաջ ավելի յերկար էր: Գետը առաջ կարծես ավելի լայն էր, հենց Լիտտալ-Բրիտեյնն էլ կարծես ավելի մեծ և բազմամարդ էր...

Շուտով գտնվեց հարմար ազարակ, և Ֆուլտոնների ընտանիքը տեղափոխվեց իր սեփական տնակը, վորը շրջապատված էր մրգատու ծառերի մեծ պարտեզով, իսկ պարտեզից դեռն սկսվում էր մի անծայր դաշտավայր: Միառժամանակ Ռոբերտն անցկացրեց ազարակում, վորտեղ նա իր ընտանիքի հետ համահավասար

աշխատում եր: Բայց գյուղական միատեսակ կյանքը, վորից նախամացել եր, յերկար ժամանակ ապրած լինելով մեծ քաղաքում, ձանձրացրեց նրան և նա վճռեց վերադառնալ Ֆիլադելֆիա և այնտեղ նորից փորձել իր բախտը: Չե՞ վոր նա Ֆիլադելֆիայում անհամեմատ ավելի յեր վաստակում, այնտեղ նա շատ բարեկամներ ու ծանոթներ ուներ, իսկ վոր գլխավորն է, հույս ուներ, վոր այնտեղ ապագայում ձեռք կբերի նշանավոր նկարչի հոչակ:

Ռոբերտի նախկին դասընկերներից շատերը ցրվել էին և նրա նման գնացել էին աշխարհի զանազան կողմերը բախտ վորոնելու, իսկ նրա, վորպես քաղաքի բնակչի, և մնացածների միջև ընդհանուր վոչինչ չեր մնացել այժմ:

Յեվ ահա Ռոբերտը նորից հայտնվեց Ֆիլադելֆիայում և նորից սկսեց մարդկանց պատվերներ նկարել:

Մի որ յերեկոյան քաղաքում զբոսնելիս նա յերես առ յերես հանդիպեց մի թուխ և գեղեցկադեմ շնտալմենի:

Նրա յերեսը շրջափակված եր սև ու խիտ մորուքով: Դիմանկարչին հատուկ սուր աչքով նա իսկույն ճանաչեց, վոր այդ շնտալմենը վաճառական Ջեկսոնն է, վորի պատկերը միքանի տարի առաջ նկարելու համար առաջին անգամ վարձեր ստացել:

Միտքը Ջեկսոնին ել թվաց, վոր ծանոթ պիտի լինի Ռոբերտի դեմքը: Իսկ յերբ Ռոբերտը գլխարկը վերցնելով վողջունեց նրան ու հիշեցրեց, վոր չորս տարի առաջ իրենք հանդիպել են «Արծաթե գավաթ» պանդոկում, ուրախութեան ժպիտը ծածկեց միտքը Ջեկսոնի ամբողջ դեմքը:

— Յես յերբեք չեյի կարծի, վոր գիմանկարիչ Ռոբերտ Յուլտոնը, վորի մասին յես այդքան անգամ լսել եմ, հենց այն պատանին է յեղել, վորին յես հանդիպել եմ «Արծաթե գավաթում»,— բացականչեց նա, յերբ Ռոբերտը հայտնեց իր անունը:— Յես անչափ ուրախ եմ ձեզ տեսնելու համար և միշտ ուրախութեամբ ձեռքից յեկածը կանհմ ձեզ համար: Առաջիկա կիրակի որը շնորհ բերեք ինձ մոտ, իմ աղջկանս ծննդյան որն է և մենք ընտանեկան մի փոքր հանդես ենք սարքելու:

Միտքը Ջեկսոնը սովեց Ռոբերտին իր հասցեն և, սիրալիր կերպով հրաժեշտ տալով նրան, հեռացավ:

Ռոբերտը վոչ մի անգամ չեր յեղել այդպիսի յերեկոյթներում, վորտեղ հրավիրված հյուրեր են լինում, և անհամբեր սպասում եր կիրակի որվան: Վերջապես բաղձալի որը յեկավ և Ռոբերտը գնաց Ջեկսոնի մոտ նրա սված հասցեյով: Քաղաքի լավ

մասում, այնտեղ, վորտեղ յերկու լայն փողոցներ խաչածե կրտսրում էին միմյանց, Ռոբերտը տեսավ մի գեղեցիկ քարոշեն ու այրենազարդ տուն, վոր շրջապատված եր ծառապատենշով: Հենց այդ եր Ջեկսոնի տունը:

Վաճառական Ջեկսոնը դիմամբ եր ասել Ռոբերտին, թե մի փոքրիկ ընտանեկան հանդես են սարքելու: Իրոք դա մի մեծ ու հանդիսավոր խնճույք եր: Այդ ահագին տան բոլոր սենյակները պայծառ լուսավորված էին: Ամեն կողմ վազվզում էին սպասավորները և ձեռքներին բռնած պնակների մեջ մատուցում էին հյուրերին տեսակ-տեսակ այնպիսի խորտիկներ, վոր Ռոբերտն իր կյանքում չեր տեսել:

Չուգված ու զարդարված հյուրերը ծանրաքայլ ու սիգածեմ շրջապատում էին շքեղ կահավորված սենյակներում:

Սկզբում Ռոբերտն իրեն մի փոքր անհարմար դրուծյան մեջ զգաց: Չգուժ եր, վոր ինքն իր համեստ հագուստով չի սպասում այդ շքեղորեն պնակած հասարակութեանը: Բայց նա շուտով տիրապետեց ինքն իրեն և բոլորովին հանգիստ ու պահպանելով իր արժանապատվութունը, վողջունեց միտքը Ջեկսոնին, վորն անձամբ դիմավորում եր յուրաքանչյուր նորեկ հյուրի:

Միտքը Ջեկսոնը ներկայացրեց Ռոբերտին իր հյուրերին վորպես Ֆիլադելֆիայի տաղանդավոր նկարչի և Ռոբերտը շուտով մոտեցավ ու խառնվեց մի խումբ զրուցող տղամարդկանց:

Նա նկատեց, վոր սենյակի մի անկյունում նստած է մի բարձրահասակ ու սպիտակահեր մարդ, վորին բոլոր նորեկ հյուրերը վողջունում էին առանձին պատկառանքով: Չնայելով իր հասակին, նա շատ առույգ մարդ եր յերևում: Նա գուրեկան ու լեքլոք կերպարանք ուներ և հենց առաջին անգամ տեսնելիս Ռոբերտին նա շատ դուր յեկավ: Ռոբերտն ուղում եր հարցնել իր հարեանին այդ պատկառելի ծերունու անունը, բայց հենց այդ բողբոջին Ջեկսոնը բռնեց նրա թևից ու տարավ ծերունու մոտ: — Սա Ֆիլադելֆիայի մեր տաղանդավոր նկարիչ Ռոբերտ Յուլտոնն է:

Ծերունին սիրալիր կերպով սեղմեց Ռոբերտի ձեռքը և խոսք բաց արեց գեղարվեստի մասին: Ռոբերտը չափազանց զարմացավ, յերբ տեսավ, վոր գեղարվեստի վերաբերյալ հարցնելով ծերունին շատ իրազեկ մարդ եր:

Ծերունի շնտալմենի ունեցած գիտութուններից ապշած Ռոբերտը հարցրեց նրան:

— Ներեցեք, պարոն, յերևի դժեք ել նկարիչ եք, վոր այդչափ լավատեղյակ եք այդ արվեստին վերաբերյալ հարցնելու:

— Վհչ, սիրելիս,— քնքշաբար ժպտալով պատասխանեց ծե-
րունի ջենտլմենը,— յես նկարիչ չեմ, յես Բենիամին Ֆրանկ-
լինն եմ:

— Բենիամին Ֆրանկլինը,— զարմացած բացականչեց Ռո-
բերտը:

Մթթե ինքը բախտ ունի այժմ տեսնելու Ամերիկայի Միա-
ցյալ նահանգների մեծագույն քաղաքացուն, ութսուն տարեկան
Բենիամին Ֆրանկլինին, վոր միաժամանակ և՛ գիտնական է, և՛
փիլիսոփա, և՛ քաղաքագետ, և՛ շանթարգելի հնարողը: Ռոբերտի
հավատալը չեր գալիս, վոր ինքն արժանացել և այդպիսի բախ-
տավորության:

Ծերունի ջենտլմենն ընդհատեց Ռոբերտի այդ խոհերը իր մի-
քանի հարցումներով նրա աշխատանքների և անելիքների մասին:
Ռոբերտը պատասխանում էր ծերունուն լրջմտությամբ ու խո-
րին հարգանքով, և ըստ յերևութին, նա դուր եր յեկել մեծ մարդուն:
Խոսակցության վերջում Ֆրանկլինը հրավիրեց Ռոբերտին իր
մոտ և առաջարկեց բերել հետը իր նկարներից մի քանիսը:

— Յեթե դուք ոգնության կարիք ունենաք, յես միշտ պատ-
րաստ եմ ձեզ ոգնելու:

Այս սիրալիր խոսքերից հետո ծերունին սեղմեց Ռոբերտի
ձեռքն ու հեռացավ:

Միքանի որ անց, յերկար տատանումներից հետո, Ռոբերտը
վերջապես վճռեց այցելության գնալ Բենիամին Ֆրանկլինին:
Նա վերցրեց հետը իր լավագույն նկարներից մի քանիսը և գնաց
մեծ ամերիկացու տունը: Բենիամին Ֆրանկլինն ընդունեց յերի-
տասարդ Ֆուլտոնին մտերմաբար, ինչպես իրեն հավասար մեկին
և հրավիրեց նրան իր աշխատանքի ահագին առանձնասենյակը,
վորտեղ ամեն կողմ դրված էին զանազան ու բազմատեսակ ֆի-
զիկական գործիքներ և գրքերով լիքը պահարաններ: Նա հար-
ցուփորձ եր անում Ռոբերտին նրա հայրենիքի ու ծնողների մա-
սին, և այն մասին, թե ինչով է նա մտադիր պարապելու կյան-
քում: Ռոբերտը քաշվելով բաց արեց իր խայտաբղետ նկարները:

— Ձեր նկարները վատ չեն, բարեկամս,— ասաց ծերու-
նին,— բայց յես կցանկանայի միքանի գիտողություններ անել:
Կարծում եմ՝ անոգուտ չեն լինի ձեզ համար իմ գիտողություն-
ները: Թույլ կտամք, բարեկամս:

— Իհարկե, պարոն, յես ձեզ անչափ շնորհակալ կլինեմ,—

բացականչեց Ռոբերտը, հիշելով այդ զարմանալի ծերունու ցու-
ցաբերած ահագին գիտությունը միտար Ջեկսոնի յերեկույթում:

— Ուրեմն լսեցեք,— ասաց Ֆրանկլինը,— յես շատ եմ ճամ-
բորդել աշխարհում, յեղել եմ Փարիզի, Լոնդոնի և յելլոպական
մյուս մեծ քաղաքների պատկերասրահներում: Այցելել եմ շատ
նկարիչների արվեստանոցները և տեսել եմ նշանավոր արվես-
տագետների վրձինով նկարած շատ նկարներ: Յեվ թեև համա-
րյա վոչ վոքի չեմ ճանաչել այն մարդկանցից, վորոնց կենդա-



նազրեղը տեսել եմ, բայց և այնպես այդ կենդանագրերը ինձ
ապշեցրել են իրենց զարմանալի գեղարվեստականությամբ: Իս-
կական գեղարվեստագետ-կենդանագրողի արժանիքն այն չե
միայն, վոր նրա նկարը նման լինի, այլ այն, վոր նայողին
զգացնել տա գեղեցկությունը...

Ռոբերտն առաջին անգամն էր իր կյանքում լսում այդպիսի
խոսքեր գեղանկարչության մասին: Մինչ այդ նա այն կարծի-

քին եր, վոր գեղանկարչուց լուկ մի միջոց ե փող դատելու
և աղքատութիւնից աղատվելու համար: Բայց այդ գարմանակի
ծերունին բացեց նրա առաջ այնպիսի գաղտնիքներ, վորոնք
մինչ այդ անհայտ եյին նրան, և Ռոբերտն զգում եր, վոր նրա
ասածներէ մեջ ապշեցուցիչ ճշմարտութիւն և խորութիւն կա:
Ռոբերտն այժմ միայն հասկացավ, թե վորքան պակասութիւններ
են յեղել անցյալում իր կատարած աշխատանքների մեջ և աշ-
խատում եր վոչ մի խոսք չմոռանալ Յրանկլինի ասածներից:

— Ուրեմն այդպէս, սիրելի բարեկամ,— շարունակեց Յրանկ-
լինը,— դուք ել ձեր աշխատանքում պետք ե զնաք մեծ գեղար-
վեստագետների ուղիով: Միայն այդպէս վարվելով դուք կարող եք
վորեն հետևանքի հասնել: Ամերիկայում դժբախտաբար խոշոր
գեղարվեստագետներ չկան, վորոնց մոտ դուք կարողանայիք մի
բան սովորել: Յեթե կամենում եք, յես կարող եմ ձեզ հանձնա-
բարկան նամակ տալ իմ բարեկամ նկարիչ Ուետսի անունով,
վոր ապրում և Լոնդոնում: Նրանից դուք շատ բան կսովորեք:

Ռոբերտը չեր իմանում, ինչպէս շնորհակալ լինի Յրանկլի-
նին և վճռեց առանց հետաձգելու վարվել նրա խորհրդի համա-
ձայն և մեկնել Անգլիա այն ժամանակ հռչակավոր Ուետսի մոտ:

Յրանկլինը ճարեց Ռոբերտի ճանապարհածախսի համար
հարկավոր դրամը և 1786 թվին Ռոբերտ Փուլտոնը, վորի 21
տարին նոր եր լրացել, յերեքկայսի «Ամերիկա» նավով ճա-
նապարհ ընկավ դեպի հեռավոր Անգլիա:

Յ. ԼՈՆԴՈՆՈՒՄ

Ահա և «հին, ուրախ Անգլիան», ինչպէս վաղուց իվեր կո-
չում եյին նրան, ահա նա, Իրլանդիայի՝ Ռոսերտի հոր հայրենի-
քի հարևանուհին, վորից նա ստիպված ե յեղել հեռանալու ան-
վերջ կտրիքից ու սովից հարկադրված: Միթե դեպի յերիտասարդ
ամերիկացին ել այդ քույր-կողմներն այնքան անսիրտ կլինեն,
ինչպէս յեղել են դեպի նրա հայրը:

Առավոտյան խիտ մառախուղի միջից նշմարվում եր ափե-
րի աղոտ ուրվագիծը: Նավն արագացրեց իր ընթացքը հողմած
ճամբորդի պէս, վոր հեռվից տեսնում ե իր հայրենի բնակարա-
նը: Ճամբին ավելի ու ավելի հաճախ եյին պատահում մեծ առա-
գաստանավեր և փոքրիկ ու խալոտ ձկնորսական մակուկներ,
ավելի ու ավելի նշմարելի յեր դառնում անգլիական տփը:

Վերջապէս մտան Անգլիայի մայրաքաղաք Լոնդոնի նավա-
հանգիստը:

Ռոբերտն առաջին անգամն եր տեսնում իր կյանքում նա-
վերի, ձկնորսական նավակների ու մակուկների այդպիսի բազ-
մութիւն: Նավաստիները կայմապարաններով վեր եյին բարձ-
րանում վայրի կատունների պէս: Վոմանք ել նավեզրում կանգնած՝
ձխամորձները բերաններին ծխում եյին, զրույց եյին անում ու
քարձք ծիծաղում: Ժամանակ առ ժամանակ ել մեկ այս կողմից,
մեկ այն կողմից լսվում եր նավապետների ու բոցմանների
բարձրաձայն հրամանը: Բարձում և բեռնաթափում եյին նա-
վերը: Գեղեցիկ տեսք ունեյին սպիտակ առագաստներով առա-
գաստավորված բարձր նավերը, վորոնք ակոսել եյին անսահման
ծովեր: Կառուցվող նավերի կմախքները կանգնած եյին նավաշի-
նարաններում, վորպէս բնաջինջ յեղած անդրջրհեղեղյան կեն-
դանիների կմախքներ: Կացինների ու մուրճերի անվերջանալի
դարկերը, արհեստավորների բարձրաձայն կանչերը և առհասա-
րակ այդ հսկայական նավաշինարանների աշխատանքային աշ-
խույժ աղմուկը հմայիչ ազդեցութիւն եր գործում Ռոբերտի վրա,
այդ պատճառով նա ափսոսելով հեռացավ նավահանգստից և
գնաց քաղաք նկարիչ Ուետսին վորոնելու: Մի ժամ անցած նա
արդեն նստած եր Ուետսի արվեստանոցում:

Արվեստանոցը լիքն եր նկարակաշներով, գեղեցիկ նկարնե-
րով, պատկերներով և անավարտ ուրվանկարներով: Գլխներին սև
գլխարկ դրած Ուետսի աշակերտները վոչ մի ուշադրութիւն
չդարձրին Ռոբերտի գալու վրա և կենտրոնացած շարունակում
եյին իրենց աշխատանքը:

Հռչակավոր նկարիչն ուշադրութեամբ կարգաց Յրանկլինի
նամակը և հայտնեց իր համաձայնութիւնը սովորեցնելու Ռոբեր-
տին նկարչական արվեստը: Այդ ժամանակներն Անգլիայում գեռես
շարունակվող հին սովորութեան համաձայն աշակերտներն ապ-
րում եյին իրենց ուսուցիչ նկարչի տանը, ճաշում եյին նրա հետ
միասին և առհասարակ լիովին գտնվում եյին նրա խնամքի տակ:

Յրանկլինի տված դրամը Ռոբերտին հաղիվ հազ բավակա-
նացրեց ճանապարհածախսի համար, ուստի և Ռոբերտը ուրա-
խութեամբ մտավ Ուետսի աշակերտների շարքը:

Ռոբերտը շատ շուտով ընտելացավ իր նոր կյանքին և բա-
րեկամացավ թե ուսուցչի և թե աշակերտների հետ: Պատահաբար
չեր յեղել, վոր Բենիամին Յրանկլինն ուղարկել եր նրան հատ-

կապես Ուետսի մոտ: Ուետսը հայտնի նկարիչ եր և լավ մարդ էր մեծ ուշադրութեամբ եր վերաբերվում զեպի Ռոբերտը և աշխատում եր վորքան կարելի յն շատ գիտութիւն սովորեցնել նրան:

Այժմ միայն Ռոբերտը հասկացավ, թե վորքան վատ ե յեղել աշխատելիս ինքն Ամերիկայում: Նա կատարում եր Ուետսի բոլոր խորհուրդները և իր ամբողջ ժամանակն անց եր կացնում արվեստանոցում, միքանի ժամ միայն նվիրելով ուտելուն ու քնելուն: Հաճախ Ուետսը համարյա ուժով եր հեռացնում նրան նկարակալից և ստիպում ընթրել և զրոսնել:

Ռոբերտը մեծ հառաջադիմութիւն արեց այն միքանի ամիսների ընթացքում, վոր նա անց եր կացրել Ուետսի արվեստանոցում: Բայց և այնպես, յերբ նա համեմատում եր իր գործերը Ուետսի լավագույն աշակերտների գործերի հետ, տեսնում եր, վոր իր նկարները շատ ու շատ վատ են նրանց նկարներին:


Յերեք-չորս ամիսը մեկ անգամ աշակերտների նկարները ցուցահանդես եր լինում արվեստանոցում: Գալիս եյին նայելու Ուետսի բարեկամները, գեղարվեստագետները և պատվիրատուները: Նայում, զննում եյին նրանք նկարները և քննադատում: Աշակերտներն առանձնապես մեծ յեռանդով եյին պատրաստվում այդ ցուցահանդեսներին մասնակցելու համար:

Այդպիսի ցուցահանդեսներից մեկի համար ել պատրաստեց իր նկարը Ռոբերտը: Նկարը կախված եր աչքի ընկնող և լավ լուսավորված տեղում, բայց Ռոբերտը դառնացած սրտով նկատեց, վոր հյուրերն անցնում են իր նկարի մոտով վոչ մի ուշադրութիւն չդարձնելով նկարի վրա: Մի անգամ ել նա նույնիսկ լսեց Ուետսի բարեկամ մի նկարչի հեգնական նկատողութիւնն իր նկարի մասին:

Ցուցահանդեսը փակվելուց հետո արվեստանոցում զեռ յերկար ժամանակ խոսակցութիւններ եյին լինում նկարների մասին, և այդ խոսակցութիւնների ժամանակ Ռոբերտը վոչ մի խոսք չլսեց վոչ իր և վոչ ել իր նկարների մասին:

Ասենք՝ նա ինքն ել այժմ հասկանում եր, վոր գեղարվեստական ազդանդից զուրկ ե: «Այն, ինչ վոր գուր եր գալիս թեքակիրթ ամերիկացիներին, իրոք խղբզանք եր, արհեստավորութայց վոչ արվեստագետի գործ եր», վճռեց ինքը Ռոբերտը, և վորպես համարձակ և ուղղամիտ մարդ՝ նա շուտով արեց իր վերջին յեզրակացութիւնը, վճռեց փոխել իր պարապմունքը:

Լոնդոնը զեռ այն ժամանակները, այսինքն սրանից մոտ հարյուր հիսուն տարի առաջ, ահագին և համաշխարհային միջադաք եր: Լոնդոնում շատ կային թատրոններ և բալագաններ, վորտեղ լոնդոնցիները հաճույքով հաճախում եյին և վորտեղ



ինքը Ռոբերտն ել սիրում եր հաճախել իր հեռավոր հայրենիքում:

Նա հաճախ հիշում եր Յիլզեյլֆիայի աղմկալի և խայտաբղետ շուկան, ձեռնածուներին, թովիչներին, լարախաղաց-

ներին: Բայց այժմ այդպիսի տեսարանները նրան համարյա
ամենևին չեյին հետաքրքրում:

Հաճախ Լոնդոնում բոքսյորական մրցումներ եյին կազմա-
կերպվում Անգլիայի խոշորագույն չեմպիոնների միջև: Չկար մի
լոնդոնցի, վոր չցանկանար ներկա լինել այդ մրցումներին: Այն
ժամանակ բոքսյորները չեյին կռվում այնպես, ինչպես այժմ,
չեյին կատարում յերիքական շրջան, ինչպես ընդունված ե այժմ,
այլ կռվում եյին մինչև կատարյալ հաղթանակ, մինչև նոկաուտը,
մինչև վոր բոքսյորներից մեկը դեռին տապալվի և անկարող
լինի բարձրանալու սահմանված ժամանակի ընթացքում: Լոն-
դոնցիները շատ եյին սիրում այդ դաժան տեսարանները, բայց
այդ ել Ռոբերտի սրտովը չեր: Նրան բոլորովին այլ բաներ եյին
գրավում այժմ: Ռոբերտը փոքր հասակից սկսած նկարչությու-
նից զատ չափազանց հետաքրքրվում եր նաև բարդ խաղալիքներ-
րով և սրամիտ ու բարդ հորինվածք ունեցող մեխանիզմներով:
Նա սիրում եր կազմալուծել խաղալիքները և յերբեմն ինքն ել
եր շինում շատ տարրինակ ու բարդ բաներ: Ֆիլադելֆիայում
յեղած ժամանակ, յերբ նա մեծացել եր, հաճախ գնում եր նայե-
լու, թե ինչպես են աշխատում մեքենագետները: Յեվ այժմ Ռո-
բերտը վճռելով թողնել գեղանկարչությունը, իր ամբողջ ուշա-
դրությունը նվիրեց մեքենագիտությանը:

Անգլիան այն ժամանակ ամենաարդյունաբերական յերկիրն
եր աշխարհում: Լոնդոնում շատ կային գործարաններ ու արհես-
տանոցներ: Իհարկե այդ գործարանները քիչ նմանություն
ունեյին մեր ներկա գործարաններին: Բայց այն ժամանակ Ռոբեր-
տը շատ բան կարող եր սովորել այդ գործարաններում: Առանձ-
նապես Ռոբերտին հետաքրքրում եր մեքենաների ու հաստոցնե-
րի կառուցվածքը:

Քանի դեռ Ռոբերտի դրամը չեր վերջացել, նա առավոտ-
վանից մինչև յերեկո շրջում եր Լոնդոնի գործարաններում և
դիտում այնտեղ կատարվող աշխատանքները: Նա իր սուր աչ-
քերով մանրամասնորեն դիտում և ուսումնասիրում եր մեքենա-
ների ու հաստոցների կառուցվածքը. նրա նկարչական հմտու-
թյունը զուր չեր անցել: Նա ուշի-ուշով նկարում եր իրեն համար
հետաքրքիր մեքենաները կամ նրանց մասերը: Այդ գործը կա-
տարում եր նա շատ արագ ու հաջող և յերեկոնները տուն վե-
րադառնալուց հետո ուշադրությամբ ուսումնասիրում եր այդ
նկարները:

Այդպես շարունակվեց այնքան ժամանակ, մինչև վոր վերջա-
ցավ նրա փողի մնացորդը: Բայց Ռոբերտը հաստատապես վճռե-
լու, ինչ ել լինի, այլև յերբեք չզբաղվել պիմանկարներ նկարո-
ղի արհեստով, այլ զբաղվել միայն մեքենագիտության ուսում-
նասիրությամբ: Ինչպես մի ժամանակ Ֆիլադելֆիայում նա
յերգվել եր չվերադառնալ Լիտտլ-Բրիտեյն, մինչև վոր մի ար-
հեստ չսովորի, նույնպես ել այժմ նա վճռեց չվերադառնալ հայ-
րենիք, մինչև վոր չուսումնասիրի մեքենագիտությունը և հաջո-
ղություն ձեռք չբերի այդ ասպարեզում:

Մեքենագիտությունն ուսումնասիրելու համար պետք եր
մտնել գործարան կամ արհեստանոց: Ռոբերտը միջանի անգամ
գիմեց գործարանների և արհեստանոցների տերերին, վոր ընդու-
նեն նրան իրենց մոտ աշխատելու, բայց ամեն անգամ մերժում
ստացավ: Նրանք ասում եյին, վոր իրենց հարկավոր են հմուտ
մեքենագետներ և վոչ նորավարժներ: Այն ժամանակ Ռոբերտը
վերջնականապես հրաժարվեց արվեստագետի իր նախկին կյան-
քից և վճռեց մտնել վորևե գործարան վորպես հասարակ բանվոր:

9. ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ՄԵՔԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵՋՈՒՄ

Լոնդոնում Ռոբերտին չհաջողվեց գործարան մտնել, այդ
պատճառով նա տեղափոխվեց մի ուրիշ խոշոր արդյունաբերական
քաղաք՝ Բիրմինհամ: Այդտեղ մոտ յերեք տարի նա աշխատեց
գործարաններում ու մեծ յեռանդով ուսումնասիրեց զանազան
տեսակ բարդ մեքենաների ու հաստոցների կառուցվածքը: Նա
քանդում եր մեքենաների մասերը մինչև ամենափոքրիկ մաս-
նիկները և նորից հավաքում ու սարքում եր նրանց, յերբ ման-
րամասնորեն ու հանգամանորեն ուսումնասիրած եր լինում նրան-
ցից յուրաքանչյուրի դերն ու փոխադրեցությունը միմյանց վրա:
Նա չեր բավականանում միայն այդ մեքենաների ուսումնասիրու-
թյամբ, այլև աշխատում եր նրանց կատարելագործել ու բարե-
լավել: Նա շարունակ բարենորոգումների նորանոր ծրագրեր եր
առաջարկում արհեստավորներին, վորոնք զայրանում եյին և
լսել անգամ չեյին ուզում նրան:

— Խելքիդ շատ զուր մի տա, յերիտասարդ,— ասում եյին
նրանք,— շահել ես դեռ, լավ կանես, վոր սուս ու փուս գործդ
կատարես և շատ չխոսես:

Յեվ Ռոբերտը ստիպված եր լինում լուս ու մուսջ կատա-
րել իր աշխատանքը:

Բայց ահա ճի անգամ, յերբ Ռոբերտը դադարեց ի մոտ կանգնած աշխատում եր, յերեք հոգու ուղեկցութեամբ, վորոնք ձեռքներին գծանկար ու չափիչներ ունեյին, արհեստանոց մտալ արհեստանոցի տերը: Ռոբերտը տեսալ, վոր դրանցից մեկը՝ ավելի հասակավորը՝ մեքենագետն է, վորն առաջները յերկու-յերեք անգամ յեղել եր արհեստանոցում և խելացի խորհուրդներ եր տվել արհեստավորներին և բանվորներին:

Յերեքն ել սկսեցին չափել, շոշափել և թխթխկացնել Ռոբերտի կողքին գտնվող մեքենան: Այդ մեքենան, ինչպես պետք եր յեզրակացնել այդ յերեքի խոսակցութուններից, աշխատելիս ե յեղել ընդհատումներով, պետք եր իմանալ ու վերացնել պատճառը: Մեքենագետները մի կես ժամվա չափ սնտղեցին մեքենան և արհեստանոցի տիրոջը խոսք տվին հետևյալ որը մեքենան ուղղել ու կարգի բերել:

Հետևյալ որը մեքենագետները արհեստանոց յեկան վաղ առավոտյան: Նրանք համբերութեամբ աշխատում եյին գտնելու ընդհատումներով աշխատելու պատճառը, յերբեմն նրանց նույնիսկ թվում եր, թե պատճառն արդեն գտնված ու վերացված ե: Բայց հենց վոր մեքենան գործի եյին գցում, յերեք-չորս րոպե աշխատելուց հետո նորից սկսում եր խզզալ և այնպիսի ձայներ հանել, ինչպես մորթվող խոճկորը, մինչև վոր վերջիվերջո բոլորովին կանգ եր առնում:

Մեքենագետներն ամբողջ որն աշխատեցին, վտտից մինչև գլուխ յուղոտվեցին ու փոշոտվեցին, բայց մեքենան ուղղել չկարողացան:

Հետևյալ որերն ել նրանց գործը հաջող չանցալ: Մեքենան կամակոր յերեխայի պես վոչ մի կերպ չեր ուզում ուղղվել: Յերեկոյան դեմ յեկալ արհեստանոցի տերը և ծաղրեց մեքենագետներին:

— Ե՛հ, պարոն մեքենագետներ, ինչպես տեսնում եմ, այս գործը դուք գլուխ բերողը չեք:

Մեքենագետները մեղավոր կերպով ժպտացին և խոստացան, ինչ ել լինի, մեքենան շտկել:

Բայց հինգերորդ օրվա առավոտը նրանք ստիպված յեղան խոստովանելու, վոր իրենք անկարող են այդ մեքենան ուղղել:

— Այս մեքենան վոչ մի կերպ չի կարելի ուղղել, — ասաց զայրացած ավագ մեքենագետը: — Այսպես կարելի յե մի ամբողջ ամիս չարչարվել: Կարծես կախարդված լինի:

— Լա՞քն այն ե՛ թողնենք, — հայտնեց իր համաձայնութեամբ յերկրորդ մեքենագետը, — կարծես իրոք կախարդված լինի: Յերրորդ մեքենագետը վոչինչ չասաց, միայն գլուխը քորեց: Նրանք յերեքն ել ձեռքները մեկնեցին, վոր դիտարկները վերցնեն:

— Պարոն մեքենագետներ, — հանկարծ լսեցին նրանք մի յերիտասարդ արհեստավորի ձայնը, վոր այդ ամբողջ ժամանակ ասու ու փուս աշխատում եր չարաբախտ մեքենայի կողքին, — թույլ տվեք ձեզ մի խորհուրդ տամ:

Գլխավոր մեքենագետը զարմացած ու կասկածանքով վտտից մինչև գլուխ նայեց Ռոբերտին:

— Ասա՛ տեսնենք ինչես ասում, — բացահայտ արհամարհանքով ասաց նա:

— Դուք, հարգելի մեքենագետներ, մեքենայի փչացած մասը այնտեղ չեք փնտռում, վորտեղ պետք ե, — բարձրաձայն ասաց Ռոբերտը: — Դուք կարծում եք, վոր փչացել են գլանն ու ատամնավոր անիվը, բայց շատ սխալվում եք: — Յերեք մեքենագետներն արհամարհական քմծիծաղ տվին: — Աշխատանքը խափանողն այն է, վոր անիվն ու լծակն ուղիղ չեն ամրացրած միմյանց:

— Ի՛նչ ես գլխիցդ դուրս տալիս, — ասաց ավագ մեքենագետը, և յերեքը միասին դիմեցին դեպի դուռը:

— Յես գլխիցս դուրս չեմ տալիս, պարոն մեքենագետ, յեթե չեք հավատում ինքներդ նայեցեք:

Մեքենագետները տարակուսանքով հետ նայեցին: Ռոբերտն արագ ու ճարպիկ կերպով հետ պտտեց անիվն ու լծակը միմյանց կապող պտուտակները, վայրկենապես վազեց հարևան սենյակը և մեջտեղը կլոր ծակով յերկաթե մի թիթեղ բերեց: Հետո նա թիթեղը դրեց պտուտակների տակ, ամրացրեց և լծակը շատ քիչ իր տեղիցը շարժեց: Դրանից հետո Ռոբերտը մեքենան գործի գցեց: Մեքենագետներն ավելի մոտեցան և թշնամական անվստահութեամբ հետևում եյին Ռոբերտի բոլոր գործողութուններին:

Անցալ հինգ, տաս, տասնհինգ րոպե: Մեքենան աշխատում եր առանց աղմուկի և առանց ընդհատումների: Չեր լավում վոչ վզզոց և վոչ ճռռոց: Մեքենագետները բերանները բաց կանգնած նայում եյին:

— Տեսնում եք, պարոն մեքենագետներ, վոր յես ճիշտ եյի ասում, — ասաց հաղթական ձայնով Ռոբերտը: Յես ամբողջ ժամանակ ուշադրութեամբ հետևում եյի ձեր աշխատանքին, իսկ յերբ

դուք գնում եյիք, ինքս եյի ուսումնասիրում այդ մեքենան: Յեւ շատ չարչարվեցի, մինչև յեկա այն յեզրակացության, վոր դուք ֆնասովածությունը այնտեղ չեյիք վորոնում, վորտեղ պետք եր: Այդ համոզմանը գալուց հետո յես սկսեցի վորոնել ուրիշ տեղ և ինչպես հիմա տեսաք, գտա,—վերջացրեց իր խոսքը Ռոբերտը և ուրախ ժպտաց:

Գլխավոր մեքենագետը ազնիվ և արգարամիտ մարդ եր: Նա սեղմեց Ռոբերտի ձեռքը, մյուս մեքենագետներն ևլ հետևեցին նրա օրինակին:

— Դուք մեքենագիտության մեջ ընդունակություն ունեք՝ յերիտասարդ,—ասաց գլխավոր մեքենագետը Ռոբերտին,—յեկեք մի յերեկո ինձ մոտ, մի քիչ խոսենք:

Ռոբերտը յերեկոներն սկսեց այցելել գլխավոր մեքենագետին: Նա շատ լավ հասկանում եր, վոր թեև մեքենագետները մի դեպքում սխալվել ու հաղթվել եյին, բայց և այնպես նրանք իրենց գիտությամբ ու փորձառությամբ անհամեմատ ավելի բարձր են, քան ինքը, և ուրախ եր, վոր նրանցից կարող ե գեռ շատ բան սովորել: Գլխավոր մեքենագետի մոտ նա ծանոթանում ե նաև ուրիշ մեքենագետների և կառուցողների հետ: Ռոբերտը բոլորին դուր եր գալիս իր քաղցրաբարո ու կենսուրախ բնավորությամբ, ինչպես և լուրջ վերաբերմունքով դեպի իր աշխատանքը: Նրանք շատ քիչ եյին պատահել այդչափ յերիտասարդ և միաժամանակ այդպես խելացի ու հաստատակամ մեքենագետի: Թեև նա գեռ ջահել եր՝ ընդամենը քսանչորս տարեկան, նրա խորհուրդներին ականջ եյին դնում հասակավոր և փորձված մարդիկ:

Այդ ժամանակները մեքենագիտությունն Անգլիայում շատ հարգի յեր: Ահագին թվով սիրողներ իրենց ազատ ժամանակը նվիրում եյին մեքենագիտությանը: Գոյություն ունեյին մինչև անգամ մեքենագետների հատուկ ընկերություններ:

Այն ժամանակվա նշանավոր մեքենագետների մեջ առանձնապես աչքի եյին ընկնում դուքս Բրիջոուտերը և կոմս Ստենգոպը: Նրանք շատ սիրում եյին և լավ գիտեյին այդ գիտությունը:

Յերիտասարդ և շնորհալի ամերիկացի Ռոբերտ Ֆուլտոնի ժամանակ լուրերը հասան Բրիջոուտերի և Ստենգոպի ականջին և այդ յերկու նշանավոր մեքենագետները հետաքրքրվեցին նրանով: Նրանք ծանոթացան Ռոբերտի միջանի բարեփոխումներին,

վոր նա կատարել եր գործարանային մեքենաների մեջ, և գտան, վոր այդ բարեփոխումները շատ կարևոր են:

Հենց առաջին անգամ Ռոբերտին տեսնելիս նրանք համոզվեցին, վոր յերիտասարդ ամերիկացին բնականից շատ ոժտված անձնավորություն և, միայն կրթություն չունի: Նրանք անկեղծորեն ասացին Ռոբերտին, վոր նա վոչ մի հաջողություն չի ունենա, յեթե ինքնակրթությամբ չաշխատի ձեռք բերել մեքենագետի համար անհրաժեշտ գիտությունը: Միայն մաթեմատիկայի ու տեսական մեքենագիտության ուսումնասիրությամբ նա կարող կլինի հաջողության հասնել: «Իսկ այդ գիտություններով զբաղվելու համար,—ասում եյին նրանք,—ամենահարմար տեղը Լոնդոնն և»:

Ռոբերտը լսեց Բրիջոուտերի ու Ստենգոպի խորհուրդը և ուղեվորվեց Լոնդոն: Այստեղ նա հույս ուներ թե ապրելու և թե ուսանելու այն գրամով, վոր նա կարողացել եր հավաքել զանազան գործարաններում իր կատարած յեռամյա աշխատանքով:

Յեով այդպես, Ռոբերտ Ֆուլտոնը, վորն արդեն քսանչորս տարեկան հասակն առած մարդ եր, սկսում եր ուսանել ինչպես մի գպրոցական: Աշխատում եր նա յեռանդով ու ջանասիրությամբ: Նա ապրում եր մի փոքրիկ ու աղքատիկ սենյակի մեջ քաղաքի գործարանային մասում և իր ունեցած համարյա բոլոր դրամը ծախսում եր գրքեր ու գծագրական պարագաներ գնելու համար:

Լոնդոնում ընակություն հաստատելուց քիչ ժամանակ անցնելուց հետո Ֆուլտոնը պատահամբ ծանոթացավ իր հայրենակից Ռամզեյի հետ: Այդ ծանոթությունը մեծ դեր խաղաց Ֆուլտոնի կյանքում: Այդ ժամանակ Ռամզեյը փորձեց եր անում գործընդհանրապես նավագնացության մեջ: Յերբ նա իմացավ, վոր Ֆուլտոնը մեքենագետ և և միևնույն ժամանակ իր հայրենակիցն և, սիրով ընդունեց նրան և խոսք բաց արեց իր սիրած գործի՝ շոգենավարկության մասին:

Այդ ժամանակներում մի շարք յերկրներում փորձեց եյին անում, թեպետ և անհաջող, ոգտագործելու գործը ու յոյժը նավագնացության համար: Ռամզեյը ջերմորեն սիրում եր Ամերիկան և համոզված եր, վոր շոգենավարկությունը կդարձնի նրան հարուստ արդյունաբերական յերկիր:

Այդ եր պատճառը, վոր նա մի առանձին յեռանդով եր ձեռք առնում գործնականապես իրականացնելու իր գաղափարը:

Ռամզեյի խոսքերը հրապուրում էյին Ֆուլտոնին: Յերբ նա առաջին անգամ լսեց Ռամզեյից գոլորշու ույժը նավարկութեան համար գործադրելու գաղափարի մասին, ամբողջ եյությամբ դմայվեց: Նա կարծես հանկարծ նոր նպատակ գտավ: Նրան նույնիսկ թվաց, վոր իր ամբողջ առաջվա կյանքը, իր բոլոր հաջողութեաններն ու անհաջողութեանները միայն նրա համար էյին, վոր նրա հոգուն ույժ ու կարողութեան ներշնչեյին այդ մեծ գաղափարն իրականացնելու համար: Այժմ նա ուր գնում էր, ինչ անում էր, մտածում էր միայն մի բանի մասին՝ գոլորշու ույժը նավարկութեանը ծառայեցնելու մասին: Նա հասկանում էր, վոր այդ գյուտարարութեանը, յեթև միայն իրագործվի, մի նոր դաքաղուէս պիտի բաց անի մարդկութեան պատմութեան մեջ, հսկայական զարկ պիտի տա առևտրական փոխարարներութեանը զանազան յերկրների միջև և իր հայրենիքը հարուստ, բարեպալած յերկիր պիտի դարձնի:


Յերբեմն, յերբ քամի չեր լինում, Ֆուլտոնը նավահանգստի ծովափին կանգնած տեսնում էր վաղորդեան մշուշի մեջ նավերի բարձրաբերձ կայմերն ու առագաստները, վորոնք անշարժ կախ էյին ընկած, ինչպես վիթխարի ու հոգնատանջ թռչունների թևեր: Յե՛վ Ֆուլտոնն ինքն իրեն խոսք էր տալիս, վոր այսուհետև իր կյանքի միակ նպատակը պիտի լինի կենդանացնել այդ մտայլ յերամբ գոլորշու հզոր շնչով: Մտքով թափանցելով վոչ հեռավոր ապագան, Ֆուլտոնը տեսնում էր հողմերի քմահաճույքից ազատ և մարդու կամքի համաձայն շոքեմեքենայի ույժով շարժվող նավերի անազին տորմիդները:

10. ՖՈՒԼՏՈՆԻ ՆԱԽՈՐԴՆԵՐԸ

Առաջին հերթին Ֆուլտոնն սկսեց ուսումնասիրել գոլորշու ույժը նավարկութեան համար գործադրելու փորձերի պատմութեանը: Նա ուզում էր իմանալ, թե ինչ վիճակի յեն արժանանացել իր նախորդները: Նա գիտեր, վոր գյուտները միանգամից չեն լինում, այլ յուրաքանչյուր գյուտարարութեան հետևանք է գյուտարարների միքանի սերունդների աշխատանքների:

Յե՛վ անա նրա առջևով անցնում է տխուր մի շարան ձախողակների, վորոնք կանխել են իրենց ժամանակը և զուր տեղը ջանացել իրականացնելու իրենց գաղափարը այնպիսի պայմաններում, յերբ ինքը մեքենագիտութեանը, վորպես գիտութեան, ղեռն սղմային դրութեան մեջ է յեղել:

Նա իմացավ, վոր 1543 թ. իսպանական նավատորմի կապիտան Վլասկո Դե-Գարեյը առաջարկել է Կարլոս V-ին մի այնպիսի նավ կառուցել, վոր կարող է շարժվել հանդարտ ջրի վրա առանց թիկերի ու առագաստների: Դրանց փոխարեն նա առաջարկել է գործադրել իր հնարած մեքենան: Իրոք, այդպիսի մի նավ շինում են Իսպանիայի Բարսելոն քաղաքում: Բայց թե ինչպես է շինված յեղել կապիտան Դե-Գարեյի նավը, Ֆուլտոնը չկարողացավ իմանալ, վորովհետև չէյին մնացել վոչ գծանկարներ և վոչ էլ նավի քիչ թե շատ մանրամասն նկարագիրը: Հայտնի չէ միայն, վոր մեխանիզմի կազմի մեջ յեղել է յերկու մեծ անիվ նավի յերկու կողմերում և մի կաթսա յեռացող ջրով: Համենայն դեպս այդ մեքենան ևս հիմնված է յնղել գոլորշու ույժը գործադրելու գաղափարի վրա:



Հարյուր տարուց ավելի անցնելուց հետո Միլլեր անունով մեկը առաջարկել է նավի տախտակամածի վրա հողմացույց կառուցել, վորի թեվերին ամրացրած թուղի միջոցով շարժել տալ թիակավոր անիվները:

Պատմութեան կա նաև մի տարրինակ մարդու մասին, վորն իր զբոսանավի վրա շինել է տվել մէ անազին փուքս: Գամի չեղած ժամանակ նա փորձել է քամի առաջացնել իր փուքսի ոգնութեամբ: Նախ իհարկե տեղից չի շարժվել:

Բայց անա 1690 թվին մեքենագիտութեան մեջ մի լուրջ գյուտարարութեան է կատարվում: Ֆրանսիացի Դենի Պապենը հնարում է մի մեքենա, վորի մեջ գոլորշու ույժով շարժվում է մխոցը: Այդ մեքենան հնարողի անունով կոչվում է «Պապենի կաթսա», վորի մանրամասն նկարագրութեանը կարելի չէ գրանել ֆիզիկայի ամեն մի դասագրքում:

Այդ առաջին հաջողութեանները չեն գոհացնում Պապենին

և նա անդուլ կերպով աշխատում է ավելի ևս կատարելագործելու իր մեքենան: 1705 թվին նա վճռում է գործադրել իր մեքենան նավարկութան համար և կառուցում է մի նավակ, վորը շարժվում է գոլորշու ուժով:

Պապենն իր փորձերը կատարում էր Ֆուլդա գետի վրա, բայց նավակավարները, յերկյուղ կրելով մրցումից, շարժում են նրանավակը, և խեղճ Պապենը միջոցներ չունենալու պատճառով անկարող է լինում մի յերկրորդ այդպիսի նավակ շինել:

Նույն թվին, յերբ Պապենի նավակը վոչնչացրել էին Ֆուլդա գետի վրա, անգլիացի մեքենագետ Նյուկոմենը կատարելագործում է Պապենի շոգեմեքենան. իսկ 1736 թվին անգլիացի Ջոնատան Հոուլը, իր հերթին ոգտվելով Նյուկոմենի մեքենայով, կառուցում է անիվավոր նավ, վորը շարժվում էր առանցքին ամրացրած հորովակի միջով անց կացրած փոկերի ցանցի ոգնությունը: Իսկ հորովակները դարձնողը շոգեմեքենան էր: Սակայն Ջոնատան Հոուլի փորձերն էլ, վորոնք թեև ավելի հաջող էին, քան առաջինները, նույնպես անկարող յեղան լուծելու շոգու ուժը նավարկութան համար կիրառելու խնդիրը:

Այդ բոլոր անհաջողությունների պատճառը Պապենի և Նյուկոմենի շոգեմեքենայի անկատարելությունն էր. նա գեռ չափազանց թույլ էր և վոչ միայն նավ, այլ նույնիսկ մի նավակ անգամ չէր կարող շարժել: Այդ էր պատճառը, վոր Փարիզի գիտությունների ակադեմիան 1753 թվին պարզեցրեց մաթեմատիկոս Դանիել Բեռնուլլիի աշխատությունը, վորի մեջ նա շատ ճշգրիտ ու պարզ ձևով ապացուցել էր, վոր յեթե ոգտվելու լինեն Նյուկոմենի սխառեմի մեքենայով, վոչ մի գեպքում մի ժամում չորս կիլոմետր արագությունից գենը չեն անցնի:

Մրանից անշուշտ պետք էր գալ այն յեզրակացություն, վոր մեքենագետների ամբողջ ուշադրությունը պետք է ուղղված լիներ նոր, ավելի կատարելագործված շոգեմեքենա ստեղծելու ուղղությամբ:

Յեով այդպիսի մի մեքենա հնարեց մեծ մեքենագետ ու գյուտարար Ջեյմս Ուատտը:


Ուատտը շոգու ուժը վերջնականապես և լիովին յենթարկեց մարդու կամքին: Շոգեմեքենան դադարեց սրամտորեն կառուցված մի խաղալիք լինելուց և դարձավ գիտական հիմունքներով ճշգրիտ կառուցված մի մեխանիզմ:

Նոր շոգեմեքենան նավարկութան համար կիրառելու չա-

փազանց հետաքրքիր փորձ է անում Փրանսիացի Կլոդ Ժոֆֆրուան: Նրա կազմած ապարատը բաղկացած էր Ուատտի մեքենայից և մի տեսակ «թաթավոր» թիերից: Ժոֆֆրուայի մեքենան ահագին մեծություն ուներ, իսկ այն նավը, վորի վրա սարքված էր նրա հնարած ապարատը, ընդամենը վեց մետր յերկարություն ուներ:

1783 թվին Լիոն քաղաքում փորձարկեցին այդ նավը և նա քառորդ ժամ գնաց հոսանքի դեմ: Ֆրանսիական կառավարությունն առաջարկեց Ժոֆֆրուային կրկնել իր փորձը Փարիզում Սենա գետի վրա:

Ժոֆֆրուան գնաց Փարիզ այնտեղ մի նոր նավ կառուցելու համար: Նա իր ամբողջ կարողությունը ծախսեց փորձեր կատա-



րելու համար: Բայց այդ ժամանակ բռնկեց Ֆրանսիական հեղափոխությունը: Ամբողջ Յեվրոպան վտոջի յելավ ապստամբ Ֆրանսիական ժողովրդի դեմ և վոչ վոք այլևս չէր հետաքրքրվում Ժոֆֆրուայի փորձերով:

Անա մի անհաջողակ ևս, մեծ դազափար կրող մի մարդ էս, վոր կարծես կանգնած էր արդեն հաջողության շեմքին...

Միաժամանակ շոգեշարժ նավի պահանջն որեցոր ավելի ու ավելի հրամայական էր դառնում:

Բամիների քմահաճույքից կախված առագաստավոր նավերը,

վորոնք դժվարութեամբ եյին դիմադրում ծովային հոսանքներին, ալեւ անկարող եյին սպասարկել մեծ թափով զարգացող առևտուրը աշխարհիս մեծ յերկրների միջև: Ովկիանոսի մյուս կողմում ծնունդ էր առել մի նոր մեծ յերկիր՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները, վոր նոր էր ազատվել Անգլիայի տիրապետութեանից: Այդ յերկիրն առանձնապես հարուստ էր հումքով, Յեվրոպայի հետ անխափան առևտրական հարաբերութեաններ պահպանելու համար նա կարիք ունէր արագընթաց և մեծ բեռ վերցնող նավերի, վորոնք կախում չունենային վոչ քամուց և վոչ ծովային հոսանքներից:

1784 թվին Միացյալ Նահանգների առաջին նախագահ Գեորգ Վաշինգտոնին համարյա միաժամանակ ներկայանում են յերկու ամերիկացիներ՝ Յիչը և Ռամդեյը, այն մարդը, վորն իրավունքով կարողացավ վոզեորել Ֆուլտոնին և շոգեհավ հնարելու գաղափարի մոլեռանդ կողմնակից դարձնել նրան: Նրանցից յուրաքանչյուրն առաջարկում էր կառուցել այնպիսի նավեր, վորոնք կարող են գնալ շոգու ուժով: Բայց Միացյալ Նահանգները կառավարութեանը հրաժարվում է նրանց առաջարկներն ընդունելուց, վորովհետև չէր հավատում այդ անմիտ նախագծերի իրագործմանը:

Այն ժամանակ Յիչը կազմակերպում է արդյունաբերական մի ընկերութեան և կառուցում է շոգեշարժ մի նավակ: Այդ նավակին միացրած էյին առանձին ձևի թեճակներ ու թիաբերաններ, վորոնք շարժվում էյին շոգեմեքենայի հետ միացրած փոկերի միջոցով:

Նավակը լողում էր գետի վրայով ժամը հինգ կիրովետ արագութեամբ, բայց մեքենաները համարյա յուրաքանչյուր ժամ փչանում էյին և ամեն անգամ պետք էր լինում շատ ժամանակ կորցնել և դրամ ծախսել մեքենան շտկելու համար: Արդյունաբերական ընկերութեանը ձանձրանում է այդ անհաջող ու անվերջանալի փորձերից և նա հրաժարվում է շարունակել փորձերը: Յիչը մեկնում է Ֆրանսիա:

Ռամդեյը նույնպես հեռացավ Ամերիկայից և մեկնեց Անգլիա: Այնտեղ նա լավ ընդունելութեան գտավ և մինչև անգամ միջոցներ տվին նրան շարունակելու իր փորձերը: Բայց յերբ թեճագ գետի վրա իջեցրած նրա շոգեշարժ նավակը մնաց անշարժ, բոլորը յերես դարձրին նրանից:

Չնայած այդ բոլոր անհաջողութեաններին, գոլորշու ուժով

նավարկութեան համար գործադրելու գաղափարը վերջնականապես հասունացել էր: Կային նրա իրագործման բոլոր նախադրյալները, բայց չկար միայն այն անձը, վոր ամփոփեր իր մեջ այն հատկութեանները, վորոնք անհրաժեշտ էյին այդ գաղափարը կենսագործելու համար:

Աշխարհի լավագույն մեքենագետները համառ կերպով պարպում էյին այդ խնդրի լուծումով: Կարծես մի տեսակ մրցում էր ստեղծվել թե տեսնենք՝ ով առաջինը կկարողանա լավագույն կերպով գործադրել Ուատտի շոգեմեքենան նավարկութեան համար:

Ֆուլտոնը վճռեց, վոր հենց ինքն է այն մարդը, վորը կոչված է շոգեշարժ նավի գաղափարն իրագործելու և հավիտյան իր անունը դրոշմելու մեծագույն գյուտարարութեանների պատմութեան մեջ:

11. ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼՈՒԴՈՆՈՒՄ

Այն ժամանակ, յերբ ամերիկացի Ռամդեյը Լոնդոնում հուսահատութեանից ու վշտից մահվան դուռն էր հասել, նրա գաղափարի իրականացումն իր վրա վերցրեց դուքս Ստենգոպը, վորը շնորհիվ իր հարստութեան յերկյոթը չունէր նորանոր փորձեր կատարելուց:

Նա կառուցեց մի նավակ, վրան հարմարեցրեց թաթավոր ապարատներ և Ֆուլտոնին հրավիրեց տեսնելու ապարատը և հայտնելու իր կարծիքը:

Նավակը գտնվում էր Թեդմա գետի վրա: Ֆուլտոնը Ստենգոպի ներկայութեամբ սկսեց տնտղել ապարատը: Ստենգոպը լուռ և անհանգիստ սրտով հետևում էր նրան: Վերջապես Ֆուլտոնը մանրամասնորեն ուսումնասիրեց ամբողջ ապարատը մինչև ամենավերջին պտուտակը:

Հը, ինչպե՞ս է, Ֆուլտոն,—հարցրեց դուքս Ստենգոպը, նավակը կգնա թե վոչ:


— Յես շատ ցավում եմ, Ստենգոպ...—քիչ լսելուց հետո ասաց Ֆուլտոնը, վորը մեղավորի պես աչքերը ցած գցած կանգնած էր ինչպես հանցանքի մեջ բռնված մի դպրոցական:—Յես շատ ցավում եմ, բայց պետք է ուղղակի ասեմ, վոր նավակը չի գնա:

Ստենգոպի դեմքի վրա նկատվեց սառն ինքնավստահութեան արտահայտութեան:

— Իսկ ինչո՞ւ եք այդպէս կարծում, միտքը Ֆուլտոնը:

— Ինքս ել յերկար ժամանակ հետազոտել եմ թաթափոր ապարատը,—պատասխանեց Ֆուլտոնը,—և համոզվել եմ, վոր նրանից բան դուրս չի գա: Բացի այդ, թաթափոր ապարատով շատ ե գրադվել ու շարժարվել նաև ֆրանսիացի ժոֆֆրուան, վորը նույնպէս վոչ մի գրական հետեանքի չի հասել:

— Ժոֆֆրուայի և ձեր արածից կարող եր վոչինչ դուրս չգալ, իսկ իմ արածից—դուք շուտով կհամոզվեք,—վոր դուքս կգա:



Ֆուլտոնը տարակուսած թոթվում ե ուսերը:

— Այ, յեթե դուք թաթափոր ապարատը փոխարինեյիք թաթափոր անիմներով, այն ժամանակ բոլորովին ուրիշ բան կլինեք:

— Թաթափոր անիմներն ամենևին բանի պետք չեն,—գրգռված ընդհատում ե նրա խոսքը Ստենդուպը:

Միքանի վայրկյան անբարյացակամ լուռթյուն ե տիրում նրանց միջև:

— Բայց և այնպէս, Ստենդուպ,—նորից ապում ե Ֆուլտոնը,—թաթափոր անիմները...

Բայց Ստենդուպը նորից ընդհատեց նրան, ասելով՝

— Լսեցեք, Ֆուլտոն, յես յերբեք չեմ հրաժարվի իմ թաթափոր ապարատից: Փոխարինել այդ ապարատը տխմար թաթափոր անիմներով, ինչպէս յեթե յես մի գյուղական սայլ շինելիս վինեյի, այդ նույնը կլինեք, յեթե վոսկին փոխարինեյիք փոշիով: Յես ձեզ ասում եմ, վոր նավակը կգնա:

— Ձեր գործն ե, Ստենդուպ, բայց յես համոզված եմ, վոր չի գնա: Հաջողություն եմ ցանկանում, Ստենդուպ:

Ֆուլտոնը յերեսը շուռ տվեց և ափ դուրս յեկավ: Ինքս Ստենդուպը յերկար նայեց նրա հետեից: «Ախ, այդ ամերիկացի ազարակատերերը», մտածեց նա զայրո ցած:


Հասավ փորձարկման օրը:

Յեվ բանից դուրս յեկավ, վոր ամերիկացի ազարակատերերից վոմանք շատ լավ հասկացողություն ունեն մեքենագիտությունից: Մեքենան ցնցվում ե, ծուխը քուլա-քուլա դուրս ե ժայթքում ձխնիլույզից, թաթափոր ապարատը շփացնում ե ջրին, բայց դուքս Ստենդուպի նավակը, ինչպէս և գուշակել եր Ֆուլտոնը, մնում ե անզուրկ անշարժ կանգնած և վոչ մի մտք առաջ չի գնում:

Անգլիայում կային և շատ ուրիշ անձեր, վորոնք Ստենդուպի նման փորձեր եյին անում գոլորշին ոգտագործելու նավարկության համար, բայց նրանք բոլորը նույնպէս անհաջողության են հանդիպում: Այդ բոլոր անհաջողություններից հետո անգլիացիք այլևս չեյին հավատում, վոր կարելի յե գոլորշին ոգտագործել նավարկության համար: Բնական ե, վոր Ֆուլտոնն ել, վոր հենց այդ ժամանակ եր մշակել շոքեշարժ նավի իր նախագիծը, հանդիպեց անխորտակելի ու դաժան խոչընդոտի. վոչ անգլիական կառավարությունը և վոչ ել մասնավոր անձեր՝ հարուստները չեյին ցանկանում նրան գրամ տալ: Վոմանք հավատացած եյին, վոր Ֆուլտոնը խաբերա յե և ուզում ե միայն գրամ կորզել, մյուսները, վորոնք մոտ ճանաչում եյին Ֆուլտոնին, նրան համարում եյին թեև ազնիվ, բայց յերազամուլ մարդ:

Վորքան նա աշխատում եր համոզել Լոնդոնի հարուստներին, վոր իրեն փող տան պարտք շոքեշարժ նավ կառուցելու համար, վորքան նա հավատացնում եր նրանց, վոր ապագայում մեծ շահ կունենան գրանից, նրան պատասխանում եյին ծաղրով և ամենքից նա մերժում եր ստանում:

— Ձեռք քաշի, Ֆուլտոն, ախար ո՞վ ե տեսել կամ լսել, վոր



նավը զնա թեյնիկի ոգնությամբ:—Այսպես եյին պատասխանում ամենքը Փուլտոնին:

Թեյնիկ ասելով նրանք հասկանում եյին յեռացող շոգեկաթսան:

Յերբ Փուլտոնը տեսավ, վոր վոչ մի կերպ չի կարող համոզել Լոնդոնի համառ հարուստներին, նա դառնացած սրտով վորոշեց հետաձգել սխառժամանակ իր փայփայած գաղափարի իրագործումը: Բայց միայն հետաձգել, վորովհետև Փուլտոնը չեր կարող

յերևակայել, վոր յերբևիցե կարող ե հրաժարվել այդ գաղափարից: վորն այժմ նրա կյանքի միակ նպատակն եր:

Փուլտոնը, վոր անընդհատ զբաղվում եր ինքնակրթությամբ, այդ ժամանակ քաղաքացիական կառուցումների լավագույն ճարտարագետի մեծ համբավ ունեւր Լոնդոնում: Նա կազմում եր ջրանցքների նախագծեր, կառուցում եր ճանապարհներ, ջրմուղներ, յերկաթե կամուրջներ: Հին ձեով աշխատող ճարտարագետներից նա զանազանվում եր նրանով, վոր մշտապես ձրգտում եր նորանոր կատարելագործումներ ու բարելավումներ մտցնել իր գործերի մեջ:

Նա առաջարկեց անգլիական կառավարությանը ոգտակար կատարելագործումներ կիրառել ջրանցքներ անց կացնելու գործում, բայց անգլիական կառավարութիւնը չընդունեց նրա առաջարկը: Հետագայում նրա առաջարկած յեղանակով մեծ հաջողությամբ ջրանցքներ են փորել Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Այնուհետև Փուլտոնը հնարեց մարմարը սղոցելու և հղկելու հատուկ մեքենա: Նա կառուցեց նաև վուշն ու կանեփը մանելու, ինչպես և պարաններ վտրելու մեքենա:

Այդ բոլոր գյուտարարությունները շատ ոգտավետ և արժեքավոր բաներ են յեղել իր ժամանակի համար և մի շարք գիտական ընկերություններ ավել են Փուլտոնին պատվո գրեր: Բայց վոչ մի արդյունաբերող չի ցանկացել իրականացնել Փուլտոնի նախագծերը: Նա պարզ տեսնում եր, վոր Անգլիայում անկարող կլինի իրականացնել վոչ միայն շոգենավ կառուցելու իր հիմնական գաղափարը, այլև իր յերկրորդական գյուտերը, վորոնց ոգտավետութիւնը ակներև եր ամեն մի վողջամիտ մարդու համար:

1796 թվի աշնանը Փուլտոնը թողնում ե անբարեհամբույր ու մշուշապատ Անգլիան և մեկնում Ֆրանսիայի մայրաքաղաքը Փարիզ:

12. Փ Ա Ր Ի Զ Ո Ւ Մ

Աշնանային մի ցուրտ որ Փուլտոնը թողեց Անգլիան: Խիտ մառախուղը պատել եր թեմզա գետը և Լամանշ նեղուցը: Նավի տախտակամածի վրա կանգնած՝ Փուլտոնն աշխատում եր վորքան կարելի յե լավ ծածկվել իր թիկնոցով ու պաշտպանվել ցրտից և շատ ախուր խոհեր եյին անցնում նրա մտքով: Նա մտածում եր,

վոր անա տասը տարի յե անցել արդեն, ինչ ինքը հեռացել է հայ-
րենի Ամերիկայից: Յեվ ինչի՞ տեր է դարձել այդքան ժամանակվա
ընթացքում: Ճշմարիտ է, նա այժմ լավ քաղաքացիական ճար-
տարապետ է և շատ բան գիտի մեքենագիտությունից: Բայց չէ՞
վոր նրա վոչ մի գյուտարարությունը չի կենսագործվել, իսկ նրա
ամենանշանավոր գյուտը՝ շոգենավը յերազմովի ու դատարկա-
բանի համբավ է ստեղծել նրա համար: Դառնացած սրտով եր
հեռանում Ֆուլտոնն Անգլիայից:

Յերբ ճանապարհորդական կռեթում նստած՝ Ֆուլտոնը մտե-
նում էր Փարիզին, նա փոքր ինչ գվարթացավ և նավում նրան
ճնշող խոհերը կամաց-կամաց ցրվեցին: Այդ անգին քաղաքն ամ-
բողջովին լուսավորված էր աշնանային արևի ջերմ ու շեղ ճառա-
գայթներով: Ֆուլտոնը դիտում էր Փարիզի փողոցային բազմու-
թյունը և ինքնիրեն մտածում, թե վորքան նման չի նա Լոնդոնի
բազմությանը: Լոնդոնցիներին Ֆուլտոնը նմանեցնում էր ծանրա-
բարո, խստաբարո ու լուսկյաց պինգվիներին, վորոնց նա մի
անգամ տեսել էր մի թռչնասեր գիտնականի մոտ: Իսկ Փարիզցիք
ընդհակառակը սրտաբաց էին, աղմկարար ու շատախոս, ինչպես
կաշաղակը:

Ինակություն հաստատելով Փարիզում, Ֆուլտոնը վճռեց նախ
քաղաքացիական ճարտարապետի աշխատանքով պարապել: Նա
առաջարկեց Ֆրանսիական կառավարությանը և հարուստ վաճա-
ռականներին ջրանցքների ցանցով միացնել միմյանց Ֆրանսիայի
գլխավոր գետերը: Ջրանցքները պետք է նպաստեին յերկրի
զանազան մասերի միջև հաղորդակցության բարելավմանը:

Ֆուլտոնին պատասխանեցին, վոր նա անհարմար ժամանակ է
անում իր առաջարկը ջրանցքներ կառուցելու մասին, վորով-
հետև Ֆրանսիայի մղած անընդհատ պատերազմներն ամբողջ Յեվ-
րոպայի դեմ կլանում են գանձարանի համարյա բոլոր միջոցները:
Խաղաղ աշխատանքների ու նախագծերի ժամանակ չե այժմ:
Հաջողություն կարող են ունենալ միայն այնպիսի նախագծեր,
վորոնք կնպաստեն Ֆրանսիայի ռազմական հզորությունը ավելի
ևս ուժեղացնելուն:

Այդ ժամանակ, այսինքն 18-րդ դարի վերջերին, Անգլիան
բոլոր ծովերի տեր ու տիրակալն էր: Ոգտվելով իր ծովային
հզորությունից, Անգլիան իրավունք էր համարում իրեն՝ զննելու
բոլոր մյուս լերկրների հանդիպած նավերը: Շատ հաճախ, յերբ
անգլիական ռազմանավերը պատահում էին ոտարերկրյա նավերի՝

հրամայում էին նրանց կանգ առնել, և անգլիացի սպանիբը խու-
զարկում էին այդ նավերը: Յերբ ոտարերկրյա մի նավում ռազմա-
մթերք էին գտնում, նրանք իրավունք ունեյին առանց այլե-
վայլության «բռնագրավելու» այդ նավը, այսինքն՝ պարզապես
հափշտակելու հոգուտ Անգլիայի:

Յերիտասարդ հանրապետությունները՝ Ֆրանսիան և Ամերի-
կայի Միացյալ Նահանգները մեծամեծ դիմաներ էին կրում
անգլիական նավատորմի այդ կամայականությունից:

Ֆուլտոնը շատ էր սիրում իր հայրենիքը և նրան վրդովեց-
նում էր Անգլիայի այդ վարժունքը: Նա վաղուց ի վեր մտածում
էր, վոր իր գյուտը թույլ նավատորմների համար կարող է ծառա-
յել վորպես հուսալի զենք անգլիացիներին ծովային լծից ազատ-
վելու համար մղած պայքարում:

Ֆրանսիան այդ ժամանակ բարեկամական հարաբարություն-
ներ ուներ Միացյալ Նահանգների հետ: Անկախության համար
մղած պատերազմի ժամանակ նա մինչև անգամ ոգնում էր Միա-
ցյալ Նահանգներին Անգլիայի դեմ: Այդ պատճառով Ֆուլտոնը
վճռեց Ֆրանսիական կառավարությանն առաջարկել իր խոշորա-
զույն հնարումներից մեկի՝ սուզանավի նախագիծը:

Այդ ժամանակ Ֆրանսիական կառավարությունը գլխավորում
էր այսպես կոչված դիրեկտորիան: Ֆուլտոնն իր առաջարկը ներ-
կայացրեց դիրեկտորիային, բայց նրա առաջարկը դարձյալ հաջո-
ղություն չունեցավ: Նախագիծը համարվեց անիրագործելի, և այդ
հիման վրա մերժեցին նրան նպաստ տալ:

Բիչ ժամանակ անց Ֆուլտոնը նորից դիմեց դիրեկտորիային
և նույնիսկ ներկայացրեց պատրաստի մոդել: Այս անգամ խոս-
տացան ավելի ուշադրությամբ ծանոթանալ մոդելին և միջոցներ
տալ սուզանավ կառուցելու համար:

Անցնում էին որբեր, շաբաթներ. Ֆուլտոնը շարունակ գնում-
զալիս էր ծովային մինիստրություն, ժամերով դուր տեղը ման
էր գալիս մինիստրության միջանցքներում, բայց բոլորովին ապար-
քյուն: Յերկար քաջըլուններից հետո ծովային մինիստրությունը
վերջապես պաշտոնապես հայտնեց, վոր նրա առաջարկը մերժված է:

Դրանից հետո Ֆուլտոնը վորոշեց Հոլլանդիա գնալ և այնտեղ
անել իր առաջարկը, բայց այնտեղ էլ նա արժանացավ կատա-
բյալ անտարբերության և ստիպված յեղավ նորից վերադառնալ
Փարիզ:

Փարիզում Ֆուլտոնը ծանոթացավ ամերիկացի բանաստեղծ

ու գիւղումս Բառլոուի հետ, վորը մի շատ զվարթ, ամրակազմ
և աշխատունակ մարդ էր: Նա շատ դուր յեկավ Ֆուլտոնին:
Բառլոուն նույնպես սկզբից ևեթ լավ կարծիք կազմեց Ֆուլտոնի
մասին՝ վորպես տաղանգավոր մեքենագետի և լավ մարդու, և
շուտով նրանք բարեկամացան: Բառլոուն տեսնելով Ֆուլտոնի
միայնակութունը, առաջարկեց նրան տեղափոխվել իր մոտ:
Ֆուլտոնն ուրախութեամբ համաձայնեց:

Բառլոուի տանն ապրելը շատ ոգտավետ յեղավ Ֆուլտոնի
համար: Բառլոուն կենսուրախ մարդ էր և յերբ տխուր ու ծանր
մտածմունքները պաշարում էին Ֆուլտոնին, Բառլոուն նրան միշտ
սիրտ էր տալիս: Միաժամանակ նրա ձեռքից ամեն բան գալիս էր:
Նա և՛ վոտանավորներ էր գրում, և՛ առևտուր էր անում, և՛ կատա-
րում էր Միացյալ Նահանգների գանազան գիվանագիտական
հանձնարարութունները:

Ֆուլտոնը միշտ զարմանում էր, թե ինչն է պատճառը, վոր
այդքան շատ բարեկամներ ու ծանոթներ ունի Բառլոուն:

Փրանսիայի ականավոր քաղաքական գործիչները, գիտնական-
ները, ճարտարագետները, գրողները՝ բոլորը ապաստան և հյու-
րնկալութուն էին գտնում Բառլոուի տանը: Հենց վոր Ֆուլտոնը
խոսք էր բաց անում մի վարեկ նշանավոր մարդու մասին, Բառլոուն
խսկույն ևեթ ժպտալով պատասխանում էր՝ «Նա իմ մոտ բարե-
կամն է»:

Յերբ յերեկույթներ էին լինում Բառլոուի հյուրընկալ տանը,
Ֆուլտոնը ծանոթանում էր այն ժամանակվա նշանավոր մարդկանց
հետ: Այդ ծանոթութունները Ֆուլտոնին ցույց էին տալիս, թե
վորքան ընդարձակ է գիտութեան բնագավառը և դեռ վորքան
քիչ էր իր գիտեցածը:

Յեվ ահա, յերեսուն մեկ տարեկան Ֆուլտոնը նորից սկսեց
լուրջ կերպով պարապել: Առանձնապես նա ծանրանում է մաթե-
մատիկայի, ֆիզիկայի, մեքենագիտութեան ու քիմիայի վրա: Նա
մեծ ուշադրութեամբ լսում էր Բառլոուի գիտնական բարեկամ-
ների խորհուրդներն ու ցուցումները և հիմնավորապես ուսումնա-
սիրում այդ գիտութունները:

Ֆուլտոնը ամբերիկացի յեր և լավ գիտեր միայն մի լեզու՝ անգ-
լերենը, վորով խոսում են Ամերիկայում: Բայց այժմ նա հաս-
կացավ, վոր միայն անգլերեն լեզվով բան չի դուրս գա: Կային
ներա համար կարևոր շատ ու շատ գրքեր՝ մաթեմատիկային, ֆիզի-
կային, մեքենագիտութեանը և քիմիային վերաբերող, վորոնք

գրված էին ուրիշ լեզուներով: Յեվ Ֆուլտոնն սկսեց սովորել
յեվրոպական նոր լեզուները՝ ֆրանսերեն, գերմաներեն, իտա-
լերեն: Այդ լեզուներն իմանալը շատ մեծ չափով ոգնեց Ֆուլտո-
նին նրա հետագա աշխատանքների ժամանակ:

Բառլոուի մոտ անցկացրած յոթը տարիները համառ ուսման
և գիտական աշխատանքների տարիներ էին նրա համար:

13. ՍՈՒՋԱՆԱՎ

Այդ ժամանակ Փրանսիայում իշխանութունն իր ձեռքն էր
տուել գեներալ Նապոլեոն Բոնապարտը: Նա անվերջ պատերազմներ
էր մղում դանազան պետութունների դեմ և չափազանց թշնամա-
կան էին նրա հարաբերութունները Անգլիայի հետ, վոր շնորհիվ
իր հզոր նավատորմի ամեն կերպ տսպալում էր Փրանսիայի ծո-
վային առևտուրը:

Ֆուլտոնն այդ ժամանակը հարմար դատով Նապոլեոնին սուզա-
նավի նախագիծն առաջարկելու համար, վորը նրա կարծիքով կարող
էլիինի վճռական դեր կատարել Նապոլեոնի մղած պայքարում անգ-
լիական նավատորմի դեմ:

Նապոլեոնն ընդունեց Ֆուլտոնի առաջարկը և նշանակեց հա-
տուել հանձնաժողով, վորը պետք է քննիր սուզանավի նախագի-
ծը: Այդ հանձնաժողովի մեջ կային այն ժամանակվա Փրանսի-
այի ամենանշանավոր գիտնականներից մի քանի հոգի: Իրանց
թվումն էին մաթեմատիկոս և աստղաբաշխ Լապլասը, պատմաբան
Վոլտերը, մաթեմատիկոս Մոնտը:

Հանձնաժողովը Ֆուլտոնի նախագիծը ուշի ուշով քննելուց
հետո շատ լավ կարծիք հայտնեց նրա մասին: Ֆուլտոնին միջոցներ
հատկացրին սուզանավը կառուցելու համար, և նա յեռանդով
գործի կապվ:

Սուզանավի առաջին փորձարկումը Ֆուլտոնը կատարեց
1800 թվին, սակայն այդ փորձն անհաջող անցավ: Նավա-
կը սուզվելուն պես ընկավ հատակի վրա ու մնաց անշարժ:

Այդ անհաջողութունը չհիասթափեցրեց Ֆուլտոնին և քիչ
ժամանակ անց նա յերկրորդ փորձը կատարեց:

Մի արեվոտ որ մեղմ քամին սրորում էր ջրի վրա մի տա-
րորինակ նավակ, վորը պիտի սուզվեր ջրի տակը և լողար սառը
կիսախավարում:

Ֆուլտոնը խնամքով զննեց իր կառուցած նավակը, հրաժեշտ



ավեց ավուժ կանգնած իր բարեկամներին և իր նավաստիի հետ մտավ իր նավակի մեջ: Նա տեսավ, թե ինչպես կապույտ յերկընքի մի շերտիկ վերջին անգամ յերեկաց ու անհայտացավ նրա աչքից, յերբ պինդ փակվեց նավակի մուտքի անցքը:

Նրա ականջին հասնում էին ավին կանգնած իր բարեկամների խուլ ձայները և նավակի պատյանին խփվող պինդ թուկի հարվածները, սակայն բավական եր, վոր բացթանեյին անցքի կա-

փարիչը, նորից կերևար յերկնքի կապույտ շերտիկը և արեգակի ճառագայթները կծակեյին նրանց աչքերը: Լծակը շուռ տալուն պես նավակը սաստիկ ցնցվեց և Ֆուլտոնին այնպես թվաց, թե իր վտանների տակ շարժվում է հատակը: Նա հասկացավ, վոր նավակը սուզվում է ջրի տակ:

Այլևս չեյին լսվում բարեկամների ձայները և չեր կարելի բաց անել անցքի կափարիչը՝ կապույտ յերկընքը և վոսկեվառ արևը տեսնելու համար: Սրտամաշ և ճնշող լուռթյուն տիրեց նավակի մեջ: Ֆուլտոնը հիշեց, վոր մի ժամանակ Յեգիպտոսում վտանգավոր հանցագործներին կենդանի-կենդանի թաղում էյին քարե պատեր շարելիս: Յերևի այդ հանցագործներն էլ նույն դժգոհումն էյին ունենում, ինչ վոր ինքն ուներ այժմ:

Նրանք յերկուսով էյին նավակի մեջ՝ Ֆուլտոնն ու նավաստին, և վերից ու վարից, աջից ու ձախից, հետևից ու առջևից շրջապատված էյին նրանք բազմամետր հաստություն ունեցող ջրային զանգվածով: Մեկ-մեկ նրանք մի յերկու խոսք էյին ասում միմյանց, վորպեսզի գեթ մի վայրկյան ընդհատեն այդ ճնշող լուռթյունը և մարդկային հաճելի ձայն լսեն:

Անցավ մոտ քսան րոպե: Դժվար էր շունչ քաշել Ֆուլտոնը վճռեց, վոր քսան րոպեն էլ բավական է առաջին փորձի համար և նորից դարձրեց լծակը: Նավակն արագությամբ բարձրացավ ջրի յերեսը:

Յերբ նավաստին բաց արեց անցքը, միջորեյի արեգակի ճառագայթները ծակեցին նրանց աչքերը և կապույտակ յերկնքի սովորական տեսարանը խորապես հուզեց նրանց:

Ֆուլտոնը գլուխը դուրս հանեց անցքից: Մեծ ուրախություն էր համակել նրան: Շատ հեռվում նշմարեց միքանի սև բծեր, վորոնք մերձափնյա դեղին ավազի վրայով մոտենում էյին դեպի ինքը, դրանք Ֆուլտոնի բարեկամներն էյին, վորոնք նկատել էյին ջրի յերեսը բարձրացած նավակը և այժմ շտապում էյին սեղմելու Ֆուլտոնի ձեռքը և շնորհավորելու նրա հաղթանակը:

Այդպես ուրեմն, Ֆուլտոնը առաջինը մարդկային պատմության մեջ փորձով ապացուցեց ջրի տակովը նավարկելու հնարավորությունը: Անցավ ավելի քան հարյուր տարի, մինչև վոր Ֆուլտոնի գաղափարը, ծառայելով վորպես մղիչ պատճառ տասնյակ դյուտարարների դարևոր աշխատանքների համար, իր կատարյալ իրականացումն ստացավ ներկայիս սուզանավերի կառուցումով:

Ֆրանսիական կառավարութիւնն իր աչքով տեսավ և համոզուեց, վոր Ֆուլտոնի կառուցած նավակը կարող է լողալ ջրի տակով և նպաստ տվեց նրան շարունակելու իր փորձերը:

Անցավ մի տարի ևս: Ֆուլտոնն անխոնջ կերպով աշխատում էր և շատ կարեւոր կատարելագործութեաներ էր մտցնում իր սուզանավի մեջ: Հետագա փորձերը կատարվիցին Հավը և Բրեստ քաղաքներում ու շատ հաջող անցան: Մեկ անգամ Ֆուլտոնն իր սուզանավի մեջ մնաց չորս ժամ, իսկ սուզանավը ջրի յերես դուրս յեկավ սուզվելու տեղից 25 կիլոմետր հեռու:

Բայց միաժամանակ յերեւման յեկան Ֆուլտոնի կառուցած սուզանավի յերկու խոշոր պակասութիւնները: Առաջինը՝ շատ դժվար էր ուղածին պես այն զեկավարել, յերկրորդը, վոր ավելի կարեւոր էր Նապոլեոնի համար, նա չէր կարող պետք գալ թշնամու նավերի դեմ կռվելու համար:

Ֆուլտոնը դիմեց Նապոլեոնին և խնդրեց նորից նպաստ տալ իրեն՝ փորձերը շարունակելու համար, բայց Նապոլեոնը կտրակապեց սեղանի վրայ:

—Մի տարի առաջ,—ասաց Նապոլեոնը,—այդ ամերիկացի յերազմուրը խոստանում էր այնպիսի սուզանավ կառուցել, վոր կարող է ջախջախել անգլիական նավերը: Իսկ գործնականում տասը քաջարի նավորդներով սովորական ձկնորսական մի նավակ ավելի վտանգավոր է անգլիական նավի համար քան այդ սուզանավը:

14. ԴԱՇԻՆՔ ԼԻՎԻՆԳՍՏՈՆԻ ՇԵՏ

Ինչպես յերևում էր, հաջողութիւնը միշտ փախուստ էր տալիս Ֆուլտոնից: Հենց վոր նա մտաեցած էր լինում հաջողութեանը, այդ հաջողութիւնն կոչվածը, ինչպես վախեցած թռչնակ, պոկ էր գալիս տեղից ու թռչում: Իսկ անհաջողութիւնն աներես հյուսիս պես որ չէր անցնում, վոր նրա շեմքին կանգնած չլիներ:

Անուրախ մտքերը պաշարում էին Ֆուլտոնին: Անգլիայում անհաջողութիւնն ունեցավ նրա ծրագրած շոգենավը, Ֆրանսիայում՝ սուզանավը: Ֆուլտոնն սկսեց մտածել հայրենիք վերադառնալու մասին:

Ամբողջ ուրերով խորասուզված էր լինում նա գրքերի ու գծանկարների մեջ, յերեկոները նրա մեջքը ցավում էր, աչքերում յերևում էին յեղին ու նարնջագույն շրջանակներ, գլու-

խը հոգնում էր: Ֆուլտոնը փողոց էր դուրս գալիս գրասենյակի փոքր ինչ զվարճանալու: Յերբեմն նա գնում էր ամերիկյան դեսպանատուն: Մոտենալով դեսպանատանը՝ նա տեսնում էր ահագին փողփողացող դրոշակը՝ վրան նահանգների թվով աստղեր: Այդ մոտիկ անցյալում անգլիական իշխանութիւնից ազատված յերիտասարդ հանրապետութեան դրոշակն էր:

Դեսպանատանը Ֆուլտոնը հաճախ հանդիպում էր իր հայրենակիցներին, վորոնք նոր էին յեկել Միացյալ Նահանգներից: Ֆուլտոնը ազահորեն հարց ու փորձ էր անում իր հայրենիքի մասին, վորտեղից նա հեռացել էր շատ տարիներ առաջ: Հայրենակիցների պատմութիւնները նրա հիշողութեան մեջ վերածնունդ էին հայրենի ավանի՝ Լիտտլ-Բրիտեյնի պատկերները, հիշում էր լայն ձյուղավորված շագանակենիները պարտեզում, ուրախաձայն խրխիջները ձիերի, վորոնք դուրս էին վազում դարձնոցից դեպի կանաչ ու ընդարձակ դաշտավայրը: Այդ բոպներին նա իրեն զգում էր բոլորովին փոքր, այնպես, ինչպես յեղել է նա Լիտտլ-Բրիտեյնում: Նա նորից փափագում էր, ինչպես անցած գնացած որերում, գնալ և անհոգ պառկել անտառի թարմ կանաչի վրա, նայել բարձրաբերձ ծառերին, վորոնց կատարները բարձրանում էին դեպի վեր, դեպի կապույտ յերկինքը:

Ամերիկացիները պատմում էին, վոր հայրենիքում շտապ կերպով կառուցում են նավաշինարաններ և գործարաններ: «Աշխատանք,—ասում էին նրանք,—ինչքան ուղես կա: Դուք, Ֆուլտոն, հայտնի ինժեներ եք: Հրաժարվեցեք շոգենավ կառուցելու ձեր ցնորքներից, աշխատեցեք ինչպես հարյուրավոր ուրիշ մեքենագետներն ու ինժեներները, և փող վաստակեցեք»:

Բայց վորքան և մեծ էր Ֆուլտոնի մեջ հայրենիք վերադառնալու ձգտումը, նրա հայրենակիցների առաջարկները չէին հրապուրում նրան: Նա ձգտում էր մի մեծ նպատակի՝ հաղթահարել ջրային տարածութիւնները, և նա պիտի հասնի այդ նպատակին, ինչ գնով էլ վոր լինի:

Բայց անցան որեր ու ամիսներ և դրութիւնը չփոխվեց: Հուսահատութիւնը նորից համակեց Ֆուլտոնին և նա վորոշեց վերադառնալ հայրենիք: Յեւ նա շուտով կուղեւորվեր, յեթե բախտի բերմամբ չհանդիպեր Լիվինգստոնն ազգանունով մի հիտնալի մարդու:

Լիվինգստոնն այդ ժամանակ նշանակված էր Միացյալ Նահանգների դեսպան Ֆրանսիայում: Նա սիրահար էր մեքենագի-

տուեթյան և ականավոր գործիչ եր Միացյալ Նահանգների ար-
դյունաբերութեան մեջ: Իր հայրենակից Ռամզեյի ու Ֆիչի պես
նա ել միջանի տարի առաջ զբաղվելիս և յեղել գոլորշին նա-
վարկութեան համար կիրառելու խնդրով: 1797 թվին նա գոլոր-
շիով շարժվող մի նավ և իջեցրել Հուզսոն գետը: Պետք և ասել,
վոր նավի կառուցողը նա չի յեղել, այլ Փրանսիացի ինժեներ
Բրյունելը, Լիվինգստոնը միայն կառուցման ծախսերն եր հոգա-
ցել: Թեպետ այդ նավը դեռևս պիտանի չեր գործնական ոգտա-
գործման համար, բայց այդ առաջին փորձիկ հաջողութունը
այնքան եր հուսադրել Լիվինգստոնին, վոր նա գիմել եր Նյու-
Յորք նահանգի կառավարութեանը ու խնդրել վոր իրեն բացա-
ռիկ իրավունք տրվի շոգենավեր կառուցելու և ուղևոր ու ապ-
րանք տեղափոխելու Նյու-Յորք նահանգի բոլոր ջրուղիներով:
Նահանգի կառավարութեանը համաձայնել եր Լիվինգստոնի առա-
ջարկին, սակայն այն պայմանով միայն, վոր Լիվինգստոնը մի
տարվա ընթացքում այնպիսի մի շոգենավ կառուցի, վորը մի
ժամում չորս ու կես կիլոմետր արագութուն ունենա: Այդ աշխա-
տանքի համար Լիվինգստոնը հրավիրել եր շատ հմուտ ինժեներ
Ստիվենսոնին: Սակայն տարին անցել եր և Լիվինգստոնին չեր
հաջողվել նավը կառուցել:

Իսկ այժմ Լիվինգստոնը յեկել եր Փարիզ վորպես Միացյալ
Նահանգների դեսպան, և այստեղ դեսպանատանը առաջին ան-
գամ յերկու ամբերկացիներ՝ Լիվինգստոնն ու Ֆուլտոնը ծանո-
թանում են միմյանց հետ, յերկուսն ել համակված լինելով շոգե-
նավ հնարելու միևնույն գաղափարով:

—Յես հաստատ վճռել եմ հայրենիք վերադառնալ, — ասաց
Ֆուլտոնը, — իր կրած բոլոր տառապանքները Լիվինգստոնին նկա-
րագրելուց հետո: — Շոգենավի հարցը դժվար թե այժմ լուծվի:
Յերևում ե, վոր մարդիկ դեռ այն աստիճանին չեն հասել, վոր
ըմբռնեն իրենց սեփական ոգուտը:

— Ի դուր եք այդպես խոսում, Ֆուլտոն, — պատասխանեց Լի-
վինգստոնը, — յես ձեր տեղը լինելի, ամենևին չեյի վհատվի: Չի
վոր յես ել անհաջողութուն ունեցա Հուզսոն գետի վրա իմ
փորձը կատարելիս, բայց յես յերբեք չեմ դադարի պայքարելուց:
Դեհ, մի լավ նայեք ինձ, միթե յես նման եմ պարտվածի: Հենց
դուք ել նայեցեք հայելուն, միթե նման եք դուք պարտվածի: —
Լիվինգստոնն ուրախ ծիծաղեց: Մի հուսահատվեք այլևս: Դուք
յերեսունվեց տարեկան եք, դեռ ջահել տղա յեք, Ֆուլտոն:

Ձեզ պես ուսեր ու վիզ ունեցողը հարյուր յերեսունվեց տարի
կապրի: Յեվ վոչ մի որ պակաս, — ավելացրեց նա լրջորեն, մի
քիչ մտածելուց հետո:

— Իմ տարիքն իսկապես այնքան ել շատ չե, պատասխանեց
Ֆուլտոնը, — բայց փողս ավելի քիչ ե:

— Փողը յերկրորդական բան ե, — ասաց Լիվինգստոնը: —
Այժմ դուք փող չունեք, իսկ մի ըստեղից կունենաք: Դուք ու-
նեք գիտութուն և աշխատելու ցանկութուն: Այդպիսի հատ-
կութուններ ունենալով դուք շատ բան կարող եք անել:

— Այդ բոլորը ճիշտ ե պարոն, բայց ինչպես կարող եմ շո-
գենավ կառուցել, յերբ փող չունեմ նույնիսկ մի հին մակույկ գնե-
լու համար:

— Ահա թե ինչ Ֆուլտոն, դուք կարող եք և կամենում եք
աշխատել, բայց փող չունեք, վոր շոգենավ կառուցեք: Յես գրամ
ունեմ, բայց չունեմ վոչ ձեր գիտութունը, վոչ ել ձեր փորձա-
ռութունը: Յեկեք դաշինք կնքենք: Յես կտամ անհրաժեշտ մի-
ջոցները, կոգնեմ վորքան կարող եմ, իսկ դուք կտաք ձեր գի-
տութունը: Հաջողութունը կբաժանենք կիսովի: Համաձայն եք:

Ֆուլտոնը կանգնել եր շմաժ, չհավատարով իր սեփական
ականջներին: Միթե գտնվեց մի մարդ, վոր պատրաստ ե փող
տալ իրեն շոգենավ կառուցելու համար:

— Ի հարկե համաձայն եմ, պարոն, — բացականչեց նա վեր-
ջապես: — Դուք հենց այն մարդն եք, վորին յես յերկար և ապար-
դյուն փնտրում եյի: Ուրախութեամբ կնվիրեմ յես իմ բոլոր ուժերն
ու գիտութունը, վորպեսզի ձեզ հետ միասին շոգենավ կառու-
ցենք:

Լիվինգստոնն ու Ֆուլտոնը սեղմեցին միմյանց ձեռքը և դա-
շինքը նրանց միջև կնքված եր արդեն:

Մի բան եր մնում այժմ՝ աշխատել և աշխատել:

Սակայն կյանքը Փարիզում աղվալի չեր և անհանդիստ:
Փրանսիան համակված եր պատերազմական մոլուցքով: Փողոցնե-
րով անդադար անցնում եյին զորքեր, յերգելով ռազմական յեր-
գեր, մի զորահանդեսին հաջորդում եր մյուսը: Լիվինգստոնն ու
Ֆուլտոնը վճռեցին հեռանալ Փարիզից և գնալ մի խուլ անկյուն,
վորտեղ նրանց ականջին չհասնեն վոչ զինվորների ռազմական
յերգերը, վոչ մնձանի վ կողքերի դղրդյունը, վոչ բոկոտն մանուկ-
ների կանչը, վոչ ել ձաղկեվածառ սպիտակատամ կանանց քլը-
քիջը:

Նրանք բնակություն հաստատեցին Պլոմբյերին մոտ մի հեռու կած տեղում Ոգրոն գետակի ափին և մեծ յեռանդով սկսեցին աշխատել:

Դեռ ևս մի քանի տարի առաջ Ֆուլտոնը յեկել էր այն յեղրակացության, վոր լավագույն մեխանիզմը շոգեշարժ նավի համար թիակավոր ծայրափակ շղթան է, վոր փոխարինում է թե՛ ճակները: Այդպիսի մի շղթա սկսեց շինել այժմ Ֆուլտոնը, զինված լինելով բազմազան գիտություններով, վոր նա ձեռք էր բերել յոթը տարի Բաուրուի տանն ապրած ժամանակ:

Բայց աշխատանքների ամենայնուհեմ ժամանակ 1802 թվին նա լուր ստացավ, վոր Լիոն քաղաքում Դեբլան անունով մի մեքենագետ փորձ է արել, գործադրելով նույնանման մեխանիզմ, բայց այդ մեխանիզմը բոլորովին անպետք է դուրս յեկել: Նրանք ստիպված յեղան դադարեցնել իսկած աշխատանքները:


Ֆուլտոնը վճռեց այժմ թիակավոր շղթան փոխարինել թիակավոր անիվներով, վոր մի ժամանակ նա առաջարկել էր Կոմս Ստենգուպին: Յերկար ու բարակ խորհրդածություններից հետո յերկու բարեկամները վճռեցին հենց այդ ձևով էլ կառուցել մի մեծ շոգեշարժ նավ:

15. ԱՌԱՋԻՆ ՀԱՋՈՂՈՒՅՈՒՆԸ

Այս անգամ Ֆուլտոնը ճշգրիտ կերպով հաշվեց այն ուշժը, վորը պետք է ունենա շոգեմեքենան, վորպեսզի կարողանա շարժել նավը: Բայց նորից անհաջողության հանդիպեց: Սենա գետի վրա փորձարկելու համար 1803 թվին կառուցված նավակը չափազանց փոքր ու թեթև դուրս յեկավ մեծ ու ծանր շոգեմեքենայի համար: Փորձարկության հենց սկզբին անակնկալ փոթորիկ բարձրացավ և նավակը ձեղքվեց ու ջրասույզ յեղավ:

Ֆուլտոնն ու Լիվինգստոնը անտրտունջ տարան այս յերկրորդ անհաջողությունը և շարունակեցին իրենց աշխատանքը նույն վոգեորությամբ ու յեռանդով: Յեվ այդ հասկանալի յե՛ Ֆուլտոնը անսահմանորեն հավատում էր իր գաղափարի ճշմարտությանը, այսինքն շոգենավ ստեղծելու հնարավորությանը, իսկ Լիվինգստոնը հավատ ուներ դեպի Ֆուլտոնը և խորտակա համոզված էր, վոր միայն այդ մարդը կարող կլինի լուծելու շոգու ուշժը նավարկության համար կիրառելու խնդիրը: Անհաջողությունն ավելի մոտեցրեց յերկու բարեկամներին, ավելի ամուր կոփեց նրանց կամքը պայքարի համար:

Նախևառաջ պետք էր գետի հատակից բարձրացնել սուզված մեքենան: Վորպեսզի մեքենան վեր բարձրացնելու գործն արագացնի և մեքենան չփչանա, Ֆուլտոնն ինքն անձամբ էր դեկավարում աշխատանքները և ժամերով մինչև գոտին մնում էր ջրի մեջ կանգնած: Յերբ մեքենան վերջապես հանված էր ջրի տակից, յերկու բարեկամները ձեռնամուխ յեղան մի նոր նավի կա-



ռուցման: Այդ նավը՝ պիտի ունենար 32 մետր յերկարություն, 21½ մետր լայնություն և շատ ամուր պիտի լիներ կառուցված:

1803 թվի ոգոստոսի 9-ին Փարիզում նավը իջեցրին Սենա գետը: Հազարավոր հետաքրքրվող փարիզեցիներ աշնանային այդ տաք օրը հավաքվել էին գետի ափին: Հանդիսատեսների թվում կային ականավոր գիտնականներ, Փարիզի գիտությունների ակա-

դեմիայի անդամները, վորոնք յեկել էյին տեսնելու համառ ամե-
րիկացի Ֆուլտոնի փորձարկումը:

Զարմացած Փարիզեցիները աչքի առաջ բացվեց մի արտա-
սովոր տեսարան: Այդ տարրինակ նախ առանց առաջատի ու
թիերի, փնչացնելով և քուլա-քուլա սևագույն ծուխ ժայթքելով,
հանկարծ բաժանվեց նավամատուցից և լողաց հոսանքն ի վեր:

Ափից լավող զարմանքի ու հիացմունքի ձայները ուղեկցում
էյին հեռացող նավին:

Ֆուլտոնի նավը ժամ ու կես լողաց գետի վրա, հոսանքն
ի վեր ընթանալով մի ժամում չորս կիլոմետր, իսկ հոսանքն
ի վար՝ հինգ կիլոմետր:

Այս փայլուն փորձից քաջալերված Ֆուլտոնն ու Լիվինգ-
ստոնը գիմեցին Ֆրանսիական կառավարութեանը և խնդրեցին
միջոցներ տալ իրենց շոգեշարժ նավեր կառուցելու համար: Սա-
կայն Նապոլեոնն այս անգամ ել ամենավճռական կերպով մերժեց
Ֆուլտոնի և Լիվինգստոնի առաջարկը, անվանելով նրանց դա-
տարկ ցնորամիտներ:

1803 թվի ոգոստոսի 9-ին միջանի հաղար հանդիսատես-
ներ տեսան, թե ինչպես Ֆուլտոնի շոգենավը լողում էր գետի
վրա շոգու ուժով: Փարիզի գիտութեանների ակադեմիայի ան-
դամ գիտնականներն իրենց աչքով տեսան ու համոզվեցին, վոր
Ֆուլտոնի գաղափարն իրագործված է, և այդ մասին նրանք
հիացմունքով լի հոգվածներ էյին գրում ժուռնալներում: Բայց
և այնպես վոչ Նապոլեոնը և վոչ էլ Ֆրանսիացի արդյունաբե-
րողները հնարավոր չհամարեցին Ռոբերտ Ֆուլտոնին միջոցներ
տալ նրա մեծ գյուտը կենսագործելու համար:

Ֆուլտոնի համար պարզ ու հասկանալի դարձավ, վոր Ֆրան-
սիայում, ինչպես և դրանից առաջ Անգլիայում, այլևս վոչինչ
չունի անելու, և նա վճռեց վերադառնալ հայրենիք, հույս ունե-
նալով, վոր այնտեղ կկարողանա վերջապես իրագործել իր ամ-
բողջ կյանքի նպատակը:

16. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԾՈՎԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՈՒՄ

«Յերազկոտ», «ցնորամիտ» խոսքերը դեռ յերկար հնչում
էյին Ռոբերտ Ֆուլտոնի ականջում: Միաժամանակ նա հիշում էր
արևի տակ շողշողացող Սենա գետը 1803 թվի ոգոստոսի 9-ի
այն նշանավոր օրը, յերբ հազարավոր բաղմութեան աչքի առաջ

իր կառուցած նավը կարծես մի ինչ-վոր գերբնական ուժով ժամ
ու կես շարունակ լողում էր գետի յերեսին հոսանքին հակառակ
և հոսանքով:

Նա տեսնում էր, ինչպես իր նավի թիակավոր անագին
անիվները փրփրացնում էյին ջուրը, ինչպես նավի քիթը ձեղ-
քում էր Սենա գետի խաղաղ ջրերը: Ջրի մեղմ ծածանումը հաս-
նում էր ափին և թեթևակի շարժում ափին կապված ձկնորսա-
կան ծանր նավակներն ու փոքրիկ մակույկները: Նավը դեռ շատ
հեռու յեր կատարյալ լինելուց, նա շարժվում էր մեծ աղմուկով
ու դղրդոցով, անագին քանակութեամբ սև ծուխը դուրս էր ժայթ-
քում նրա մեծ ու անձոռնի ծխնելույզից, բայց այդ աղմուկն ու
դղրդոցը միանում էյին հանդիսատեսների հիացմունքի աղաղակ-
ների հետ և հնչում էյին Ֆուլտոնի ականջին վորպես ամենա-
սքանչելի մի յերաժշտութեան:

Միթե այդ բոլորը բավական չէր, վոր հավատային Ֆուլ-
տոնին և ոժանդակութեան ցույց տային նրան, վորպեսզի շարու-
նակի իր աշխատանքը:

Ծանր էր Ֆուլտոնի և Լիվինգստոնի համար այս բոլորը,
բայց նրանք պայքարի և անհաջողութեանների մեջ կոփված
էյին և չէյին վհատվում: Նրանք շատ լավ գիտակցում էյին
իրենց գյուտի արժեքը. ինչ փուլթ, յեթե Ֆրանսիան անվստա-
հությամբ է վերաբերվում, նրանք կդիմեն Ամերիկայի Միացյալ
Նահանգների կառավարութեանը: Հույս կա, վոր այնտեղ ավելի
լավ կվերաբերվեն, քան ոտար յերկրներում:

Յե՛վ իրոք, Նյու-Յորք նահանգի կառավարութեանը, վորի
հետ միջանի տարի առաջ բանակցութեաններ էր վարել Ֆուլ-
տոնի անհաջողակ նախորդ Ռամզեյը, շատ լավ վերաբերմունք
էր ցույց տվել յերկու գյուտարարներին: Ֆուլտոնին ու Լիվինգ-
ստոնին Հուդսոն գետի վրա քսան տարի շոգենավ բանեցնելու
արտոնութեան տրվեց: Այդ նշանակում էր, վոր քսան տարի շա-
րունակ միայն Ֆուլտոնն ու Լիվինգստոնն իրավունք ունէյին շո-
գենավ իջեցնել Հուդսոն գետի վրա և շոգենավային հաղորդակ-
ցութեան կազմակերպել:

Բայց միաժամանակ Նյու-Յորք նահանգի կառավարութեան-
ը պայման դրեց, վոր նրանք յերկու տարվա ընթացքում մի
այնպիսի շոգենավ կառուցեն, վորը մի ժամում վեց կիլոմետր
արագութեան ունենա: Ֆուլտոնն ու Լիվինգստոնը լավ մտածե-
լուց հետո համաձայնեցին: Նրանք այժմ հաստատ գիտեյին, վոր
շոգենավի կառուցման գործում վճռական նշանակութեան ունի

շոգեմեքենայի վորակը Հենց այդ պատճառով ել նրանք վճռեցին շոգեմեքենայի պատվերը վոչ մի ուրիշ մարդու չտալ, բացի մեծահամբավ Ջեմս Ուատտից:

Ջեմս Ուատտը, ինչպես և Ֆուլտոնը, նույնպես աշխատում էր ընկերովի Բոյլտոն անունով մի արդյունաբերողի հետ, վորը սեփական գործարան ուներ: Հենց այդ գործարանումն էլ Ֆուլտոնն ու Լիվինգստոնը վճռեցին պատրաստել տալ առանձնահատուկ կառուցվածքի մեքենա, վորը նրանց կարծիքով պիտի լինեն ամենահարմարը իրենց կառուցելիք շոգենավի համար: Դա լուրջ գործ էր, այդ պատճառով ել բարեկամները վճռեցին գնալ Անգլիա, վորպեսզի անձամբ հսկեն մեքենայի կառուցմանը:

Այդ ժամանակ Անգլիայում մի դեպք պատահեց, վորը վորոշ հետևանքներ ունեցավ Ֆուլտոնի համար: Լորդ Ստենզոպը, այն անձնավորութունը, վորի գյուտի անհաջողության մասին մի ժամանակ գուշակել էր Ֆուլտոնը, մի կրակոտ ճառ արտասանեց անգլիական պարլամենտում:

—Անգլիական նավատորմին վտանգ է սպառնում, ասում էր Ստենզոպը,—իսկ կառավարութունը վոչ մի միջոց ձեռք չի առնում հայրենիքի պաշտպանության համար: Հայտնի չի, վոր ամերիկացի Ռոբերտ Ֆուլտոնը սուզանավ է հնարել: Յեթե վորևէ մի յերկիր ոգտվի Ֆուլտոնի հնարած սուզանավով և գործադրի անգլիական նավատորմի դեմ, այն ժամանակ Անգլիայի փառք ու պարծանքը հանդիսացող հզոր նավատորմը լուրջ վտանգի կենթարկվի: Յես գտնում եմ, վոր անգլիական կառավարութունը պարտավոր է գնել Ֆուլտոնից նրա սուզանավի նախագիծը:

Լոնդոն հասնելուն պես Ֆուլտոնն առաջարկ ստացավ անցնել անգլիական ծովակալութունը:

Ծովակալության ընդունարանի պատերին կախված էյին ծանր ու վոսկեգոծ շրջանակների մեջ զրված նկարներ ռազմանավերի, վորոնք քամուց ուռած առագաստների ոգնությամբ սլանում էյին մրրկածուկ ալիքների միջով: Ֆուլտոնը չէր կարողանում առանց ժպիտի նայել հողմի քմահաճույքին յենթակա այդ կարծեցյալ ու խաբուսիկ հզորության վրա: Նա արդեն հաստատ գիտեր, վոր առագաստավոր նավի որերը հաշված են:

Դռան մոտ յերևաց սպասավորը և Ֆուլտոնին խնդրեց մտնել ծովակալի առանձնասենյակը: Ֆուլտոնը ներս մտավ մի ընդարձակ սենյակ, վորտեղ շարված կային սաղմանավերի մոդել-

ներ, փաթեթներ ու գծանկարներ: Ծովակալը, վոր մի բարձրահասակ, յերեսը սափրած ու ալեհեր մարդ էր, Ֆուլտոնին առաջարկեց նստել:

—Նորին մեծության կառավարութունը, պարոն Ֆուլտոն, կամենում է գնել ձեր գյուտի, ձեր սուզանավի նախագիծը և առաջարկում է ձեզ այդ նախագծի համար տասնհինգ հազար դոլլար:—Այս ասելուց հետո ծովակալը մի վայրկյան լռեց ու իր բարակ մատներով սկսեց խփել սեղանին:

—Տասնհինգ հազար դոլլար,—հարցրեց Ֆուլտոնը և սիրտը հրճվանքից բաբախեց: Այժմ նա վերջապես կկարողանա ի կատար ածել իր մտադրութունը:

Ծովակալը գլխի շարժումով հաստատեց իր ասածը:

—Բայց,—ավելացրեց նա դանդաղ ու ծանրաբար կերպով,—նորին մեծության կառավարութունը մի պայման է գնում:

—Այսինքն:

—Նորին մեծության կառավարութունը պահանջում է,—ասաց ծովակալը,—վոր դուք ուրիշ յերկրներում ձեր սուզանավը ցույց տալու վոչ մի փորձ չանեք:

«Այդ դեռ այնքան էլ սարսափալի չի», ինքն իրեն մտածեց Ֆուլտոնը և ասաց՝

—Համաձայն եմ:

Ծովակալը նորից մատները խփեց սեղանին և ծոր տալով ասաց՝

—Բայց... Նորին մեծության կառավարութունը մի պայման էլ է գնում՝ վոր նա կգնի ձեր նախագիծը, բայց ինքը նույնպես չի ոգտվի այդ նախագծից:

Ֆուլտոնը ցնցվեց և հեռ-հեռ գնաց: Չայրույթից նրա շրթները դողացին: Ուրեմն ծովակալն առաջարկում է իրեն տասնհինգ հազար դոլլար սուզանավի իր նախագիծը բոլորովին վոչնչացնելու իրավունքի համար:

—Ի՞նչպես էք համարձակվում... —չայրույթով գոչեց Ֆուլտոնը:

Ծովակալը թոթվեց ուսերը: Տասնհինգ հազար դոլլարը նա միանգամայն բավարար վարձատրութուն էր համարում սուզանավի նախագիծը վոչնչացնելու համար: Նա չէր կարողանում հասկանալ, վոր Ֆուլտոնին ղեկավարողը վոչ թե փողն էր, այլ գյուտարարի պարծանքը, գյուտարարի, վորը չի կարող սեղծագործել վոչնչացնելու համար:

— Լավ մտածեցեք, պարոն Ֆուլտոն, իմ առաջարկի մասին և մի ուրիշ որ յեկեք ինձ մոտ, — հանդարտ կերպով ասաց ծովակալը, տեղից վեր կենալով: Ֆուլտոնն առանց մի խոսք ասելու դուրս յեկավ առանձնասենյակից:

17. «ԿԼԵՐՄՈՆՏԻ» ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

1806 թվականի վերջին Ֆուլտոնը վերջապես նավի վրա բարձեց Ուատտի պատրաստած մեքենան: Նյու-Յորքի նավահանգրստում նրան դիմավորեց Լիվինգստոնը, վորն իր ընկերոջից մի քիչ առաջ եր վերադարձել հայրենիք:

Առանց ժամանակ կորցնելու բարեկամները ձեռնամուխ յեղան շոգենավի կառուցմանը: Այդ շոգենավը վոչ միայն պիտի ապացուցեր գործողու ուժը նավագնացության համար կիրառելու հնարավորությունը, ինչպես այդ Ֆրանսիայում արվեց, այլ հաջողության դեպքում նա պետք է մշտական յերթեկուցութուն կատարեր Հուլիոսի գետի վրա և ուղևորներ ու ապրանք փոխադրեր:

Վճուխ էր շոգենավի անվանել «Կլերմոնտ»: Այդ շոգենավը համարյա յերկու անգամ ավելի մեծ պիտի լիներ, քան թե 1803 թվին Սենա գետի վրա փորձարկվածը: «Կլերմոնտը» 50 մետր յերկարություն և 5¹/₂ մետր լայնություն պիտի ունենար:

Շոգենավի կառուցման ծախսերը հսկայական եյին: Լիվինգստոնը, վորն իր կարողության մեծ մասն արդեն ծախսել եր, յերկյուղ եր կրում, թե գուցե իր փողը չբավականացնի նավի կառուցումն ավարտելու համար: Սկսեցին մի նոր ընկեր վորոնել, վորն իր վրա վերցնի ծախսերի մի յերրորդ մասը:

Սակայն չափազանց մեծ եր անվստահությունը Ֆուլտոնի ու Լիվինգստոնի գյուտի նկատմամբ: Նույնիսկ գործնական ամերիկացիները չկարողացան գնահատել Ֆուլտոնի հիանալի գյուտի նշանակությունը: Զգուսվեց մեկը, վոր մի գումար տար և մասնակցեր այդ ձեռնարկությանը:

Մի յերեկո լարված աշխատանքից հողնած բարեկամները գնացին Լիվինգստոնի բնակարանը մի փոքր հանգստանալու և մի-մի ծխածորձ ծխելու: Նրանց աշխատանքային կեղտոտ հագուստը, չածիլած ու հողնատանջ դեմքերը վկայում եյին այն ջանքերի մասին, վոր նրանք գործադրում եյին իրենց նպատակն իրագործելու համար:

Ֆուլտոնն առանձնապես չոգնած եր այդ որը: Նա առավո-



տից աշխատել եր նավաշինարանում, հետո միքանի ժամ շրջագայել եր քաղաքում, խոսել ու աշխատել եր համոզել հարուստներին, վոր «Կլերմոնտի» կառուցման ծախսի մի մասը նրանք հողան: Նա նրանց մեծ շահ եր խոստացել այդ գործից, յեռանդազին ապացուցել եր, վոր ամենաուշը աշնանը շոգենավը կանոնավոր յերթեկուցութուն կկատարի Հուլիոսի վրա և մարդիկ ու ապրանքներ կփոխադրի: Սակայն նրան լսել եյին անվստահությամբ ու ժպտալով:

Այժմ իր կրած անհաջողութիւններէն զայրացած Ֆուլտոնը նստած եր Լիվինգստոնի դիմաց, վորը խորասուզված ուսուանասիրում եր ինչ-վոր մի գծանկար:

— Լսեցեք, սիրելի բարեկամ, — ասաց Ֆուլտոնը, — գործներս շատ վատ են, այդ մարդկանցից վոչ մեկը մեզ չի հավատում և չի ցանկանում մեզ ոգնել: Ի՞նչ անենք հիմա:

Լիվինգստոնը լուռ եր և կուսացած նայում եր դժանկարին:

— Յես պատճառ յեղա, վոր դուք անագին ծախսեր անեք, — շարունակեց Ֆուլտոնը, — դուք կորցրել եք համարյա ձեր ամբողջ ունեցվածքը, դուք համարյա քայքայվել եք: «Կլերմոնտի» կառուցման դրամը վերջանալու վրա յե: Ինչ պիտի անենք: Միթե այս անգամ ել մեր ամբողջ աշխատանքը պետք է ջուրն ընկնի, յերբ մենք արդեն բոլորովին մոտեցել ենք մեր նպատակին:

Լիվինգստոնը շարունակում եր լուռ մնալ և փնջացնելով ծխում եր ծխամորճը:

— Վատ է մեր բանը, Լիվինգստոն, — նորից ասաց Ֆուլտոնը, — մենք դարձյալ դեմ ենք առնում անհաջողութեան, և այս անգամ վոչ մի յեղք չկա:

— Յեղք կա, Ֆուլտոն, մի վրդովվեք, — հանգիստ կերպով ասաց Լիվինգստոնը: — Մեր դրութիւնն այնքան ել վատ չե:

— Վերջն է այդ յեղքը, — տարակուսանքով հարցրեց Ֆուլտոնը:

— Նայեցեք ձեր շուրջը, Ֆուլտոն, — հաստատ ձայնով ասաց Լիվինգստոնը, — տեսնում եք իմ տունն ու իմ ունեցվածքը:

— Տեսնում եմ, — լավ չըմբռնելով, թե ինչ է ուզում ասել Լիվինգստոնը, — պատասխանեց Ֆուլտոնը:

— Դե, ահա թե ինչ, Ֆուլտոն: Յես մեծ հավատ ունեմ դեպի ձեզ, և ինչ ել վոր լինի, յես պատրաստ եմ իմ վերջին ունեցվածքը տալ ձեր գաղափարի հաղթանակի համար: Վոչ միայն դրամ, վոր դեռ մի քիչ ունեմ, այլ իմ տունը, իմ ամբողջ գույքը, մի խոսքով այն ամենը, ինչ վոր ունեմ, պատրաստ եմ տալու մեր ընդհանուր գործի հաղթանակի համար: Յես հավատում եմ, վոր հաջողութիւն կունենանք, Ֆուլտոն, և պատրաստ եմ դոհարելու ամեն բան:

Ֆուլտոնը սաստիկ հուզվելուց միանգամից չկարողացավ խոսել:

— Լիվինգստոն, — վերջապես գժվարութեամբ կարողացավ ասել նա, — դուք հիանալի բարեկամ և ուժեղ մարդ եք: Յեթի

ինձ հաջողվի գլուխ բերել մեր գործը, իմացեք, վոր դուք ավելի բան եք արել մեր գործի համար, քան յես: Տվեք ձեր ձեռքը, Լիվինգստոն: Ոգոստոսին «Կլերմոնտը» կլողա Հուզսոն գետի յերեսին: Յերգվում եմ, վոր կլողա:

Ամբողջ ամառվա ընթացքում անխոնջ կերպով աշխատում էին Ֆուլտոնն ու Լիվինգստոնը, վորպեսզի նշանակված ժամկետին «Կլերմոնտի» կառուցումն ավարտված լինի:

Ֆուլտոնը համարյա առանց ուրիշի ոգնութեան հավաքեց շոգեմեքենան, վորը քանդված եր Անգլիայից Ամերիկա տեղափոխելիս: Նա հաստատ համոզված եր, վոր այժմ շոգենավի նախագիծն անթերի յեր: Այժմ պետք եր միայն խնամքով ու ճշտութեամբ կատարել ամեն ինչ:

Անցան շոգ հունիս և հուլիս ամիսները, յեկավ զով ոգոստոսը, աշխատանքներն ավարտվելու վրա էին:

1807 թվի ոգոստոսի 11-ին բարեկամները վճռեցին «Կլերմոնտն» իջեցնել Հուզսոն գետը:

18. «ԿԼԵՄՄՈՆՏԸ» ՇՈՒԴՍՈՆԻ ՎՐԱ

«Կլերմոնտն» իջեցնելու նախորդ գիշերը Ֆուլտոնը շատ անհանգիստ քնեց: Կես գիշերին նա զարթնեց, լույսը վառեց և նայեց ժամացույցին: Ժամի յերկուսն եր: Նա չափազանց հոգնած եր, նա չեր ուզում մտածել վաղվա մասին: «Ինչ ուզում ե, թող լինի», ասաց ինքն իրեն ու վերմակը քաշեց գլխին: Անցնում էին ըրպներ, ժամեր, բայց նրա քունը չեր տանում: Ֆուլտոնը համառորեն աշխատում եր հետ մղել «Կլերմոնտի» հետ կապված մտքերը, բայց նրանք ներխուժում էին նրա գիտակցութեան մեջ:

Տեսնելով, վոր անողուտ է դրա դեմ մաքառելը, նա հարյուրերորդ անգամ սկսեց մտքում ստուգել, թե վորեք սխալ չի արել արդեոք նա իր հաշիվներում: Վոչ, հազար անգամ վոչ, նա վոչ մի սխալ չի արել: Այդ միտքը հանգստացրեց նրան և նա նորից քնեց:

Առավոտյան զգաստացնող լույսը ցրեց նրա գիշերային հուզմունքներն ու յերկյուղը: Բաց-կապույտ յերկնքում հորիզոնի մոտ նա տեսավ ալ-կարմիր արևի ծագումը: Նրան թվաց, վոր արեգակը հաղթութիւն է գուշակում իրեն:

Նա արագ հազնվեց, մի քիչ բան կերպով և շտապեց գետափը:

Դեռ հեռվից Ֆուլտոնը տեսավ հավաքված ահազին բազմութիւն: Տազնապը համակեց նրան, չլինի՞ «Կլերմոնտին» մի բան ե պատահել: Ֆուլտոնը շտապով մոտեցավ առաջին պատահածին, վոր գալիս եր գետափի կողմից: Դա մի գիրուկ ամերիկացի յեր: Ֆուլտոնը բռնեց նրա ձեռքից:

—Ասացեք ինչդրեմ, այդ ի՞նչ բազմութիւն ե հավաքվել գետի ափին:

Ամերիկացին կտակածանքով վտարից գլուխ նայեց նրան:

—Դատարկ բան,—ասաց նա ատամների արանքից,—այդ հիմարները կարծում են, վոր այդ անճոռնի նալը կլողա գետի յերեսին: Հավատում են այդ անխելք Ֆուլտոնին:

Բայց Ֆուլտոնն այլևս չեր լսում նրան: Նա համարյա վաղելով նետովեց դեպի գետափը: «Կլերմոնտը» վախով չեր, կնշանակի ամեն բան լավ ե:

«Կլերմոնտի» վրա ուղևորվելու պատրաստութիւններ եյին տեսնում: Հնոցն արդեն վառված եր և գոլորշին պատրաստ: Կասկածամիտ յանկիները ափին ծիծաղում եյին նավաստիները վրա, վորոնք մեկնելու պատրաստութիւններ եյին տեսնում: Ֆուլտոնը բազմութիւն միջով ձեղքեց անցավ դեպի կամրջակը և բարձրացավ շողենալի տախտակամածի վրա:

Նրա հետևից լավեցին սուլոցներ ու ծաղրական վողջույններ:

—Բարի ճանապարհ, բարձր գնաք, բարձր գաք:

—Շատ հեռու չընաք, ճամբեն կկորցնեք:

—Գնաք բարձր, ծովակալ:

—Պարոն ծովակալ, ճանապարհին մարդ չգցեք նավի տակ: Ֆուլտոնը անհաշիւր այդպիսի բացականչութիւն հետևում եր նոր քրքիջ, ծիծաղ ու ծանակի նոր պառթկում, վորից խրախուսված սրախոսները նորանոր սրախոսութիւններ եյին անում:

Այս ծաղր ու ծանակի մոլեգին հեղեղից ճնշված Ֆուլտոնը լուռ կանգնած եր տախտակամածի վրա: Ապա, կարծես սթափվելով ուշաթափութիւնից, նա ձեռքով նշան արեց մեքենան բանի գցել: Նույն բողբոջին «Կլերմոնտի» թիակավոր ահազին անիվները արագ պտտվեցին և նավի յերկու կողմում ձյունի պես սպիտակ փրփուր գոյացավ: Արձակվեցին նալն ափին կապող թուկերը:

Յեւ հանկարծ անճոռնի ու անշարժ «Կլերմոնտը» իր ամբողջ իրանով ցնցվեց ու հանդարտ սահելով հեռացավ նավամատուցից և լողաց գետի հոսանքին հակառակ:

Այդ արտասովոր տեսարանից ապշած բազմութիւնը, վոր խմբված եր ափում, մի վայրկյան քարացավ, իսկ հետո կարծես մոռանալով իր ծաղրն ու ծանակը, վոր մի բողբոջ առաջ այնքան շոտարեց թափում եր Ֆուլտոնի գլխին, այդ նույն բազմութիւնն սկսեց հիացմունքով և բուռն խանդավառութեամբ վողջունել իր մեծ գյուտարարին ու նրա զավակ «Կլերմոնտին»:

—Ուռն Ֆուլտոնին:

—Կեցցե՛ք Ամերիկան:

—Բարի ճանապարհ «Կլերմոնտին»:

Հուզմունի գետափը դեռ յերբեք չեր լսել այդպիսի հաղթական աղաղակներ, և քանի արագ եր ընթանում շողենալը, այնքան մոլեգին եր դառնում բազմութիւն հիացմունքը:

Բայց Ֆուլտոնին զբաղեցնողն այժմ դատարկ հիացմունքը չեր: Նա ուշադրութեամբ ահանջ եր դնում շողենալի աշխատանքին: Նա մոտենում եր «Կլերմոնտի» կողերին ու դիտում անիվները: Նա կտանում նայում եր նավի հետևի մասից և դիտում, թե ինչպես ե նալը ձեղքում ջուրը և շատ վորոշ հետք թողնում իր հետևից:

Նավամատուցը հեռանում եր տեսողութիւնից և ավելի ու ավելի եր փոքրանում, բազմութիւն մեջ այլևս չեր կարելի նըշմարել առանձին մարդկանց:

Այնուհետև Ֆուլտոնն սկսեց փորձել նավի ղեկավարումը: Նա սեղմում եր նավի արագութիւնն ավելացնող լծակը, և «Կլերմոնտը» խթանած ձիու պես առաջ եր ընթանում:

Անիվներն ավելի արագ եյին պտտվում և նրանց առաջացրած փրփուրը ցայտում եր մինչև տախտակամածը: Ֆուլտոնը սեղմեց մի այլ լծակ, և «Կլերմոնտը» նույնքան հնազանդութեամբ դանդաղեցրեց իր ընթացքը: Ֆուլտոնը միջանի անգամ կրկնեց այդ փորձը և ամեն անգամ «Կլերմոնտը» հնազանդում եր նրան:

Մնում եր միայն «Կլերմոնտը» դարձնելու փորձը կատարել: Ֆուլտոնը դեկի անիվը դարձրեց դեպի աջ, և «Կլերմոնտը» դյուրին կերպով սահելով թեքվեց դեպի աջ: Ֆուլտոնն անիվը դարձրեց ինչպես առաջ եր, և «Կլերմոնտը» նորից լողաց ուղիղ գծով: Ֆուլտոնը հաղիվ եր զսպում իրեն, վոր ուրախութիւնից չաղաղակի:

Այդպիսի ուրախութիւնը, այդպիսի անշահախնդի ստեղծագործական ուրախութիւնը հաղթանակի բողբոջներին հատուկ

ե միայն այն մարդկանց, վորոնք յերկար ժամանակ աշխատել ու տանջվել են իրենց կյանքի բարձր նպատակի իրագործման համար:

Այսպես ուրեմն, հաղթութունը կատարյալ եր: «Կլերմոնտն» արագ լողում եր գետի յերեսին և հնազանդությամբ արագացնում ու դանդաղեցնում եր իր ընթացքը, նույն հնազանդությամբ նա դառնում եր դեպի աջ ու դեպի ձախ: Ճիշտ ե, Ֆուլտոնի սրատես աչքը նայելուն պես նկատեց միջանի թերություններ մեքենայի աշխատանքի մեջ, բայց դրանք բոլորը հեշտությամբ ուղղելի բաներ էին:

Մի շաբաթից հետո շոգենավը բոլորովին պարաստ կլինի մշտական յերթեկություններ կատարելու Հուգոն գետի վրա:

19. ԱՌԱՋԻՆ ՈՒՂԵՎՈՐԸ

Այդ նշանավոր դեպքից միջանի որ հետո Նյու-Յորքի թերթերում յերևաց այսպիսի մի տարրերնակ հայտարարություն.

**ՇՈԳԵՆԱՎԱՅԻՆ ՅԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ ՆՅՈՒ-ՅՈՐԲ ՅԵՎ
ԱԼԲԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ**

Հայտարարվում ե հորգելի բողոքացիներին, վոր 1807 թվի սեպտեմբերի 25-ից սկսած «Կլերմոնտ» շոգենավը կանգնավոր յերթեկալայուններ կկատարի Նյու-Յորք և Ալբանի բողոքացիներ միջև: Շոգենավը կմեկնի հիշյալ բողոքացից չորս քր մի անգամ անավասները և կմամանի մյուս բողոքացիները անհեղաբար յերթեկայուն: Ուղեգրերը միջև Ալբանի 6 դրոյար ե:

Ռոբերտ Ֆուլտոն և Լիվինգստոն:

Հասավ նշանակված որը և դարձյալ, ինչպես և ոգոստոսի 11 ի անմոռանալի որը, նյու-յորքցիների անագին բազմություն եր հավաքվել Հուգոնի ափին: Բայց այժմ նրանց այստեղ եր գրավել մի այլ տեսարան: Ֆուլտոնը հաղթող դուրս լիկավ: Հազարավոր բազմության աչքի առաջ «Կլերմոնտ» շոգենավը ջուրը ձեղքելով հեռացավ նավամատուցից և անհայտացավ առավոտյան կապուտակ հեռավորության մեջ: Վոչ մի կասկած չկար այլևս, վոր Ֆուլտոնը հաղթող դուրս լիկավ: Այժմ նյու-յորքցիները փափազում էին տեսնել այն խիզախ մարդուն, վորը սիրտ կանի այդ «սատանայական մեքենայի» վրա նստած Նյու-Յորքից Ալ-

բանի մեկնել: Բայց այս անգամ ել նրանց սպասելիքները չիրականացան, այդպիսի խիզախ մարդ չգտնվեց: Թվում եր, թե հենց այն հանգամանքը, վոր թե Ֆուլտոնը և թե նավի անձնակազմը վողջ և առողջ վերադարձել էին առաջին փորձնական նավարկումից, կարող եր ծառայել վորպես բավարար յերաշխիք «Կլերմոնտով» ճանապարհորդելու անվտանգության համար: Բայց այդպես չեղավ, վոչ մի մարդ սիրտ չարեց իր կյանքը վստահելու այն նավին, վոր շարժվում եր շոգենավների ուժով:

Այն հրճվածքը, վոր բազմությունն զգաց, յերբ «Կլերմոնտը» առաջին անգամ հեռանում եր նավամատուցից, մոռացվել եր, և մարդիկ նորից սկսել էին ծիծաղել Ֆուլտոնի վրա և ծաղրի առարկա դարձնել նրա շոգենավը:

Մտում եր միջանի բոլոր միջև «Կլերմոնտի» առաջին մարդատար ուղևորությունը: Յեկավ և մեկնելու բողոք, բայց վոչ մի ուղևոր չկար: Հազարավոր գատարկապորտների ամբոխից վոչ մի հոգի սիրտ չարեց վոտքը գնել «Կլերմոնտի» կամըջակի վրա գեթ հետաքրքրությունից դրդված:

Նավաստիները դժկամությամբ վերցրին կամըջակները, «Կլերմոնտը» գիլ սուլեց ու հեռացավ ափից: Շոգենավը իր առաջին ուղևորությունն սկսեց առանց ուղևորների:

Ֆուլտոնը կանգնած եր տախտակամածի վրա: Շոգենավը գնում եր ջրի վրայով և նրա յերկու կողմից կարծես հակառակ կողմն էին սլանում կանաչապատ դաշտերը, վորոնց մեջ տեղտեղ նշմարվում էին աշնան դեղնադուրս բծեր. արդեն սեպտեմբեր ամիսն եր: Ֆուլտոնը տեսնում եր դարմանքից ապշած ագարակատերերի, վորոնք առաջին անգամն էին տեսնում այդ խելքից հեռու նավը, վոր առանց առագաստի ու թիբրի ընթանում եր Հուգոնի վրայով: Նա փրփրացնում եր գետի ջուրն իր անձուռնի անիվներով և մարդու ականջ եր խլացնում իր շոգենավների հանած աղմուկով: Մոտիապաշտ ագարակատերերին թվում եր, թե գետի վրա ընթացողը մի դժոխային տապան ե, վորը շարժվում ե կախարակախան ուժով:

Ճիշտ նշանակված ժամին, առանց վորևե կոտրվածքի և պատահարների «Կլերմոնտը» հասավ Ալբանի:

Ալբանիից մեկնելու ժամին կրկնվեց նույն տեսարանը, ինչ վոր տեղի յեր ունեցել Նյու-Յորքում: Մարդկանց բազմությունը գետափին կանգնած՝ աչքերը չռած նայում եր «շոգենավին»: Գուրբըն արդեն պատրաստ եր, սև ծխի քուլաները դուրս էին

Ժայթքում բարձր ծխնելույզից: Նավաստիները բոպե առ բոպե հրամանի ելին սպասում, վոր վերջնեն կամրջակները, իսկ ուղի-վոր չկար ու չկար:

Փուլտոնն անհամբերությունից վտար շարունակ խփում եր նավեզրին ընկած հասա թոկի կապոցին: Վորքան դժվար է լի-նում հաղթահարել անվստահության ու սարսափի պատնեշը, վոր մարդիկ կանգնեցնում են ամեն մի նորմուծության հանդեպ:

Հասավ մեկնելու բոպեն և Փուլտոնը պատրաստ եր արդեն մեկնման նշանը տալու, յերբ մի ինչ-վոր խլրտում նկատեց ամ-բոխի մեջ: Ուղեպարկը մեջքին գցած միջին տարիքի մի մարդ էր արմուկները ոգնությամբ համառ կերպով աշխատում եր առաջ անցնել, ճեղքելով խիտ ամբոխը, վորն այնպես եր պատել նավահանգիստը, ինչպես ճանճերը պատում են մուրաբան: Վեր-ջապես նա կարողացավ հասնել կամրջակին և մտնել նավը:

— Ի՞նչ կհրամայեք, պարոն, — դիմեց նրան Փուլտոնը:

— Այսինքն՝ ինչպես թե ինչ կհրամայեք: Չե՞ վոր դուք հայ-տաբարել եք թերթերում, թե ուղևորներ եք տեղափոխում Ալ-բանիից Նյու-Յորք: Յես իմ աչքովս կարգացել եմ թերթում: Յես ուղևոր եմ, ընդունեցեք դրամը:

Այս խոսքերն ասելիս նա հանեց գրպանից մի ահագին կաշ-վե քսակ և բավականին ժամանակ պրպտելուց հետո հանեց քսակից դրամը և տվեց Փուլտոնին:

Փուլտոնը մեքենայաբար առավ նրանից փողը, հիացմունքով լի աչքերը հառած իր առաջին ուղևորին, առանց կարողանալու մի խոսք արտասանել:

— Վեց դոլլար ե, ինչպես գրված է հայտարարության մեջ, — բարձրաձայն ասաց անծանոթ ուղևորը, — բայց գուցե դա քիչ է:

— Վոչ, վոչ, պարոն, — բացականչեց Փուլտոնը, բռնելով ու պինդ սեղմելով անծանոթի ձեռքը: — Վոչ, թանգադին պարոն, այդ հենց այն գումարն է, վոր նշանակված է հայտարարության մեջ:

— Այն ժամանակ ինչո՞ւ եք փողն այդպես փիփ վրա դրած պահել, կարծես յես ձեզ դրամը լրիվ չեմ տվել, — զժկամությամբ մրթմրթաց անծանոթը:

— Վորովհետև դա իմ առաջին վաստակն է, պարոն, իսկ դուք առաջին մարդն եք, վոր ինձ վաստակեցիք:

Ժպիտը հազիվ նշմարելի չափով բարձրացրեց անծանոթի շրթունքները անկյունները, նրա կապույտ աչքերը փայլեցին:

բարի կրակով: Նա պինդ սեղմեց Փուլտոնի ձեռքն իր ուժեղ ձեռքով:

Նավաստիները կանգնած ելին նրանց կողքին: Նրանք խո-րապես հուզվել էլին, լսելով իրենց նավապետի և «Կլեմմոնտի» առաջին ուղևորի միջև տեղի ունեցող զրույցը: Փուլտոնի հետ միասին նրանք ել շատ ամիսներ մասնակցել էլին այդ առաջին շոգենավի կառուցմանը: Փուլտոնի հետ միասին նրանք կատարել էլին առաջին ուղևորությունը Հուգոսոնի վրայով: Ամեն մի ամե-նափոքրիկ անվակ նրանք են տեղը դրել ու հարմարեցրել, ամեն մի մեխ խփվել է նրանց հմուտ ու փորձված ձեռքով: Նավաս-տիները պարծենում էլին իրենց նավապետով, նշանավոր մեքե-նագետ Ռոբերտ Փուլտոնով, նրանք ել էլին պարծենում «Կլեմ-մոնտով», ինչպես իրենց սիրելի զավակով:

— Այ թե ինչ, պարոն, — ասաց անծանոթին Փուլտոնը, — վոր-պես շնորհակալություն այն վաստակից և հավատի համար, վոր դուք ցույց տվիք դեպի մեր շոգենավը, — «մեր» խոսքն արտասանելիս Փուլտոնը ձեռքով ցույց տվեց նավաստիներին, — յես շատ կցանկանայի ձեզ հետ մի շիշ հին գինի լամել: Բայց յես այժմ այնքան աղքատ եմ, վոր մի շիշ գինու փող ել չունեմ: Հույս ունեմ, վոր մենք դարձյալ կպատահենք և յես կարող կլի-նեմ ձեզ մի Վով հյուրասիրել ի հիշատակ այսորվա մեր հանգիս-տան: Իսկ այժմ, — ասաց նա զառնալով դեպի նավաստիները, — «Կլեմմոնտը» թող մեկնի Նյու-Յորք իր առաջին ուղևորով:

Նորից հրձվեց գետափին խոնված բազմությունը, լավեցին վողջույնի աղաղակներ, նորից ողբ թռան գլխարկները:

Ըստ յերեկութին, առաջին ուղևորի ամենևին հոգը չեք իր մենակությունը: Նա այնպես տեղավորվեց տախտակամածի վրա, վորպես իր սեփական տանը, իր ահագին պարկից հանեց հաց, կարագ, խոզապուլտ, մի շիշ կաթ և սկսեց ուտել: Նա լավ մաք-րազարդեց այդ ամբողջ ուտելիքը, վորը բավական կլիներ լցնելու մի փոքրիկ գյուղական խանութ: Շոգենավը լողում եր հանգիստ, յեղանակը հրաշալի յեր, ուտելիքը շատ, ել ի՞նչ եր հարկավոր մի վողջամիտ և սիրտը հանգիստ մարդու համար, վոր իր գոր-ծերով գնում եր Նյու-Յորք քաղաքը: Յերեկում եր, վոր այդ ար-տաստվոր զրոսանքը շոգենավով շատ դուր եր գալիս առաջին ու-ղևորին:

— Կեցցեք, նավապետ, — ասաց նա, — տեսնելով իրեն մոտե-ցող Փուլտոնին, — շատ լավ ենք գնում, այնպես չե՞:

— Այո, լավ ենք գնում, — ժպտալով ասաց Ֆուլտոնը:

— Պատմեցեք ինձ ձեր շոգենավի մասին, տեսնում եմ՝ դուք շատ եք չարչարվել նրա վրա:

Ֆուլտոնը ուրախութեամբ կատարեց իր առաջին ուղևորի խնդիրը: Նա պատմեց իր կրած տառապանքների մասին, տարավ նրան մեքենայական բաժանմունքը և մինչև անգամ փորձեց բացատրել մեքենայի կառուցվածքը:

— Հա, հասկանում եմ, հասկանում, — ժպտալով ասաց ագարակատերը, — նշանակում և դուրը ձեր ձնշում և մխոցին այնպես, ինչպես ձնշում և թեյամանի կափարիչին, մխոցը պտտեցնում և անիվները, զրանից շոգենավը գնում ե: Տես ե, ինչքան հասարակ բան և յեղեր:

— Դուք թեև մի շարք ողակներ աչքաթող արիք, բայց իսկապես վոր շատ հասարակ բան ե, — համաձայնեց Ֆուլտոնը:

Այս առաջին ուղևորութունից կարճ ժամանակ անցնելուց հետո, յերբ ուղևորներն այնքան էլին շատացել, վոր Ֆուլտոնը նրանց թիվն այլևս չէր հիշում, նա նորից հանդիպեց իր «առաջին ուղևորին», ինչպես նա միշտ անվանում էր նրան, և նրա հետ միասին մի շիշ գինի խմեց: Նրանք շատ մտերմացան և հաճախ ամբողջ ժամերով մտերմաբար զրույց էլին անում:

— Ասացեք, խնդրեմ, Ֆուլտոն, ձեզ ինչն և կապում այդ մարդու հետ, չե՞ վոր նա մի հասարակ, տգետ ագարակատեր ե, — հանդիմանում էլին Ֆուլտոնին նրա բարեկամները՝ բոլորը հայտնի մեքենագետներ ու ինժեներներ:

— Այդ հասարակ ագարակատերը իմ լավ բարեկամն է, — պատասխանում էր Ֆուլտոնը: — Այդ հասարակ ագարակատերը վստահեց ինձ այն ժամանակ, յերբ վոչ վոք ինձ չէր վստահում՝ վոչ կառավարութունը, վոչ հարուստները, վոչ էլ մնացած բոլոր ագարակատերերը:

20. ՖՈՒԼՏՈՆԻ ՄԱՇԸ

Առաջին շոգենավը դանդաղ էր ընթանում գետի վրայով՝ մի ժամում ութ կիլոմետր արագութեամբ, բայց և այնպես «Կլեյմոնտի» արագութունը յերկու կիլոմետրով ավելի յեր, քան նշանակված էր Նյու-Յորք նահանգի կառավարութան հետ կնքված պայմանագրում: Այդ էր պատճառը, վոր շոգենավեր կառուցելու և Հուդսոնի վրա շոգենավեր բանեցնելու իրավունքը՝ ուղևոր ու

ապրանք տեղափոխելու համար միայն Ֆուլտոնին ու Լիվինգստոնին էր պատկանում: «Կլեյմոնտի» առաջին մեկնումից չորս տարի անցնելուց հետո Հուդսոնի վրա արդեն լողում էլին հինգ շոգենավ:

Այն անհաջողութուններն ու ծանր զրկանքները, վորը կրել էր Ֆուլտոնն իր կյանքում, այժմ թվում էլին հեռավոր ու աննշան: Նա իրեն այժմ այնպես էր զգում, ինչպես կզգար մի ճամբորդ, վոր յերկար ու հոգնատանջ թափառումներից հետո հասնում է վերջապես իր հայրենի ոջախը:

Փայտը ուրախ ճարձատում է ոջախում, դուրեկան կերակուրը յեռ է գալիս կաթսայում, բարի մարդիկ վողջուենում են ճամբորդին և հենց նոր կրած զրկանքները նրան թվում են վորպես ծանր, բայց կարճատև յերազ:

Մակայն Ֆուլտոնն այնպիսի մարդ չէր, վոր բավականանար իր տարած առաջին հաղթութեամբ և այնուհետև ձեռները ծալած նստեր ու վոչինչ չաներ իր կառուցած շոգենավն ավելի ևս կատարելագործելու համար: Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարութան պատվերով նա սկսեց կառուցել այն ժամանակվա համար վիթխարի մի նավ «Ֆուլտոն» անունով, վորի յերկարութունը պիտի լիներ 44 մետր և լայնութունը 16½ մետր:

1814 թվին պատերազմ ծագելու վտանգ կար Ամերիկայի Միացյալ Նահանգների և Անգլիայի միջև և «Ֆուլտոնը» պիտի պաշտպաներ Նյու-Յորքի նավահանգիստը: Այդ շոգենավի մեջ պիտի լիներ յերեսուն թնդանոթ, իսկ նավակազմը պիտի բաղկացած լիներ վեց հարյուր հոգուց: Մեր ժամանակներում, յերբ ծովերն ակոսում են դրեդնոտները և գերդրեդնոտները, վորոնց անձնակազմը հավասար է մի փոքր քաղաքի բնակչութան, իսկ թնդանոթները ձեզքում են ամենահաստ զրահները, հասկանալի յե, վոր «Ֆուլտոնը» մի կարևոր ուժ էր կարող համարվել: Բայց այն ժամանակ շոգու ուժով շարժվող առաջին ուղևորական շոգենավը էր մի անխորտակելի ծովային հակա, վոր կարող էր գեմ կանգնել անգլիական հողը, բայց առաջատավոր նավատորմին:

Ֆուլտոնն այդ ժամանակ հիսուն տարեկան էր: Նրա մագերի մեջ ավելի ու ավելի հաճախ էլին յերեվում արծաթափայլ թելեր: Նրա աչքերն առաջվա պես լավ էլին տեսնում և նշարում ամեն մի փոքրիկ բան, բայց ամառվա փայլուն արեգակն այլևս չէր յերևում նրան այն աստիճան շրջապատիչ ու պայծառ, ինչպես առաջ: Գայում էր նա ուղիղ և առանց կորանալու, բայց յեր-

բեմն մի տեսակ ծանրություն եր զգում վտաններում և ցավ՝ դոտկատեղում: Գրիչն առաջվա պես պինդ չեր բռնում ձեռքում: Ծանր աշխատանքի ու կրած անհաջողությունների տարիները զգացնել էյին տալիս իրենց:

Նույնիսկ այժմ, յերբ Ֆուլտոնի հաջողությունը թվում եր հաստատված ընդմիշտ, այնուամենայնիվ անախորժություններն ու ճախորդություններն անպակաս էյին նրանից: Նրան և Լիվինգստոնին հատկացրած Հուդսոնի և մյուս գետերի վրա շոգենավեր բանեցնելու բացառիկ իրավունքը հաճախ խախտվում եր զանազան ճարպիկ մարդկանց կողմից, վորոնք ոգտվում էյին Ֆուլտոնի յերեսնամյա աշխատանքների արդյունքից իրենց համար փող վաստակելու նպատակով: Ինքը Ֆուլտոնը ինչպես անցյալում, նույնպես և այժմ, ամենից քիչ եր հետաքրքրվում վաստակով, բայց շոգենավերի ապորինի կառուցումը միջոցներից զրկում եր մեռած Լիվինգստոնի հարազատներին: Ֆուլտոնը յերբեք չեր մոռանում, թե վորքան ինքը յերախտապարտ ե իր անձնագոհ բաբեկամին, վորն իրենց ընդհանուր գործի հաղթանակի՝ «կլերմոնտի» կառուցման համար չխնայեց իր ամբողջ կարողությունը, նույնիսկ իր բնակարանն ու տնային իրերը:


Ֆուլտոնն ստիպված եր լինում այժմ շրջել ամբողջ յերկրում և դատ սկսել այն մարդկանց դեմ, վորոնք ապորինի կերպով շոգենավեր էյին կառուցում:

Ձմեռային մի ցուրտ ու անարև որ եր, յերբ Ֆուլտոնը պատրաստվում եր այդպիսի մի ուղեվորություն կատարելու:

Իուրսը բուք ու բորան եր, սաստիկ քամին սակավաթիվ անցորդների աչքերը լցնում եր թաց ու կպչուն ձյունով ու քիչ եր մնում նրանց գետին տապալի: Բուքի դեմ մաքառելուց ուժասպառ յեղած թռչուններն ապաստան էյին փնտռում տանիքների ծածկերի տակ:

Պատուհանի մոտ կանգնած Ֆուլտոնը դիտում եր ձյան փաթիլների վայրի պարը: Պատուհանի ապակիները զոգում էյին քամու զարկերից և լալագին զնգում: Իսկ սենյակում տաք եր ու չոր, խոհանոցում ուրախ թշշում էյին տաք կաթսաները ու բարձրանում էյին վոսկեգույն սուրճի գոլորչները: Իժվար գործ եր նրա պես հասակավոր մարդու համար այս ձյուն ձմեռ ժամանակ և այդպիսի բուք ու բորանին ձիով դարուփոսերով լի ճանապարհ դնար:

Ֆուլտոնը մեկ մտածեց հրաժարվել այդ ճամբորդությունից,



բայց յերբ հիշեց, վոր պետք ե գնա պաշտպանելու իր բարեկամ Լիվինգստոնի ընտանիքի շահերը, վճռեց ճամբա ընկնել:

Այդ ճամբորդության ժամանակ նա մրսեց ու հիվանդացավ:

Առաջին որերը թվում եր, թե՛ հիվանդությունը առանձնապես լուրջ բան չեր: Ժամանակ առ ժամանակ Ֆուլտոնը վեր եր կենում մահճակալից ու մոտենում պատուհանին: Իուրսը առաջվա նման մոլեգնում եր բուքը: Յե՛րբ և վերջապես գալու ծերերի համար այնքան հաճելի պայծառ ու տաք ամառը: Միքանի որից

հետո Ֆուլտոնը հանկարծ վատացավ: Նա այլևս չէր կարողանում մահճակալից վեր կենալ:

1815 թվի փետրվարի 15-ին Ֆուլտոնն զգաց իր վախճանի մոտեցումը: Յերեկոյան դեմ նրան թվաց, թե սենյակի անկյունները մթնեկ են, իսկ պատերի ու առաստաղի վրա շարժվում են յերկար ու սև ստվերներ: Ֆուլտոնին թվաց, թե դրանք քամուց շարժվող ծառերի կատարներն են, ինչպես մի ժամանակ շարժվում էին նրանք Լիտալ-Բրիտեյնի անտառում:

Ֆուլտոնի աչքին ամեն բան ավելի ու ավելի յեր մթնում: Ֆուլտոնը զառանցում էր: Նրան թվում էր, թե լսվում են իր կողքին բանող մեքենայի զարկեր, սկզբում շատ բարձր, հետո գնալով ավելի ու ավելի նվազ ու հազիվ լսելի: Ի վերջո զարկերը համարյա անլսելի դարձան և ընդմիջումները նրանց միջև ավելի յերկարատև յեղան:

Ֆուլտոնը հասկացավ, վոր այդպես բարախում է և դադարում է բարախելուց իր սեփական սիրտը:

Նրա հարազատներն ու ազգականները կարծեցին, թե Ֆուլտոնը քնեց և կամացուկ սենյակից դուրս յեկան, վոր չզարթնեցնեն նրան, բայց Ֆուլտոնին այլևս վոչինչ չէր կարող զարթնեցնել:

Նա մեռավ ութ տարի հետո այն ուրից, յերբ «Կլերմոնտը» կատարեց իր առաջին ուղեվորությունը Հուգոնի վրայով: Ամբողջ աշխարհն արդեն գիտեր շոգենավի մեծ դյուտարար Ռոբերտ Ֆուլտոնի անունը: Նյու-Յորք քաղաքը սուգի մեջ մտավ: «Ֆուլտոն 1-ը» վերջին հրաժեշտը տվեց իր ստեղծողին, հանդիսավոր համազարկ տալով յերեսուն թնդանոթներից: Նյու-Յորք նահանգի որենսդրական ժողովն ընդհատեց իր աշխատանքները Ֆուլտոնի թաղման ժամանակ:

Այժմ միայն նա ստացավ ուշացած և նրա համար այլևս վոչ մի արժեք չունեցող գնահատումը նույն այն մարդկանցից, վորոնք յերեկ նրան անվանում էին յերազամուղ ու ցնորամիտ:

Աշխատավոր ժողովրդի զավակ Ֆուլտոնը մեծ ծառայություն մատուցեց մարդկությանը, ընության անեղ ուժերի դեմ նրա մղած պայքարում: «Կլերմոնտի» առաջին ուղեվորությունից հարյուր քսան հինգ տարի անցնելուց հետո Ֆուլտոնի հնարած շոգենավն այնքան է կատարելագործվել, վոր ծովերի ու ովկիանոսների վրայով, փոթորիկների ու մրրիկների միջով մի ժամում քսուս-

սուն կիրմետար արագությամբ լողում են տասնյակ հազարավոր ուղեվորներ վերցնող բազմահարկ հսկաներ:

Հենց ասե՛ք թե «Կլերմոնտի» և ովկիանոսային ժամանակակից մեծագույն շոգենավերի միջև այնպիսի զանազանություն կա, ինչպես փոքրիկ փայտաշեն տնակի և ամերիկյան յերկնահաս շենքերի միջև, — բայց և այնպես, Ռոբերտ Ֆուլտոնի, գոլորշու ուժով շարժվող նավի առաջին հնարողի, անունն ընդմիջտ կապրի մարդկության հիշողության մեջ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
1. Բոբը մտնում և մխտը Գրեբբլի ուսումնարանը	5
2. Տոմի գարբնոցը և մխտը Գրեբբլի նկարը	10
3. Վոսկերչի մոտ	14
4. Դժբախտ պատահար	20
5. Գիշերվա կռիվն արհեստանոցում	25
6. Թուղթ ու ներկերով պանդոկից պանդոկ	29
7. Հանդիպում մեծ մարդու հետ	33
8. Լոնդոնում	38
9. Առաջին քայլերը մեքենագիտության ասպարեզում	43
10. Ֆուլտոնի նախորդները	48
11. Անհաջողություններ Լոնդոնում	53
12. Փարիզում	57
13. Սուզանավ	61
14. Դաշինք Լիվինգստոնի հետ	64
15. Առաջին հաջողությունը	68
16. Անգլիական ծովակալությունում	70
17. «Կլերմոնտի» կառուցումը	74
18. «Կլերմոնտը» Հուգոնի վրա	77
19. Առաջին ուղևորը	80
20. Ֆուլտոնի մահը	84

Քարգմանություն 86. ԹԱՂԻԱՆՈՍՅԱՆԻ
Խմբագիր՝ Մ. ԴԱՎԹՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Լ. ՈՂՍՆՅԱՆ
Սրբագրիչ՝ Խ. ԱՅՎԱԶՅԱՆ
Կոնտրոլ-որբագրիչ՝ ՅԵ. Տ.-ՄԻՆԱՍՅԱՆ

Գրավիտի լիզոր՝ Տ—1683
Հրատ. 4728, պատվեր 90, տիրած 3000
Հանձնված և արտադրության 1939 թ. փետրվարի 13-ին
Ստորագրված և ապագրության 1939 թ. մարտի 15-ին

1369

« Ազգային գրադարան »

NL0139406

ԿՆԵ 1 Բ. 50 Կ.
ՊԵՏՐՆ 50 Կ.

16870

Ա. ՎԱՅՏԵՆԵՐԴ
ՐՕԲԵՐՏ ՓՍԼՒՏՈՆ

Դա. Արմ. ՍՏՐ. Երևան, 1960